

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ  
ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ  
ՄԱՍԻՆ

ԱՐՄԵՆԻ

Նվիրվում է Խաչատուր Աբովյանի  
ծննդյան 135-ամյակին

*Посвящается 135-летию со дня рождения  
Хачатура Абовяна*

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

**СОВРЕМЕННИКИ  
о  
ХАЧАТУРЕ АБОВЯНЕ**

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН 1941

ԱՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՑԻԼԻԱ  
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Արքայան]

Ա

ԱՅՈՒԹՎԱՌ Է 1961 թ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ  
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ  
Մ Ա Ս Ի Ն

4024

A 31497 II




ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1 9 4 1

Տպագրվում է ՍՍՌԴ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ.



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ



Բնագետ և բժիշկ Ֆրիդրիխ Պարբուռ (1791—1841) ծնվել է Կարլսբուէ-  
տում, սովորել է Ռիգայի և Դոբրատի գիմնազիոններում: 1807 թվին ընդուն-  
վել է Դոբրատի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն ավարտել է ուկե  
մեդալով: Ճանապարհորդել է Հարավային Ռուսաստանում, Կովկասում, Ղրի-  
մում, Մոլդավիայում ու Վարչափայում, կատարելով օդերեռութարանական և  
բնագագամական ուսումնասիրություններ: Նիվելիքովկայի է ենթարկել Մկ ու  
Կասպից ծովերը: Այս ուսումնասիրությունների արդյունքը եղալ Մ. Ենգելգար-  
դի և պարբուռ «Reise In die Krim und den Kaukasus» աշխատությունը:

1814 թվին դիսերտացիա պաշտպանելով ստացալ բժշկության դոկտորի  
աստիճան: Կատարելագործվելու համար Պարբուռը մեկնեց Գերմանիա: 1815  
թվին վերադարձավ և ծառայության մտավ ոռուսական բանակում իրեք գին-  
վորական բժիշկ, սակայն շուտով թողեց այս պաշտոնը և նորից ձեռնամուխ  
եղավ գիտական ուսումնասիրությունների աշխատելով մերթ Բեռլինում, մերթ  
Վիեննայում, Փարիզում, Միլանում և այլն նույն ժամանակամիջոցում Պար-  
բուռը բարձրացավ Ալպյան և Պիեռնեյան լեռները:

1820 թվին Պարբուռը վերադարձավ Ռուսաստան, իսկ 1821 թվին ստանձ-  
նեց Դոբրատի համալսարանի ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի ամբիոնը Լինե-  
րով խոշոր գիտական բժշկության ասպարեզում, նաև հետազայում խորացավ  
ֆիզիկայի մեջ և 1826 թվին ստանձնեց ֆիզիկայի ամբիոնը նույն համալսա-  
րանում: Պարբուռի կարենքը ուսումնասիրությունները վերաբերում են գլխավո-  
րաբեն բժշկությանը Ֆիզիկայի վերաբերյալ նրա գլխավոր աշխատությունը  
հանդիսանում է «Von hohlen Elektromoagnet etc.»:

1829 թվին Պարբուռը Աբովյանի հետ միասին կատարեց իր հայտնի վե-  
րելքն Արարատի գագաթը: Այս ճանապարհորդությունը նկարագրված է նրա  
«Reise zum Ararat» («Վերելք գեպի Արարատ») նշանավոր աշխատության մեջ:

Պարբուռի և Աբովյանի ծանոթությունը, որը շուտով փոխվեց մտեր-  
ժության և անօրինակ բարեկամության, բախտողաց նշանակությունը ունի-  
ցավ վերջինիս համար: Խիֆլիսի ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Աբո-  
վյանը վերադարձավ Էջմիածին, ուր նրա համար սկսվեց մի ծանր շրջան նա-  
եփքեմ կաթողիկոսի թարգմանն էր և քարտուղարը Ռւսման ծարավով տո-  
գորզավ պատահու միտքը տղետ հոգեորականների շրջանում, ինչպես ան-  
պատում, սնունդ չէր գտնում: Աբովյանին ծգում էր լուսավոր Ելրոպան: Սո-  
վորելու, ազա ժողովրդի լուսավորության գործին նիվելու միտքը գիշեր-  
ցերեկ գաղաք չէր տալիս նրան: Ահա այդ կրիտիկական օրերին Պարբուռի  
արշավախումբը, Արարատն ուսումնասիրելու նպատակով Էջմիածին է ժամա-  
նում: Պարբուռը, դեռևս Թիֆլիսում եղած ժամանակ, ներսիսյան դպրոցի տե-  
սուչ Ալամդարյանից շատ նպաստավոր կարծիքներ էր լսել Աբովյանի մասին:

Էջմիածնում անձամբ ծանոթանալով նրա հետ, Պարբուտը, կաթողիկոսի ակամա-  
համաձայնությամբ, Արովյանին միացնում է իր արշավախմբին իրեն ուղեկից-  
և թարգման Այս ուղմորությունների ժամանակ Պարբուտը ճանաչելով Արովյանի-  
շխտակ ու ազնիվ բնափորությունը, քննույշ հոգին, վեհ ձգումները, ուսման-  
ծարավը և ժողովրդի նկատմամբ ունեցած պարտավորությունների խորը զի-  
տակցությունը, սրանչանում է նրա անձնավորությամբ, սիրում է նրան հայ-  
րար և կապիւմ նրա հետ ընդմիշտ։ Պարբուտը ըմբռնեց, թե հոգևորական-  
ների այլասերլած միջամյայրամ ինչ սոսկալի ճակատագիր է սպասում դյու-  
րազգաց ու ազնիվ պատանուն:



### ՖՐԻԴՐԻԽ ՊԱՐՈՒՏ ԵՎ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Ճասկանալի է, թե Արովյանն իր հերթին ինչպես կվերաբերվեր պատ-  
կառելի գիտնականին Գիտության վեհ բարձունքներին հասած Պարբուտը  
դառնում է գիտության լույսը վարուց ի վեր որոնող Արովյանի իգեալը։ Այս  
պահին, երբ Էջմիածնի կղերը՝ գարավոր նախասպաշարմունքներին գերի գար-  
ձած՝ ահով ու դողով է լցվում, լսելով գիտնականի խիզախ ձեռնարկության-  
մասին, երբ բոլորը «անկարելի», «անհնարին» ու «անմիտ» են համարում Արա-  
րատի գազաթը բարձրանալու նրա մտադրությունը, Արովյանը պատանեկա-  
կան խանդավառ մտքի մի խիզախ թռիչքով ոտնատակ է տալիս հազարամյա-  
կան ավանդությունները, ոգեսորգում է Պարբուտի ձեռնարկությամբ և սիրահոժար-  
միանում նրա գիտական արշավախմբին։ Խիզախ մահկանացուների ոտքն առա-  
ջնունը երկուողով էր լցնում հավատացյալների սրտերը։

Հայկական այն ժամանակվա իրականության մեջ դա գիտության առաջին մեծ հաղթանակն էր կրոնական նախապաշտրմունքների դեմ:

Դեպի Արարատի գագաթը կատարած հաջող փերելքից հետո Պարսուը Արովյանին խոստացավ օգնել իրազործելու իր մտազրությունները: Պարսուի միջնորդությամբ Արովյանը մեկնեց Դարձատ ուսանելու, որպես պետական թոշակառու:

Պարսուն անխռնջ, տոկուն զիտնականի, գիտության էնսուլիսատի մեջ ցայտուն օրինակ է: Գիտության լույսը դեղի աշխարհի խուլ և մուլթ անկյունները տարածելու գործը նրա կյանքի նշանաբանն է եղեք եջմիածնի խավար միջավայրում ապրող սակայն լույս և գիտություն աենչացող պատանին իր ուսման ծարակով պարտավորեցնում է նրան: Պարսուը, հավատարիմ իր սկզբանը, հավատարիմ գիտության գործին, չեր կարող անսուշազրության մատնել ուսումնատենչ պատանուն, անկատար թողնել նրա՝ տարիների իրդը: Պարսուը Արովյանի վրա նայում էր որպես մեր ժողովրդի լուսավորության առաջալի վրա և այդ նպատակի համար էլ նրան պատրաստում էր Պորպատում:

Պորպատում անցկացրած վեց տարիների ընթացքում Պարսուի տունը Արովյանի համար եղել է հայրական հաջաղությամբ օջախ, իսկ Պարսուը և իր կինը ծնողական սեր և խնամք են ցույց տվել նրա նկատմամբ: Ծնորհիվ Պարսուի, Արովյանը սեր և առանձին հոգատարություն է վայելել նաև մյուս գասախոսների ու նրանց ընտանիքների շրջանում: Թե ի՞նչպիսի երախասագիտությամբ էր լցված Արովյանը Պորպատի իր գերմանացի բարեկամների և առաջին հերթին Պարսուի նկատմամբ, երեսում է նրա դորպատյան օրացրերի հետեւյալ տողերից. «Բայց ես իմ գերմանացի բարեկամներին անշափ լինելով պարագան, հարեւ ա ինձ՝ որ նրանց անունը, ընտանիքը բաղի բազի լավ գործը, առանձին և հաստու զրեմ: Ցշմարիա էսողես զիտուն, բարեհոգի, բանիքուն անձանց կյանք, արարք, դատողություն, խոսակցություն ճշգրիտ հայելի են կինաց ամեն մարդու»:

Հետագայում Արովյանը Պարսուի հետ կապված է եղել նամակագրությամբ և նրանից ստացած նամակներն ափափել ու հուսազրել են Արովյանին կամք և արիություն ներշնչելով նրա դյուքսելի հոգուն:

Արովյանը միշտ էլ խոր հարգանքով և մեծ ակնածանքով է հիշել իր բազմերախտ ուսուցչին: Պարսուի մահը ծանր վիշտ է պատճառել նրան: Արովյանը չերմ ցանկություն է ունեցել այցելելու Պարսուի գեւեզմանը և խորապես գշտացել է, չկարողանալով իրազործել իր այդ մտազրությունը:

Պարսուի մահվան առթիվ, որը տեղի ունեցավ 1841 թվին, Արովյանը մի սրառուչ բնաստեղծություն է զբել:

Նրանք, ովքեր ցանկացել են նոեմացնել Արովյանի նշանակությունը, ովքեր կամեցել են ցույց տալ Արովյանի աշխարհայցքի և քաղաքական-հասարական հորիզոնի սահմանափակությունը, հավասարության նշան են դրել Արովյանի ու Պարսուի միջև: Պարսուին ներկայացնելով որպես միապետական Ռուսաստանի պաշտոնական գիտնականի, Արովյանին էլ որպես նրա «հոգեղագակի», հայտարարել են նույն սահմանափակ և պահպանողական աշխարհայցքի ծնունդը նրանք չեն ուզել հասկանալ մի տարրական ճշմարտություն, որ երբեք չի կարելի համարության նշան դնել մի ուսուցչի և նրա աշակերտի միջև, եթե խոսքը գերաբերում է ոչ թե սովորական անհատի, այլ

մի պատմական խոշոր անձի, իր մեջ մի էպոփա, մի ժողովրդի կյանքն ամփոփող մեծության։ Պատմական խոշոր անհատի աշխարհայացքը կազմակերպվում է ոչ թե մեկ կամ միքանի ուսուցիչների աղքեցությամբ, ոչ թե մի երկրի և մի էպոփայի մեծ ու լուսավոր գաղափարների ներգործությամբ, այլ բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների կուրուրաներն այդ անհատի կողմից խորապես քննադատորեն յուրացվելու ճանապարհով։ Արովյանի աշխարհայացքի և կուլտուրական մակարդակի չափանիշը ոչ թե Պարբռուն է, այլ իր էպոփայի ելլոպայի առաջավոր հայացքներն ու կուլտուրան։ Անտիկ աշխարհի գրականություն և կուլտուրա, իտալական վաղ վերածնության շրջանի բանաստեղծներ, XVIII դարի ֆրանսուիական մեծ լուսավորիչներ, գերմանական կլասիկ գրականություն և փելիսոփայություն, XVIII դարի և XIX դարի առաջին քառորդի սուսական գրականություն և, վերջապես, հայարամյակների պատմություն ունեցող հայ կուլտուրա—ահա թե կուլտուրաների ինչպիսի բարդ խաչաձևումների արդյունք է Արովյանը։ Եթե սրա վրա ավելացնենք մեր ժողովրդի այն ժամանակվա սոցիալ-քաղաքական կյանքի առանձնահատուկ պայմանները, որի ամենացայտուն արտահայտիչը դարձավ Արովյանը, այն ժամանակ անմիտ կերևա Արովյանի և Պարբռումը։

Երեկոյան մի բաժակ թեյի էինք հրավիրված մեր սիրաւլիր հյուրընկալ հայր Հովսեփի մոտ: Ներկա էին շատ վարդապետներ, որոնց հետ մի քանի ժամ անցկացրինք: Սակայն ինձ չհաջողվեց մի այնպիսի զրույց սկսել նրանց հետ, որ բնական կլիներ հեռու վայրերից եկած և տարրեր պայմաններում ապրող մարդկանց հանդիպման գեպքում: Բացառությամբ սարկավագ Արովյանի, ոռուսերեն մի քիչ հասկանում էին Մանվել վարդապետը: Իսկ ուրիշ եվրոպական լեզու վանքում ոչ ոք չգիտեր:

Ուղևորների մեր կաղմը վանքում մի փոքր ավելացավ: Ավելացողներից կարևորը վերեւում արգեն հիշված երիտասարդ սարկավագն էր՝ Խաչատուր Արովյան անունով (այսինքն՝ Արովի տղա Խաչատուր): Արովյանին վանքն էր սիրավիր կերպով մեզ Ընդառաջելով զրել մեզ հետ: Արովյանը մի կողմից՝ որպես վանքի ներկայացուցիչ և միաբանության անդամ, մյուս կողմից՝ որպես հայերեն, ոռուսերեն, թաթարերեն և պարսկերեն իմացող մի անձ, մեզ համար խիստ անհրաժեշտ էր և անփոխարինելի: Բացի այդ՝ երիտասարդը մեզ ուղեկցելու մի այնպիսի սրտագին և անշահասեր ցանկություն ցուցաբերեց, որ ես կարող էի կանխադրել, թե նա մեր ձեռնարկմանը ներքին ու աշխույժ հետաքըրքություն է նվիրում և այդ ձեռնարկման հաջողականը շատ բանով կնոպաստի: Եվ իմ ակնկալությունն արդարացավ: Նա սկզբից մինչև վերջ ամեն առթիվ այնպիս վարվեց, որ կարծես մեր գործն իր գործը լիներ: Նա գիտության իր ծարավով, իր համեստ ձգութմներով, իր սակավապեսությամբ և իր ջերմեռանդությամբ, ինչպիս և իր մոքի հատկությամբ, իր սրտով և կամքի կայունությամբ վայելում էր մեր շնորհապարտությունն ու հարգանքը:

Սարկավագ Արովյանի հետ միասին բարձրացա վերև, կանգնեցի փողոցում մի ազատ տեղում և գյուղի (Ագուրի) ավագին կանչել տվի այնուեղ:

Ժամը 7,30-ին առաջ շարժվեցինք: Բացի ինձանից՝ կային պարոն Փոն Բեհագելը, պարոն Շիմանը, սարկավագ Աբովյանը, չորս հայ գյուղացի Ագուրի գյուղից, երեք ոռու զինվոր 41-րդ եղերական ջոկատից և չորս եղների հոտաղը:

Սարկավագն այս անգամ էլ էր մեղ ուղեկցում: իսկ պարոն Հենը, սարի բարձունքի բուսականությունը դիտելու համար, հետեւ մեղ, սակայն առանց մտադրություն ունենալու ձյան սահմանն անցնել:

Մեր ուժերը խնայելու համար, Աբովյանն ու ես, որքան որ գետինը հնարավորություն էր տալիս, ձիով բարձրացանք մինչև Քիփ-Գյոլի հարթությունը:

Աբովյանն այս հրաշալի ճաշին չմասնակցեց, որովհետեւ ինչ որ Նկեղեցական տոնի պատճառով պաս էր: Այսպիսի լարվածության և հոգսերի գեպքումն էլ պաս: Այս, այն էլ առանց որևէ սեթենթանքի և առանց կանխալ ինձ զգուշացնելու, այլապես ես նրա համար համապատասխան պատուց կերակրի մասին հոգ տարած կլինեի, և ոչ թե կթողնեի, որ նա տաք կոճի թեյով փորձեր իր ուժերը վերականգնել առանց եկեղեցական պատվիրանը խախտելու:

Այս խորհրդածություններից հետո մեկ էլ տեսնեմ՝ Աբովյանն իմ ուղեկիցների մեջ չէ:— «Եա խաչն է անկում»,— ասացին: Ես էի մտածում այդ ձեռնարկել, այն էլ կոր վայրի մեջտեղը, վայելուչ կետում, որտեղ խաչն ամենից ապահով կլիներ: Սակայն Աբովյանը սրբազն եռանդով գործի էր կպել և խաչի համար զագաթի հյուսիս-արևելյան ծայրին էր մի կետ ընտրել որովհետեւ, ինչպես նա ճիշտ նկատեց, եթե խաչը մեջտեղում տնկված լիներ, հարթությունից բնավ տեսանելի չէր լինի, քանի որ խաչն ընդամենը մոտ հինգ ոտնաչափ բարձրություն ուներ: Որպեսզի խաչը տեսանելի լինի ոչ միայն հարթությունից, այլև Աբովյանից և ս. Հակոբից, Աբովյանը, կյանքը վտանգելով, սեպ զառիվայրի ծայրով այնքան էր առաջ անցել, որ հարթության կենտրոնից մոտ երեսուն քայլ ներքե էր գտնվում, այդ պատճառով էլ ես նրան չէի նկատում: Այստեղ նա սացի մեջ փոս էր փորում խաչն ամրացնելու համար:

Գագաթի վրա վեց հոգի էինք.—և, 2) Խաչատուր Աբովյան,  
Էջմիածնի սարկավագ. Քանաքեռի գյուղացու տղա.

3) Ալեքսեյ Զդրովենկո, 41-րդ եղերական ջոկատից.

4) Մատվեյ Զալպանով » » »

5) Հովհաննես Այվազյան, Արգուրի գյուղացի.

6) Մուրադ Պողոսյան » »

Սարկավագը, թեև հաղիվ 20 տարեկան և վանական հանգիստ կյանքին վարժված, ոչ մի վայրկյան չէր խուսափում այն ճրգերից, որ պահանջում էր դորձը, և ամրող ժամանակ ցուցաբերում էր իսկախոռնչյուն, տոկունություն, ինչպես և բարձր ոգերություն: Այն ջերմեռանդությունը, որ նրան էջմիածնում դրդեց մեզ ուղեկցելու, չնայած վանական անհարմար և խանգարող տարապին, որ բարկացած էր երեք լայն պարեղոտից,—նրան հաջողությամբ առաջնորդեց նաև Արարատի ժայռածերպերի և զասիվայրերի վրայով, մղեց նրան, առանց հանգստի մասին մտածելու, Արարատի գագաթին խաչի մասին հոգալու: Նա այդ հոգեհարազատ վայրից մի մեծ կտոր սառուցց շորի մեջ փաթաթած՝ մինչև վանքը հասցեց, որտեղ նա այդ սառուցցը բաշխեց և որպես սուրբ վայրի ջուր՝ մի շնչ մեջ լցրեց:

Գագաթից վերադառնալիս ո. Հակոբում սարկավագն էջմիածնից հրաման ստացավ մեղնից բաժանվելու և խկույն վանքը վերադառնալու: Չնայած սա իմ ծրագրին և էջմիածնում ինձ տված խոստմանը գեմ էր, ոչ մի կերպ էլ պատճառաբանված չէր, և, ինչպես պարզվեց, ոչ մի առիթ չուներ, այնուամենայնիվ ես երիտասարդին բաց թողի հայր Հովհեփին ուղղված մի գրությամբ, որի մեջ ես իմ ցանկությունն ու ակնկալություններն արտահայտեցի: Սարկավագն էջմիածնին ժամանելուն պես կաթողիկոսի մոտ հավաքված հոգևորականությանն է ներկայանում, Արարատը բարձրանալու մեր փորձերի մասին տեղեկություններ է հաղորդում և իր բարձրագույն պետին մատուցում է Արարատի գագաթի սառցաջրի շիշը: Ոմանք համտես են անում ջուրը, ցանում կամ քսում են իրենց երեսին Բոլորն այն դիտում են որպես հաղվադյուտ արժեք ունեցող թանգագին բան:

Պարոնները բարի են լինում սարկավագին ետ չպահելու, և նա երբորդ օրը ունունակությամբ վերադարձավ ո. Հակոբ:

Այս ժամանակ, երբ ես պարոն Հեհնի և սարկավագ Աբովյանի հետ վաճքում ետ մնացինք, առաջին անգամ Աբովյանից որոշակի տեղեկություն ստացա այս մասին, թե ինչպես է կոչվում Արարատի զառիվայրի վրա գտնվող փոքրիկ մատուռը: ...Ասրկավագն ինձ հազորդեց, որ նա, իմ ցանկությամբ արձանագրությունները որոնելիս՝ մատուռի ներսի պատի մի քարի վրա հետեւյալ հայերեն արձանագրությունն է գտել.—«Աստուծո շնորհիվ ես Մխիթարս և իմ ամուսին Թամարը մեր ամբողջ փողը տվինք այս Սուրբ Հակոբ վանքին, և սուրբ եղբայրները զբաղիմաց խոստանում են, ի հիշատակ մեր և մեր ժառանգների, պատարագին մեզ հիշել տարին չորս անգամ»:

Տերեկը, նախքան պարոն Ֆեղորովի ետևից գեղի Արաքսի դաշտավայրն իջնելու որոշումը, հանկարծ խաղաղ վանքում մի անսովոր կենդանություն տիրեց: Վարդապետը, նրա երկու ծառաները, մի քանի ուրիշ գյուղացիներ, սարկավագը և ինձ մոտ մնացած երկու զինվոր վախով և հետաքրքրությամբ հավաքվել էին վանքի պատի առջև: Շուտով ես էլ ի հարկե, նրանց տրամադրությամբ վարակվեցի, որովհետև տեսա, որ երեք գայլ վեհափառություն իջնում են Արարատի լանջով և վանքի պատից հիսուն քայլ հեռու գտնվող փոքրիկ նախրից մի հորթ փախցրել տանում են. սակայն երբ մարդիկ գոռալով և զինված վրա տվին, գայլերն շտապ կերպով պատռեցին խեղճ կենդանու փորը, այդ դրությամբ հորթը թողին յուր իրավական տիրոջը և հանգիստ շարունակեցին իրենց ճանապարհը դեպի գաշտը:

Հոկտեմբերի 10-ին սարկավագի և մի կողակի ուղեկցությամբ ես ո. Հակոբից մեկնեցի գեղի Արաքսի դաշտավայրը:

Պարոն Գոն-Բեհագելը սարկավագի հետ էքսկուրսիա գնաց գեղի Գյոքչայի գեմացի կարմիր սարերը, գեղի Գեղարդի վանքը և գեղի Երևան:

Վերջինը ես էի, որ թողի դաշտը և հոկտեմբերի 9-ին վերագրձա ո. Հակոբ: Սարկավագն ուղեկցում էր ինձ: Արգուքիթյուղիների մոտ հանդիպեցինք ոչխարի մի մեծ հոտի: Զնայած աշուն էր, սակայն գեռ բավական շոգ էր: Սարկավագն ինձ առաջարկեց ծարավս ոչխարի կաթով հագեցնել:

Հոկտեմբերի 21-ին իմ ըոլոր ուղեկիցները՝ Փելդեգերի,  
սարկավագի, Թիֆլիսից մեզ հետ միացած մի կողակի և Ար-  
դուրիի գյուղացի մի վալաղի հետ միասին մի էքսկուրսիա կազ-  
մակերպեցինք դեպի Բայազետ, որ գտնվում է Արարատի հարա-  
վային մասում, ո. Հակոբից մոտ 35 վերստ հեռու:

Յ. Պարուա. „Reise zum Ararat“,  
գերմ. թարգմ. Հ. Հարությունյան

223  
4024  
A III 31497



# ՄՈՐԻՑ ՎԱԳՆԵՐ

Բավարական գիտնական Մորից Վագները (1813—1887) նշանավոր է իր ճանապարհորդ, աշխարհագրագետ, բնադեռ և երկրաբան Վագներն զբաղվել է գերազանցավայրեական ուսումնական ուսումնական թյուններով: Գիտական ուղևորություններ է կատարել Ալֆրում, Կովկասում, Հայաստանում, Քրդաստանում և Պարսկաստանում:

Մորից Վագները Թիֆլիս եկավ 1843 թվի գարնանը: Երկրաբանական ուսումնական թյունների նշանակող նաև պիտի շրջեր Հայկական Մարզը՝ գիտնականի խնդիրով և Անդրկովկասի գիտալոր կառավարչապետի թույլատրով յանում է նրա գիտական շրջադաշտությունների և հետազոտությունների մասնակիցը Վագների ընտրությունը պատահական չէր: Թե՛ եվրոպական և թե՛ տեղական բաղմաթիվ լեզուների գիտությամբ, ինչպես և գեղարվագանի բարությունն ունեցած իր բուռն սիրով, Աբովյանն Անդրեական մի բացառիկ մարդ էր եթե սրա վրա ավելացնենք այն, որ նա հիմնավոր կերպով ճանաչում էր իր հայրենի Երկիրը, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու միշտ Աբովյանին էր առաջարկվում նման խնդիր Աբովյանի վերոհիշյալ բարեմասնությունները հայտնի էին նաև պաշտոնական շրջաններին: 1843 թ. մարտի 31-ի պաշտոնական գրությունը, որով Անդրկովկասի կառավարչապետը գիմսում է Անդրկովկասի պարոցների գիրեկտորի պաշտոնակառարին՝ Վագներին ուղեկցելու կապակցությամբ Աբովյանին երեք շաբաթով արձակուրդ տալու մասին, զրա անհրաժեշտությունը պատճառաբանում է նրանով, որ Աբովյանը գիտե տեղական լեզուները: Մի տարի անց, երե արդեն Աբովյանը պաշտոնով տեղափոխված էր Երևան, բնական փրսությունների պրոֆեսոր Աբիսինին, իր գիտական ձեռնարկումների մեջ օգնելու համար, դարձյալ նա է հրավերվում, և այս անգամ զրա անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ Աբովյանը հիմնավորաբես ճանաչում է իր երկիրը և հայտնի է գեղարվագանի բարություններն ունեցած իր սիրով:

Վագները, ինչպես պարզվում է նրա հուշերից և մեզ հասած պաշտոնական թյուլից, Թիֆլիսում եղած միջոցին ծանոթանալով Աբովյանի հետ, մեծ սեր ու հետաքրքրություն է ցուցաբերում նրա անձնավորության և, մասնաւոր, նրա պահանջոնի նկատմամբ:

Բավարացի գիտնականին թողած հուշերի մեջ ամենաարժեքավորն Աբովյանի պահանջոնին վերաբերվող մասն է: Թեև Աբովյանի պահանջոնի մասին այս հուշերը միակը չեն, բայց եղածների մեջ թերեւ ամենահեղինակավորն են: Այդ իմաստով էլ նրանք իրաս կարեար են մեր հեղինակի մանկավարժական բացառիկ կարողությունների, հմտության և հաբուստ կուլտուրայի մասին գաղափար կազմելու տեսակետից:

Այս մարդու պատմությունը շատ հետաքրքրական է: Պր. Արովյանը էջմիածնի վանքի տիրացուներից մեկն էր և քահանացական վիճակի էր որոշված: 1829 թվին Դորպատի համալսարանի պրոֆեսոր պ. Պարլոտը՝ Հայաստան արած ճամբարության միջոցին էջմիածնի վանքն էլ տեսնելու գնաց, այնտեղ պատանի Արովյանն էր միայն, որ սուսերեն էր խոսում: Պարլոտը կաթողիկոսին աղաչեց, որ այդ երիտասարդ սարկավագն իր ճամբարության ընկեր լինի: Կաթողիկոսը Դորպատի համալսարանի վարժապետի աղաչանքին զիջեց: Այս երկու ուղեկիցները և զբու լրար հետ կապվեցին, ամեն գժվարությունների ու վտանգների մեջ իրարից չէին բաժանվում. և այսպես սկսված բարեկամությունը տեսաց մինչև Պարլոտի մահը: Պր. Արովյանը, Պարլոտի գիտությունը տեսնելով՝ ինքն էլ գիտության հոգած ստացավ, ու նրան շատ էր աղաչում, որ իրեն Դորպատ ուղարկելու միջոց գտնի, որպեսզի այնտեղի համալսարանում ուսում ու գիտություն սովորի, կրթվի: Ինչեցե, Պարլոտի ձեռք բռնելով՝ իր բաղձանքին հասավ: Ուսւ կառավարության օգնությամբ պ. Արովյանը Դորպատի համալսարանը մտավ, ուր վեց տարի սովորելուց հետո վերադարձավ իր հայրենիքը, որպեսզի նվիրվի իր հայրենակիցների զարգացմանը: Ուղեց մեկ դպրոց հիմնել որի նպատակը պիտի լիներ ժողովրդական դպրոցների ուսուցիչներ պատրաստել ազգի հառաջադիմության և կրթության համար: Բայց տեսնելով, որ այս գործը առաջ չպիտի գնա, պ. Արովյանը կամեցավ էջմիածնում քահանայացու տղաների ուսուցիչ զարնալ: Այս էլ շատ ընդդիմության հանդիպեց, որովհետեւ վանքի կղերը կասկածում էր բողոքական գերմանացիների մեջ պ. Արովյանի ստացած կրթության ու գիտության վրա: Մրա համար պ. Արովյանը թիֆլիս գնաց, այնտեղ դպրոց հաստատեց ու այնտեղի առաջվա դպրոցն էլ նրա հետ միացըց: Շատ անգամ գնացի այս դպրոցը ու հայ տղաների առաջադիմության վրա շատ զարմացա: Տասը, տասնչորս տարեկան տղաները լավ կարդում ու գրում էին հայերեն, վրացերեն, թաթա-

բերեն, ոռուսերեն, գերմաներեն ու ֆրանսերեն։ Իրոք շատ զարմացած գերմաներեն լավ շեշտելով էին խոսում և իմ առջև ուսուցչի գրել տված բաներից տեսա, որ գերմաներեն լեզվի կազմությանը լավ տեղյակ էին. իմ առջևս Դյութեի ու Շիլերի գործերը կարդացին։ Ամեն անգամ այս գոլոցը գալիս և այս կայտառ տղաներին տեսնելիս՝ մեծ ուրախություն էի զգում, մանավանդ նրանց բարեկամական ու ընտանեկան վարմունքը, քաղաքավարությունն ու վարժությունն ինձ շատ էին ուրախացնում։ Իրենց ուսուցչին շատ սիրում էին, որովհետեւ թե կրթության ու գիտության մեջ հառաջացնելու և թե իրենց հանգստությունը հոգալու համար շատ փույթ էր տանում։

Մայիսի տաք օրերը հասնելուն պես պ. Արովյանի հետ մեկտեղ Թիֆլիսից ելա։ Նրա բոլոր աշակերտները ձիերով քաղաքից դուրս մեղ ուղեկցեցին։ Այս աշխատյժ երիտասարդների տեսքը նորից ինձ ուրախություն բերեց, նրանք աներևսակայելի վարժությամբ էին ձիեր խաղցնում։ Քուռ գետի մոտ, վերջին պարտեզներին հասնելուն պես բաժանվեցինք մեր ուղեկցներից։ Պր. Արովյանն իր աշակերտներին գերմաներեն լեզվով հորդորեց, որ ուսման փույթ տանեն, որ գառնալու ժամանակ ինքն էլ ուրախանա։ Մեկ մեկ ամենի ձեռքը թոթափեց, հետո բարեմաղթության ձայներ բարձրացան, որոնք մեր հետեւ երկար ժամանակ դեռ լսվում էին։

Հան ատենակալի կարգադրությունը շատ պատվական կլիներ, եթե երևան նահանգի գպրոցներին փույթ տանելով՝ նրանց մեջ նույնիսկ տեղացիների տղաները կրթվեին ու նրանցից պաշտոնատերեր դուրս գային։ Բայց հոգացող չկար. գոլոցները երեսի վրա էին մնացած. այդպիսի խելացի տղաների մեջ տիրում էր տղիտություն։ Վերջապես նայտհարգ զորապետն ու Վորոնցով իշխանը, իրենց կառավարած տեղերի վրա հայրական խնամք ունենալով՝ սկսեցին ուշադրություն գարձնել, որ գոլոցները կարգի գնեն, և, ինչպես ճանապարհվելիս լսեցի, պ. Արովյանն էլ երևանի գոլոցի կառավարիչ նշանակվեց։ Այս հոգաբարձությունները, որ շաբունակվի, կարելի է հուսալ՝ որոշ ժամանակից հետո երկրի վիճակը մի քիչ կսկսի լավանալ և ժողովուրդն իր խեղճությունից մի քիչ կազատվի։

Մենք իրեկոյան գեմ երասխ գետի եղերքը հասանք. բայց ջուրը խիստ շատացած լինելով՝ մութ ժամանակ վրայով անց-

նելը խոհեմություն չհամարեցինք և գիշերեցինք թաթարական մի գյուղում: Թաթարները մեզ շատ սիրով ընդունեցին և մեծ հյուրասիրություն ցույց տվին. սա ցույց է տալիս, որ թաթար մահմեղականները քրիստոնյաների հետ հաշտ են: Պարբռտի ժամանակ բոլորովին տարրեր էր, նա հազիվ թե հարկավոր եղած ուտելիքը կարողացավ գտնել. իսկ մեր հյուրընկալ թաթարն ինչ որ ուներ՝ մեր առաջ գրեց և պարգև էլ չվերցրեց: Մինչև կես գիշեր մեզ հետ նստեց իր մի քանի թաթար զբացիներով, որոնք շարունակ պ. Արովյանին աղաչում էին, որ պատմություններ պատմե, բայց զարմանալին այն էր, որ բուն նույրը ու զավեշտական պատմություններով համ չէին ստանում և հասարակ պատմություններով ավելի էին զվարճանում:

Երեանի գավառապետ պ. Գոլովինը բոլոր իր ստորին պաշտոնյաներին առաջուց իմաց էր տվել, որ մեր հանգիստ ձանապարհորդության համար ամեն բան հոգան. այդ պատճառով Երասիսի այն կողմն անցնելուն պիս՝ տեղական ռուս պաշտոնյան առաց, որ մինչև Մասիս ապահով գնալու համար ամեն բան կարգի է դրված: Քիչ հեռու, պարսիկ իշխանի ամառանոցի առջև, մաքուր հազնված ձիավորների մի խումբ կար, որ մեզ պետք է ուղեկցեր: Սրանց զվարակում էր իշխանազգի հայ Արսեն-Սուլթան-Գեղամյանը. նրա հետ էր քրդերի մեծերից Ալի Բեկը. այս քաջազին ձիավորներն էին՝ հայ, թաթար, քյուրդ: Պարսիկ իշխանը պարտեղի դուսն առջև, ծառաների բազմությամբ ու գույնը զգեստներ հագած՝ մեզ բարեկով ընդունեց, վարդերով զարդարված մի գավազան ընծայեց, և, բացի սրանից՝ թաթարերեն լեզվով երկար ճառ արտասանեց... որը պ. Արովյանը թարգմանեց ինձ. ես էլ իրեն պատվիրեցի, որ իմ կողմից, նույն քաղաքավարությամբ, պարսիկ իշխանին կարելի եղածին չափ ծաղկավետ խոսքերով շնորհակալ լինի: Վերջը ներքև իջանք ու վարդինոցը մտանք, ուր զարդարված որահում մեզ հյուրասիրեցին զովացուցիչ ըմպելիքներով: Իսկ պ. Արովյանը երկար ու բարակ զրուցում էր նույն պարսիկ իշխանի հետ և աշխատում էր հասկացներ թե ինչ է իմ ճանապարհորդության նպատակը, բայց այս բանը շատ գժվար էր, որովհետեւ զբոսանքի ու վայելքի մեջ ընկղմված պարսիկը չէր կարող հասկանալ, թե ինչպիսի մարդ է, որ եվրոպայի հանգիստ կյանքը թողնելով՝ մի քիչ հող կամ

Երկիր ուսումնասիրելու համար այսչափ երկար ճամբորդություն ու աշխատանք կարող է հանձն առնել:

Ես շրջակայքը մի քանի անգամ ման եկա, գիտեցի բույսերը և մի քանի տեսակ գուղնադյուս երկենցաղ կենդանիներ ու ձձուներ գտա: Հայերն ու թաթարներն իմ այս զբաղմունքիս վրա զարմացած էին, և դիմավորաբար նրա համար, որ ստորին տիպի աշխատանքներն էլ ես անձամբ էի կատարում: Մուրճս, տնկացույց պատկերներն ու միջատների ցանցը ծառայի ձեռքը տալու տեղ՝ ես էի տանում, սրանով գեպի ինձ ունեցած հարգանքն ու մեծ համարումը խախտվեցավ և անդադար ալ. Արովյանին հարցնում էին, թե ինչու այսքան պատիվ են ցույց տալիս մի օտարականի, որի զգեստն ու զբաղմունքն ամեններն բարձր աստիճան չեն ցույց տալիս, որը ոչ ոսկե ուսագիրներ և ոչ էլ պատվո նշան ունի և իր խեղճ ծառայի հետ իրեն հավասար մարդու հետ ընտաներար է խոսում: Այս բոլորը, մասնավանդ վերջին պարագան ուսուաց սովորությանը ըոլորովին հակառակ էր, որոնք վերջին ձիգը գործ են դնում՝ զգեստով ու արտաքին վարմունքով իրենց հապատակների աչքին ահեղ ու պատկառելի երեալ, և ժողովուրդն էլ այդպիս է վարժված, այնպես, որ մարդու աստիճանի բարձրությունն այսպիսի նշաններով է չափում:

Բայց ամենից ընդարձակ և ամենից ավելի հավաստի պատմությունը հաղորդեց ինձ հայ Սաղաթել Խոջայանը, որը մի պատվական ծերունի և հանդարտ ու մաքուր մաքի տեր մեկն էր. սա այն Ակունեցի Ստեփան աղայի եղբայրն էր, որին Պարբռուն ու Դյուբռուն հաճախ են հիշում և որը հիմա ավերակների տակ թաղված է: Դժբախտության պատահած օրը Սաղաթել Խոջայանը Արարատի վրա մի արոտավայրում է եղել և հրաբուխի ու հողային զանգվածների գուրս ժայթքած ժամանակը հաղիվ նույն տեղից 2 ոռուսական մղոն (35 լուսի) հեռու է եղել: Սրա բոլոր պատմածներն ուրիշ երկու Ակունեցի հայ էլ՝ նասիր Մկրտչյանը ու Հովհան Հովհաննիսյանը հաստակեցին, որոնք Արարատի վրա միշտ ինձ հետ էին: Սրանց պատմածը թարգ-

մանելու ժամանակ պ. Աբովյանի նման կըթված ու լեզվագետ  
անձնավորությունից օգնություն ստանալուս համար ինձ երջա-  
նիկ էի համարում:

Այս դժբախտությունը պատահելուց հետո, Պետերբուրգի  
լրագիրներից մեկից առնված մի լուր կարդացի, որի մեջ պատ-  
մվում էր, թե սոսկալի երկրաշարժից Մասիսի ձևը փոխվեց.  
Նրա երեք կատարները եկան միացան ու հարթ տափարակ եղան:  
Այս լուրն էլ սուր գտա: Պ. Աբովյանը տեսավ, որ լեռան ձեւը  
ճիշտ այնպիս է, ինչպիս 1829-ին, Պարբուտի հետ միջին կատա-  
րի վրա ելած ժամանակը:

Morit Wagner. „Reise nach dem  
Ararat und dem Hochland Armenien“,  
Stuttgart, 1848.

Մ. Վ. Ա. 1848, «Ճանապարհորդություն  
ի Հայաստան», Վենետիկ, 1851 թ.,  
թարգմ. Փիլիպպոս Շամհյան  
Արևելահայ լեզվի է վերածված մեր կողմեց:

# ՖՐԻԴՐԻԽ ԲՈԴԵՆՇՏԵԴՏ

Գելումանցի նշանավոր բանաստեղծ և ճանապարհորդ Ֆրիդրիխ Բոդենշտեդտ (1819—1892) Արովյանի բազմաթիվ և բազմացի բարեկամներից մեկն է: Արովյանի և Բոդենշտեդտի հանդիպումն ու ծանոթությունը տեղի է ունեցել 1844 թ. գարնանը, երբ վերջինս Թիֆլուից Երևան եկավի Բոդենշտեդտը լսած լինելով Պարուտի հետ Արարատի գագաթը բարձրացած՝ Անդրկովկասում արդեն հայտնի Արովյանի համբավը, իր նպատակներն իրագործելու համար ուղիղ նրան է դիմում, նրա օգնությունն է խնդրում Արովյանը հրճանքով է ընդունում օտարերկրացի հյուրին և իր սիրալիք պատրաստակամությունն է հայտնում նրան օգնելու Դորպատի կուլտուրական հասարակության և բարձր մտավորականության միջավայրում վեց տարի անցկացրած Արովյանը, Երևանի հետամնաց պայմաններում, ուր բացարձակապես զուրկ էր բարեկամների ու համախոների շրջանից, մեծ միաթարություն է զգացել նման անակալ հանդիպումների ժամանակ: Առավելապես նրան ուրախացնում էր օտարերկրացիների ցուցաբերած համակրանքն ու հետաքրքրությունը դեպի հայ և հարևան ժողովուրդների կյանքն ու կուլտուրան: Բոդենշտեդտը զիտավորություն ունեն Երևանում հավաքել և գրի առնել հայ և Հայաստանի տերթառորհայում ապրող մյուս ժողովուրդների՝ քրդերի և աղքաբեջանցիների փուլութ: Արովյանի գործ դրած եռանդուն ջանքերի շնորհիվ նրան հաջողվում է խոսեցնել և գրի առնել հիշալ ժողովուրդների ներկայացուցիչների պատմածները, շահեկան շատ բան քաղելով այդ զրոյցներից:

Արովյանը հանձն է առնում հետագայում ևս շարունակել նույն աշխատանքը՝ հավաքել և ծանոթագրել ժողովրդական երգերը՝ Բոդենշտեդտին ուղարկելու համար: Վերջինս խստացել էր թարգմանել այդ երգերը և առանձին գրքով հաստարակել: Բոդենշտեդտի մեկնելուց որոշ ժամանակ անց՝ Արովյանը նրան ուղարկում է ժողովրդական երգերի մի տեսք՝ գերմաներեն մանրամասն բացատրություններով: Արովյանը խստանում է ուղարկել ևս մի քանի տեսք, բայց այս անգամ նա իր խստանումը չեղ կատարում: Գերմանացի բանի տեսք, բայց այս անգամ նա իր խստանումը մի կատարում: Գերմանացի բանաստեղծի կողմից Արովյանին ուղղված նամակները մնում են անպատճախանական պահանջանքի մեջ, որ արդեն տեղի էր ունեցել նրա առեղծվածային անհայտացում:

ՀՍՍՌ Պետական Գրական թանգարանում պահպանվում է Արովյանի ձեռքով կազմված հայկական—քրդական և աղքաբեջանական երգերի մի տեսքը, գրի առած հայերեն և լատիներեն տառերով: Անտարակույս, Բոդենշտեդտին ուղարկելու նպատակով պատրաստված ժողովրդական երգերի երկրորդ տեսքը տեսքը է այդ: Բոդենշտեդտի սույն ճանապարհորդական տպափորությունները և ուսումնասիրությունները զետեղված են նրա «Հազար ու մեկ օր Արևելքում» մեծածավալ աշխատության մեջ, ուր բավական տեղ է հատկացված հայ ժողո-

վըքին, հայոց պատմությանը և գրականությանը, ժողովրդական ավանդություններին ու առասպելներին: Նույն այս աշխատության մեջ հաղինակը մեծ երաթօնագիտությամբ խոսում է Խաչատորը Արովյանի մասին: Աշխատության առաջին հատորում միայն հատ ու կտոր տեղեկություններ է հաղորդում, իսկ երկրորդ հատորում Արովյանին հատկացնում է մի ամբողջ գլուխ Խնչակը մեջ հեղինակին ճանաչող երովացի մյուս ճանապարհորդները, նմանապես և Բոգնշտեղում Արովյանի անձնավորության ու աշխատանքների մասին խոռում է խորը հիացմունքով: Անկեղծ հիացմունք է արտահայտում Արովյանի մասին ասլած նրա ամեն մի խոռը Ռւշազրավ է Արովյանին նվիրված գլխի վերջին երկու պարբերությունը «Այն փոքրաթիվ տողերը, որոնք իմ հայ բարեկամի հիշատակին նվիրել էին ուղղում առանց զիտավորության, մի ամբողջ գլուխ ղարձան են չեմ կարծում, որ զրանով գերմանացի լութերցողի մեջ գիշամություն առաջ բերած լինեմ Արովյանը, որն այնքան նպաստել է հեռու Արեկելքում զերմանական անդամ պատվին և ակնածությանը, արժանի է, որ իր սեփական անունն էլ Գերմանիայում պատվի և ակնածության հասնի: Այսպես, երախտագիտ գերմանացին Արովյանի կողմից մեծարված տեսնելով իր ժողովուրդը, փոխարարձ մեծարանքի է արժանացնում նրան:

Բողենշտեղութիւնը հիշողություններն առանձին կարենություն են ստանում նրանով, որ նոր լուս և սփռում Արովյանի կյանքի այնպիսի շրջանների վրա, որոնք առավելապես անհայտ են: Այսպես՝ այդ հիշողություններում կենդանանում է էջմիածնի միջավայրը, ուր անցկացան Արովյանի վաղ պատանեկության մի շարք տարիները նաևնդուն ու դյուրազգաց Խաչատուրի համար սպանիչ էր այդ հեղձուցիչ մթնոլորտը, նա շատ անզամ փորձել է փախչել-հեռանալ այդ գժոխցից դեպի հայրենի գյուղը, ծնողների հարազատ գիրկը, բայց բռնվել, ետ է բերգել, որից հետո նրա վիճակն ավելի է վատթացել:

Իր պատանեկության տարիներին էջմիածնից ստացած տպավորություններն այնքան սոսկալի են եղել որ նա հետազայում ևս մեծ տհաճություն է զգացել, յաւրաքանչյուր անգամ ոտքը վանքի պարիսպներից ներս զնիլիս:

Բողենշտեղութիւնը հիշողություններում մենք գտնում ենք հետաքրքիր տեղեկություններ նաև Արովյանի կյանքի վերջին շրջանի վերաբերյալ, այսնեղ կա հիշատակություն Արովյանի կողմից Բողենշտեղութիւնը ուղղված մի կարևոր նամակի մտսին, որից՝ զաղափար ենք կազմում նրա վերջին տարիների տրամադրության և մտադրությունների վերաբերյալ Արովյանը մտադիր է եղել թողնել պաշտոնը և քաղաքն ընդհանուրապես ու քաշվել մի գյուղ՝ հողազործի աղնիվ զամատակով և զաւղական համեստ կյանքով ապեկու զիտավորությամբ: Պատեսակ մի գյուղ է կիմառապահ գրինելու էր լինելու արդեն անուանելի դարձած ամենօրյա գալիքից ու հալածանքներից և բուրժուական քաղաքի չարչիական ողու իշխանությունից:

Բողենշտեղութիւնը, խոսելով Արովյանի զատկան-մանկավարժական բազմարդյուն և ժրաշան գործունեության մասին, հիմնականում ճիշտ է գնահատում այս բացառիկ գերը, որով նա ղարձավ իր էպոխայի ամենախոշոր գեմքը:

Տանը մի թեթև նախաձաշ անելուց հետո, որոնեցինք Աբովյանցին՝ Պարբռտի առաջնորդին Արարատը բարձրանալու ժամանակ: Աբովյանը մի տաղանդավոր հայ է, որ յուր գիտնական կրթությունն ստանալով Դորվատում և հիմնավոր կերպով ուսումնասիրելով գերմաներեն ու ֆրանսերեն լեզուները, վերագրանում է հայրենիք, ուր զարմանալի եռանդով գործում է հայրենիքի առաջադիմության համար: Նա հավաքում է յուր մոտ 20—30 աշակերտ, խոսում է նրանց հետ գերմաներեն, և նրա աշակերտներն այնպիսի առաջադիմություն էին արել, որ մենք ազատ խոսում էինք նրանց հետ մեր մայրենի լեզվով: Աբովյանը մի բարի առաջնորդ եղավ մեզ համար՝ քաղաքում ըստ պարտականության անելիք այցելությունները վերջացնելու:

Մեր առաջնորդ Աբովյանն այնքան բարի էր, որ վանքին իմաց էր տվել մեր գալը: Գերապատիլ արքեպիսկոպոսը մի քանի եպիսկոպոսներով և վարդապետներով հանդերձ ընդունեց մեզ:

Գուցե պարտական ենք նահանգապետի երաշխավորության և Աբովյանի միջնորդության, որ այսպիսի ընդունելություն գտանք էջմիածնում, որ մենք բոլորովին չէինք սպասում:

Մի ուրիշ աշխատությանս մեջ ես արգեն խոսել եմ մի զարմանալի երեսութիւ առթիվ, որ նշմարելի է հայոց զրականության մեջ: Նա հարուստ է փիլիսոփայական, պատմական, աստվածաբանական գրվածքներով, բայց չունի նշանակալից մի բանաստեղծական արտադրություն, չնայելով, որ երկրի գիրքը և պատմությունը, նույնպես և ժողովրդի վաղ ծանոթանալը (թարգմանության միջոցով) հունական և հումեական բանաստեղծների հետ, կարող էր առիթ տալ զրան: Բայց և այնպես մեծ հույս ունեի իմ տեղական բարեկամներիս միջոցով հայկական ու պարտական երգերի ժողովածու ստանալու: Գլխավորապես ես պարտական եմ մեր բարի Աբովյանին, որ հույս անկատար չմնաց:

որովհետև ինքս անծանոթ լինելով հայ ժողովրդական լեզվին, ստիլված կլինեի մի քանի թաթարական և պարսկական երգերով սահմանափակել իմ ժողովածուն, եթե Արովյանը հանձն չառներ կազմել ինձ համար Երևանի սարդարեատի բոլոր ժողովրդական երգերի ժողովածուն: Ելլոպա վերադառնալուց ես իսկույն ստացա Արովյանից յուր ձեռքով գրած և գերմաներեն լեզվով ծանոթաբանած մի տետր, ուր նա խոստանում է դեռ մի քանիսն էլ ուղարկել: Իմ հարգելի բարեկամ՝ Բելինի համարաբանի պրոֆեսոր Պետերմանը կարողացավ ժողովրդական լեզվով գրածը մի առ մի ինձ մեկնել բացատրել: Ժողովածուն առանձին հրատարակելու համար գեռ փոքր է, իսկ այստեղ զետեղելու համար՝ մեծ:

Մենք ընդունեցինք քաղաքի քրիստոնյա և մահմեդական հոգեորականների այցելությունը, և մեր զբականական պայուսակը քանի գնում, այնքան հարստանում էր հիշատակություններով: Վառարան չինելու պատճառով մեր բարեկամը գինով էր տաքացնում մեզ և Արովյանի ներկայությունը, որքան թույլ էին տալիս նրան հանգամանքները, ուրախացնում էր մեզ: Հայերը մեծ բավականություն էին զգում, երբ իրենց որդիկերանց գովասանքն էին լսում մեզանից և առավել ևս ուրախանում էին, երբ նրանք մեղ հետ բավական վարժ գերմաներեն էին խոսում: Մեր ծանոթությունն ընդլայնվում էր և համարյա յուրաքանչյուրը մի նորություն էր տալիս մեզ երկրի, կյանքի և սովորությունների մասին:

«Հանդես գրականական և պատմական»

1889, № 2, էջ 211—244:

Թարգման. Հովհաննես Բարխուդարյան

Արիսի գոռող վերաբերմունքն Արովյանի հանդեպ, որ ցուցաբերելու իրավունք էր համարել նա այն պատճառով, որ ոռուսական պաշտոններության սանդուղքի վրա մի երկու աստիճանով բարձր է եղել Արովյանից, առիթ է ավել թյուրիմացությունների: Վերջիններիս հետևանքը եղել է այն, որ խեղճ հայը հուսահատության ծայրն է հասել: Արովյանը հետո ուղարկել էր իր օրագրերն այն ժամանակից և խնդրել որ ես հրատարակեմ «Հավելումներ» և լուսաբանություններ պրոֆ. Աբիսիմ Արարատ սարը բարձրանալու մասին» վերնագրով: Բոլորովին բարյացակամ մտքով

Հս չկատարեցի այդ խնդիրը, նախ՝ որ, իմ կարծիքով, հրապառակային նշանակությունից զուրկ էին այն անհատական պարագաները, որոնք վերոհիշյալ օրագրերի գլխավոր բովանդակությունն են կազմում. ապա նաև նրա համար, որ նրանց հրատարակությամբ ես թերես երկուսին էլ փաստած լինեի: Այնպես որ այդ օրագրերը մինչև այժմ էլ իմ ձեռքին են, որովհետեւ հարմար առիթ չներկայացավ կրկին Երևան ուղարկելու:

## ԱԲՈՎՅԱՆ

Հայաստանից վերադառնալուց հետո երկու անգամ գրել էի Աբովյանին՝ նրան հիշեցնելու իր խոսումը, այն է՝ որ նա ուղարկե ինձ քրդական ժողովրդական երդերի շարունակությունը և Քեշիշյալը՝ թուրքերեն լեզվով գրած ոտանավորները: Նրան հայտնի էր, որ ես մտադիր եմ այն գերմաններեն թարգմանել և դրանից գոյանալիք դրամական արդյունքը նրան հանձնել իր կարող վիճակը բարելավելու համար: Այս պատճառով և ինձ անհասկանալի էր մտում, թե ինչու իմ բոլոր նամակները անպատճանիան էին մտում, մինչև որ ես, այս երկի առաջին լույս տեսնելուց մի քիչ հետո, ախոռը պատճառն իմացա: Իմ հին ծանոթներից մեկը, պետական խորհրդական Ռուկովշենկոն, Թիֆլիսից, երբ 1850 թվի ամառը հանքային ջրեր գնալիս Բեռլինում ինձ այցելեց՝ հայտնեց ինձ, որ Աբովյանն արգեն մի երկու տարի է, ինչ անհայտացել է և, չնայած ամեն տեսակ քննության, ամենակին չէ գտնվել հետքը: Ռուկովշենկոն, Աբովյանի նախկին ստորագրող պաշտոնյան (venqentzte), մտադրված էր եղել նրան Թիֆլիս կանչել, նրա համար մի ավելի լավ պաշտոն գտնելու նպատակով: Թիֆլիսի գիմնազիայի մի վրացի օգնական ուսուցիչ, Տուրքեստանով, ուղարկվում է Երևան՝ Աբովյանին ժամանակավորապես փոխարինելու համար: Երևան հասնելով՝ նա տեղեկավորապես գոխարինելու համար, ակառակ միանգամայն իր սովորության, առավոտը վաղ հեռացել է անից և դեռ չէ վերագրածել: Տուրքեստանովը հետեւյալ օրը երկրորդ անգամ այցելում է Աբովյանի կողմը, գտնելով նրան արտասուրբի մեջ իւեղդված: Նա ամբողջ գիշերն իր ամուսնուն է որոնել, ոչ ոք տեղեկություն չունի նրա մասին, ոչ ոք չի տեսել նրան: Այն օրից ի վեր անհայտացել է նաև և այլևս ոչինչ չէ լսվել նրա մասին:

Հավանորեն նա ինքն իրեն սպանել է, որովհետեւ հենց այն ժամանակը, երբ ես նրա հետ ծանոթացա, խիստ թշվառ և ան-

հույս դրության մեջ էր նա—մի կողմից՝ ապրուատի հոգսերի պատճառով և մյուս կողմից՝ իր անձնվեր գործունեության չնշին գնահատության պատճառով:

Իր վերջին նամակով Արովյանը ինձ գրում էր, որ ինքը վճռել է թողնել ուս պետական ծառայությունը, Հայաստանի ներքին մասը գնալ և այնտեղ իր պատերի պես երկրագործությամբ ապրել, որովհետեւ նրա չնշին եկամուտները չեն բավականացնում քաղաքի պահանջներին, իսկ ավելի ևս սպասել իր վիճակը որևէ կերպ բարվոքելու համար, այդ նրան ավելի խոր թշվառության մեջ կձգեր:

Զախոր փորձառություններն էին, որոնք տաղանդավոր և ջանասեր մարդուն այս վճռին էին հասցրել: Նրա կյանքի պատմությունը չափազանց նշանակալից է, այդ պատճառով և անկարելի է այդ կյանքից մի քանի գծեր չտար:

Արովյանը ծնվել է այս (19-րդ) դարի սկզբում, Երևանի մոտ գտնվող մի գյուղում, որի անունը ևս մոռացել եմ. նրա ծնողներն աղքատ էին: Որովհետեւ նա հենց մանկությունից ցույց էր տալիս սովորելու մեծ փափառ, ուստի և նա շատ վաղ գալիս է կծմիածնի վանքը, այնտեղ նախապատրաստվելու հոգեվորական դառնալու համար: Արարատի ոտքերի տակ գտնվող այս հայտնի հին պատրիարքական աթոռում իշխում էր այն ժամանակ Եփրեմ կաթողիկոսը,—մի սառնասիրա, բարձրամիտ անձնավորություն, որը խիստ վարիչ էր այն դեպքում, երբ բանը, վանքի միաբանների և սաների կյանքում, ձերն ու արտաքինին էր վերաբերում: այսինչ նա սրտանց թշնամի էր ճշմարիտ քաղաքակրթության և գիտության: Իր գիտության չափը նա գաղտնի էր պահում: իսկ նրա եպիսկոպոսների և վարդապետների մեջ ամենազիտուն համարվում էին նրանք, որոնք փոքր ի շատեւ հասկանում էին ո. Գրոց զրաբար թարգմանությունը:

Այն ժամանակ վանքը գեռ չուներ երոպական քաղաքակրթության արաւարինը, որն ստացավ նա կայսերական տան մի քանի անդամների այցելություններից սկսած: Արովյանն ասաց ինձ և Ռահին, երբ նու մեզ դեպի կծմիածնին էր ուղեկցում, թե կարծեք նրա գլխին սառը ջուր էին մազում, երբ նա ոտք էր դնում հին պարիսպներից նկրս,—այնքան անտանելի են եղել այն տպավորությունները, որոնք ստացել է նա իր պատանեկության հասակում և որոնք երբեք այլևս չէին չքանում նրա հիշողությունից: Փախստյան զանազան փորձեր, որոնք նկատվել

էին, առիթ էին տվել, որ նրա հետ ավելի խիստ վարվեն, քան  
առաջ:

Այսպես մեծացավ նա լացի, աղոթքի և պահքի մեջ, մի  
վայրենի, ամեն ազնիվ բանի համար բժացած, անբնական հեշ-  
տությանց մեջ ապականված մի շրջապատռմ, ավելի օգուտ չտա-  
նալով, քան այն, որ նա մի փոքր զրաբար սովորեց այնտեղ:  
Նա արդեն կիսասարկավագի (diakon) աստիճանի էր հասել, երբ  
Դորպատի հայտնի պըռֆեսոր Պարբռուլ 1829 թվականին Հայաս-  
տան գնաց՝ Արարատ սարը բարձրանալու փորձ կատարելու դի-  
տավորությամբ: Բախտը մոտեցրեց նրան և Արովյանին իրար  
հետ: Արովյանը Պարբռոտի վրա այնպիսի լավ ապավորություն  
գործեց, որ սա չընկճվեց դժվարությունների առաջ նրան իրեն  
ուղեկից վերցնելու համար,—երբ արդեն հաջող կերպով հաղթա-  
հարվել էին մյուս դժվարությունները, որոնք հարուցվում էին  
բարձր հոգեռականության կողմից, իբրև բարոյական պարտա-  
վորություն Արարատը բարձրանալու յուրաքանչյուր մի փորձի  
դեմ:

Առաջին փորձը (Արարատ բարձրանալու), որի ձեռնարկու-  
թյունն առանց Արովյանի էր կատարվել՝ անցավ անհաջող: Եթե  
Պարբռուլ, երկրորդ անգամ սարը բարձրանալիս, 15.138 ոտնա-  
շափ բարձրության հասավ, իսկ երրորդ փորձի ժամանակ արդեն  
(26—28 սեպտ.) կարողացավ իրոք հասնել մինչ այն, ոեռ ջրհե-  
ղեղից սկսած, ոչ մեկ մարդու ոտք չկոխած Արարատի գագաթը,—  
այդ բոլորը նա պարտական էր մեծ մասամբ Արովյանի ջանքե-  
րին և խոհականության:

Գերմանացի գիտնականը շատ հավանեց երիտասարդ հային  
և հայրենիք վերապահնակիս իր հետ նրան տարավ Դորպատ,  
որտեղ նրան հայրաբար խնամեց և վեց տարի շարունակ իր  
հաշվով ուսանել տվալ:

Այս վեց տարիներն Արովյանի կյանքի երջանիկ շրջանն  
էին կազմում: Նա տեսավ իր աչքերի առջև բացված մի նոր աշ-  
խարհ և ամեն բան յուրացրեց այնպիսի եռանգով ու ընդունա-  
կությամբ, որ շուտով նա գերմանական շրջապատին իրեն կա-  
տարելապես ընտելացած զգաց: Հայտնի լեզվագետները, որոնց  
աշակերտում էր Արովյանը, շատ լավ վկայություն էին տալիս  
նրա հոգեկան ընդունակությունների մասին. և այն անձնվիրու-  
թյունն ու երախտագիտությունը, որ շուրջ էր տալիս նա դեպի  
իր ուսուցիչները, վկայում էին նրա սրտի աղնվությունը: Նա

Քր երախտագիտությունը ցույց էր տալիս դեպի ամեն մի բան, ինչ գերմանական անուն էր կրում. և երբ նա վերադարձավ իր հայրենիքը, ոչ մի բան չէր խնայում Կովկաս և Հայաստան այցելով գերմանացիներին օգտակար լինելու համար. Նա իր կյանքի նպատակն էր դարձել գերմանական քաղաքակրթությունն ու վեզուն վրացիների և հայերի մեջ տարածելը. Հարյուրից ավելի երիտասարդ ասիացիների այնտեղ էր հասցրել—երբ ես նրա հետ ժամնթաց 1844—որ նրանք թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով կարողանում էին գերմաններին լեզվով իրենց միտքն անսայթաք արտահայտել. Դորպատից վերադառնալուց հետո նա մի շարք տարիներ անցկացրեց Թիֆլիսում, որտեղ նա բացառապես իր երիտասարդ հայրենակեցների կրթությամբ էր զրադված: Սակայն նա չափազանց անձնվեր էր և ոչ-գործնական բնավորության տեր մարդ, որպեսզի հին սկզբունքը, թե՛ մշակն արժանի է իր վարձին՝ իր անձի վերաբերմամբ էլ գործադրեր: Հաճախ նա ընկնում էր զրամական նեղության մեջ, որը և նրա համար անվերջ թշվառության աղբյուր գարձավ: Միրզա-Նավազին մի անգամ շատ լավ նկատեց նրա մասին. «Արովյան ավալիննը արմենին դըր, քի արմենին յոխդըր» — մի խոսք, որը կրկնակի նշանակություն ունի, — Արովյանն առաջին հայն է, որ հայ չէ (այսինքն՝ ընչափազ և կաշառակեր մարդ), և Արովյանն առաջին հայն է, որովհետեւ Արովյանը հայ չէ (բառի վատ նշանակությամբ):

Արովյանը, որ այդ միջոցին մի գերմանունու հետ ամուսնացել էր, իր գորպատյան բարեկամների միջոցով ստացավ երեվանի գավառական գպլոցի տեսչի պաշտոնը, սակայն այնքան չնշին ոռնկով, որ այդքանով նա միայն ողորմելի ապրուստ կարող էր ունենալ:

Նա շատ աղնիվ էր և հարստանալու համար չէր կարող սովորական ճանապարհին դիմել. նրա բոլոր փորձերը՝ շահվել իր գիտական աշխատություններից՝ անհաջող անցան: Այսպես օրինակ, նա մեծ աշխատասիրությամբ և ժամանակ գործադրելով կտղմել էր այսօր մողովրդի բերանում կենդանի արգի հայերեն լեզվի քերականություն ու բառարան և ուղարկել էր Պետերբուրգ, այն հուսով, թե Գիտությանց ձեմ արանն իր հաշվով տպագրել կտա նրանք, իրեն էլ մի չափավոր օժանդակությամբ կիմրախուսե ապագա աշխատությանց մեջ: Նրա սպասածը չկատարվեց:

Արովյանի մտադրությունն էր — և նրա բոլոր աշխատու-

թյուններն այդ ծրագրի համեմատ էին կատարվում — հիմնել նոր հայկական գրականություն և այդ ճանապարհով իր հայրենակիցների կրթությունն ազգային հիմունքների վրա դնել: Արդեն առաջ նկատել եմ, որ հին հայերենը վաղուց արդեն մեռած է կամ գիտնականների լեզու է գարձած, որի մատենագրական հարուստ գանձերը, նույնիսկ երկրի մեջ, սակավ ընտրյալների է մատչելի: Աբովյանն ուզում էր այս զանձերից ամենալավը նոր հայերենի փոխադրել — պահելով հանդերձ հին տառերը — և այդ ապահով ու զյուրին միջոցով կրթություն տարածել իր հայրենակիցների շրջանում և նրանց մեջ գիտական հասկացողություն զարթեցնել: Չէ որ առաջ, հենց նույնիօկ ազգի զարգացած անձնագործություններ, սախալված են եղել ո. Գրքի հայերեն տառերով թյուրքերեն թարգմանությունը կարդալ, մինչեւ որ Դիտրիխի ո. Գիրքը նոր հայերենի թարգմանելու փորձով մասսմբ առնվեց չարիքի առաջը:

Իր ամենաընդունակ աշակերտների օգնությամբ՝ հին-հայերենից ու կրոպական լեզուներից թարգմանություններ անելով՝ Աբովյանը մի քանի տարում ժողովրդի ներկա պահանջներին գոհացուցիչ գրականություն ստեղծած կլիներ, եթե նրա ծրագրերն ի դերև հանած չլինեին:

Այն փոքրաթիվ տողերը, որոնք իմ հայ բարեկամի հիշատակին նվիրել էի ուզում, առանց դիտավորության, մի ամբողջ գլուխ գարձան: Ես չեմ կարծում՝ որ զրանով գերմանացի ընթերցողի մեջ դժկամակություն առաջ բերած լինեմ:

Աբովյանը, որն այնքան նպաստել է հեռու Արևելքում գերմանական անվան պատվին և ակնածությանը, արժանի է, որ իր սեփական անունն ել Գերմանիայում պատվի և ակնածության հասնի:

F. Bodenstdt, «Tausent und ein taq im Orient», «Lori », 1902, № 4.

# ԱՎԳՈՒՍՏ ՀԱՔՍՀԱՌԻԶԵՆ

Գեղմանացի գիտնական Ավգուստ Հաքստհառուղենը (1792—1866) ազրաբայցին հարցի նշանավոր հետազոտող է: 1843—1844 թ. թ. Ռուսաստանում կատարած իր ճանապարհորդության ժամանակ նա եղավ Անդրկովկասովմ և մասնավորապես Հայաստանում: Այդտեղ կատարած նրա հետազոտությունների արդյունքը հանդիսացավ «Անդրկովկասյան երկիր» երկիր երկնատոր աշխատությունը: Հայաստանի վերաբերյալ իր ուսումնասիրությունները Հաքստհառուղենը կատարել է Աբովյանի անմիջական մասնակցությամբ և մեծ մասամբ նրա հաղորդած տվյալների հիման վրա «Հայկական ժողովրդական հարաբերությունները գիտենալովս զիկավորապես նրան՝ [Աբովյանին] եմ պարտական», — գրում է Հաքստհառուղենն իր վիրոհիցայլ աշխատության մեջ: Այդ նույն «Անդրկովկասյան երկիր» ուսումնասիրությունից ենք քաղել Աբովյանի մասին այն հարուստ և հնատաքրքրական տեղեկությունները, որ մենք զետեղել ենք այստեղ:

Հաքստհառուղենի հիշողությունները հետաքրքրական են այն տեսակետից, որ նրանք տեղեկություններ են տալիս գերազանցապես Աբովյանի կլանքի ամենից անհայտ շրջանի և լուսաբանության կարոտ հարցերի մասին: Աբովյանի մասնկության, նրա հջմիածին գնալու, ձնողների, հեռավոր ու մոտիկ նախնիների, ընտանեկան սովորությունների և, գերջապես, նեղնակի ու յուրայինների փոխնարարերությունների վերաբերյալ Հաքստհառուղենի հաղորդած փաստերն սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, որովհետեւ այդ տեղեկությունների մեծ մասը հաղորդել է ինքը՝ Աբովյանը, իսկ մասամբ էլ նրանք արդյունք են Հաքստհառուղենի սեփական դիտողությունների: Գրքում նա քաղվածքաբար մեջ է բերել հատվածներ իրեն որամագրված՝ Աբովյանի ինքնակենագրական տետրից: Պարբուժից հետո, Հաքստհառուղենը կրոպացի դիտականներից երկուորդն է, որի հետ Աբովյանն այն աստիճանի մտերմություն է ունեցել, որ իր ընտանեկան կյանքի բոլոր ինտիմ կողմերը բաց է արել նրա առաջին հենց այդ պատճառով էլ Հաքստհառուղենի մեզ հաղորդած տեղեկությունները իիստ ուշագրավ են և միանգամայն վստահելի:

## ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Թիֆլիսում ես ծանոթացա հայ Աբովյանի հետ, որի մասին գեռ հաճախ կխոսվի, որովհետեւ հայկական ժողովրդական հարաբերությունները գիտենալովս նրան եմ պարտական։ Աբովյանը ծագում է ժառանգական հայ գյուղական տանուախրոջ ցեղից։

Աբովյանն ուզում էր կուսակրոն ձեռնադրվել։ Նա հայտնի էջմիածնի վանքի մոնթ էր, երբ ճանապարհորդ Պարբոտը պատրաստվում էր այնտեղից Աբարատի գլուխը բարձրանալ։ Սա մի իրազեկ տեղացի էր փնտում և առաջարկեց երիտասարդին իր ուղեկիցը դառնալ։ Նա շուտով նրա մեջ նշանավոր տաղանդ տեսավ և համոզեց Դորպատի գերմանական համալսարանը հաճախել։ Աբովյանը Դորպատ ուղեկորվեց և չորս տարվա ընթացքում բուլորովին յուրացրեց գերմանական համալսարանական կրթությունը։ Նա գերմաններն այնպես լավ է խոսում և գրում, որ ոչ ոք նրան օտարերկրացի չի համարիլ։ Նա ամուսնացավ գերմանուունը և իր տնտեսությունը բոլորովին գերմանական ձեռվ դրեց։

Ես օրվա միծ մասն անցըրի երևանի ջրային սիստեմը գիտելով; Ինձ ուղեկցում էր ոստիկանապետը, որն ինձ հարկավոր տեղեկություններ հաղորդելու համար հրամայեց մի քանի իրազեկ մարդ կանչել։ Հայտնի պ. Աբովյանն այդտեղ որպես թարգման էր ծառայում։

Օգոստոսի 25-ին, առավոտը վաղ, Աբովյանի հետ միասին ես այցելեցի Երևանի ամենաբարձր տեղում ընկած եկեղեցին և նրա մոտ գտնվող վանքը։ Այստեղից մի սքանչելի տեսարան է բացվում, որի կենտրոնն Աբարատն է։ Ես այնտեղ ամբողջ ժամանակը մինչև երեկո, անցըրի Աբովյանի հետ խոսելով, և այդու հաջորդ օրը նրանից հարուստ տեղեկություններ ստացա հայ ժողովրդի նիստ ու կացի, բարքերի, առանձնահատկությունների ու հակումների մասին և գրա մի ջոցով նրա ներքին կյանքը կարողացա շատ ավելի պարզ հասկանալ, քան եթե ամբողջ ամիսներ ապրեի նրա հետ։ Աբովյանը մեկն էր այն ազնիվ, բանիմաց

և արդարամիտ մարդկանցից, որոնց մենք կյանքում սակալ ենք պատահում: Շուտով գուշակելով, որ ես ընդհանրապես սիրով եմ աշխատում ուսումնասիրել ժողովուրդների կյանքը, նա ամենամեծ սրտաբացությամբ ամեն բան բացատրեց ինձ և նույնիսկ միքանի բաների վրա իմ առանձին ուշադրությունը դարձրեց: Որովհետեւ նա ինքը չորս տարի ապրել է Դորպատում, գերմանացիների շրջանում, ուստի նրա համար ինքնին պարզ էին դարձել երկու ժողովուրդների կյանքի ինչպես նման, այնպես էլ հակադիր գծերը: Բավական էր, որ ես նրան մեկ հարց տայի կամ հետաքրքրությունը շարժեի, և նրա մեջ վայրկենաբար մտքեր ու հիշողություններ էին արթնանում, որոնք նա խսկույն հաղորդում էր ինձ: Այդ բոլոր ժամանակ Աբովյանը լի էր վառ հայրենասիրությամբ գեպի իր հայրենիքը, այդ պատճառով էլ իմ բոլոր ստորև առաջ բերածներով ես նրան եմ պարտական, իսկ հիառ արդեն իմ զիտողություններին, որոնք դարձյալ մասամբ նրա հսկողության տակ եմ կատարել:

Ճաշից հետո մենք ձիով զնացինք Քանաքեռ գյուղը՝ որը երեանից հազիվ ժամ ու կեսվա ճանապարհի վրա է ընկած: Այսիդեղ է Աբովյանի ծննդավայրը, ուր ապրել են նրա մայրը, քույրերը և աղքականները: Որոշ հեռափորությունից այս գյուղն ավելի շուտ խիտ անտառի, քան մարդաբնակ տեղի է նմանում— այնքան նրա տներն ու բակերը բարձր ծառերով ու թփերով են շրջապատված և ծածկված: Այս փոքրիկ ավանն անապատում ընկած օազիսի է նման: Չուրջը հարթ բարձրություններ են, սարերն արտասովոր վայրենի ու դատարկ են. ամբողջ տարածության վրա, որ հայացքն ընդգրկել միայն կարող է, ոչ մի խոս չկա. սարերից միայն ժայռեր են երեսում, բարձրության վրա միայն փոքրած քարեր են, նման լավայի կտորների, և այս բուլորը՝ միատեսակ մութ~զորշ գույնի:


Այս գյուղում փողոցներն ըստ մեծի մասին նեղ են և երեանի փողոցների նման անցնում են երկարք քարե պատերի արանքով: Տները մեծ մասամբ շինված են քարե ցանկապատերի ներսում, նրանց գուներն ու պատուհանները երբեք գեպի փողոց չեն գույս դալիս:

Մենք ձիով գնում էինք գեպի Աբովյանի ծնողական տունը: Այդ տունը մյուսներից ավելի աղատ էր ընկած, նրան կից ընդդարձակ այգի կար՝ գեղեցիկ և հիանալի հատկության պատուիների ծառերով, այգու բույսերով և խաղողի թփերով: Հայերի մոտ

ամենուրեք փարթամ ծաղիկներ են: (Դարձյալ դեպի կը թությունն ունեցած մեծ հակումի նշան): Տանը մոտենալով, մենք ձիերից իջանք, և Աբովյանը մեզ տարավ այգին: Բուսականությունն այստեղ այնպիսի թարմություն ու փարթամություն ուներ, որպիսին կարող են տալ հարավային արեւ, ամեն ուղղությամբ իրար խաչաձևող առուների սիստեմով մշտական ոռոգումը և ամենապաղաքեր հողը: Այն ժամանակ, երբ մենք անցնում էինք խաղողի թփերի միջով, մեր առջևում երկու կին երևացին, որոնք, սակայն, վախեցած այծյամների պես խւկույն փախան: Տուն մտնելիս մեզ գիմավորեցին Աբովյանի հորեղբայրն ու եղբայրները և առաջնորդեցին դեպի մյուս բակը, իրենց հորեղբայր տղայի մոտ, ուր մենք սարքվեցինք բոլորովին տնավարի կերպով և մի փոքր ամրացրինք մեզ: Հետո անցանք ամբողջ գյուղով, որպեսզի ամեն ինչ մանըաման դիտենք:

Փանաֆեռ,—դա ներկայումս միայն հարուստ, փայլուն գյուղի մասցորդ է: Անցյալում այդտեղ 1390 տուն է եղել, իսկ այժմ միայն 72 է: Ես նրա փայլի, հարստության ու բնակչության բազմաթիվ լինելու մասին գաղափար կազմնեցի հետեւյալ փաստերով: Մինչեւ օրս հին հայկական սովորություն կա, ըստ որի Ավագ Ուրբաթ օրը բոլոր ամուսինները, որոնք պսակվել են այդ տարվա ընթացքում, եկեղեցի էին գալիս իրենց բարեկամների հետ, և այդպես, այն փայլուն ժամանակները երբեմն 30-ից ավելի երիտասարդ ամուսիններ էին գալիս բոլորն էլ ամենաշքեղ, փայլուն զինասարքով, արծաթակրունկ կոշիկներով: Բավարար նշան ընակիների փարթամության և բազմաթիվ լինելու: Բանաքեռի ծաղման մասին տեղական մի զրույց գոյություն ունի, թե բոլոր պատմական փաստաթղթերը, արտօնությունները, տոհմային վկայագրերը ոչչացված են 1825 թվականին, պարսկական վերջին պատերազմի ժամանակ, թե Աբովյանի նախահայրը, վեց սերունդ սրանից առաջ, թշնամիներից (լեզվիներից) նեղված, հյուսիսից, միայն հայտնի չէ, թե որտեղից, իր մարդկանցով ու հարեւաններով եղել է երևանի խանի (սարդարի) մոտ և խնդրել է նրա թույլավությունն ապրել այնտեղ, ուր այժմ Բանաքեռն է գտընվում: Այդ առաջնորդը կոչվելիս է եղել Աբով և ծագել է հին աղնվական տոհմից: բայց նրա ծագման և արտօնությունների մասին եղած փաստաթղթերը, ինչպես վերն ասված է, կորել են 1825 թվականին: Սակայն թիֆլիսում, Գարաբեյում և Լորգում մինչև այժմ էլ դեռ այդ անունով և նույն ծագումով ընտանիք-

ԱԿՍԵՏՈՐԻ ԱՎԱՐԱ ՎՐԱՐԱԴԱՏԱ



ներ գոյություն ունեն: Արովի որդին կոչվել է Վիրապ, իսկ այս վերջինիս տղան՝ նույնապես Արով: Այստեղից էլ բղխում է այս տոհմի ժառանգական իշխանությունը Քանաքեռ գյուղում, որը, սակայն, չի ունեցել ոչ մի կամածատիրական կամ ավատական իրավունք, այլ միայն ոստիկանական իշխանություն է ունեցել:

Պետք է կարծել, որ Քանաքեռը հենց սկզբից մեծ դյուղ չի եղել բայց երբ հարևան գյուղերը պատերազմներից ու թալան-ներից ամայացել են, նրանց ընակիչների մնացորդը Քանաքեռ է տեղափոխվել և նրանց հողամասերը մեծացրել են Քանաքեռի տարածությունը: Տեղազրության սքանչելիության և Երևանից հեռու չինելու շնորհիվ ամառ ժամանակ հարուստ մարդիկ այս-տեղ են փոխազրվել, այստեղ ընտակարաններ են վարձել, հողեր են գնել, այդինք գցել: Շատերի համար այս վայրը որպես ապաստարան է ծառայել: Բայց զրանից հետո, հենց ներկա հարյուրամյակում, ավելի է պատերազմներ տեղի ունեցան, և պարսկական վերջին կամպանիայի ժամանակ այս գյուղը համարյա բոլորովին ավերվեց:

Ես տարբեր բակեր գիտեցի իրենց բոլոր տնային ու տնտեսական գործանոցներով: Ամեն բանի մեջ չափազանց այլազանության ևս հանդիպում: Ըստ սովորության՝ հայկական բակն ընդգրկում է բազմաթիվ փոքրիկ շենքեր, որոնցից յուրաքանչյուրը որոշ նպատակի է հատկացված, հակառակ հյուսիսային-գերմանական տնտեսության հիմնական կանոնների, որոնց հետեւ աշխատում են ամեն բան մի հարկի տակ տեղափոքել:

Արովյանի տոհմական տան մուտքի մոտ մի բաց սրան էր գտնվում, որին հայերը, պարսիկները և թաթարները էվան են անվանում (ամենայն հավանականությամբ այս բառը թաթարական է): Այս սենյակում ամառ ժամանակ ամբողջ ընտանիքն է ապրում: Արա կողքին, ձախ կողմում, գտնվում էր ձախ սենյակը—օթախը: Այստեղ ցուրտ ժամանակ բաց գետին կրակ են անում, օջախ բոլորովին գոյություն չունի, իսկ ծուխն անցնում է տանիքում թողած փոքրիկ բացվածքով: Մեկ անկյունում և վերեւում երկու փոքրիկ պատուհաններ կային: Ինչողես արտաքին, այնպես էլ ներքին պատերը քարից էին, որոնց մեջ թե վերեւում, թե ներքեւում գոլքաներ էին շինված, ուր սովորաբար ամեն տեսակ իրեր են գրվում: Պատերին կախած էին երկու պարսկական նկարներ, որոնք պատկերացնում էիր Ռուսակեմի (պարսկական Հերկուլեսի) հերոսական սխրագործությունները: Բացի զրանից՝ այն-

տեղ մեկ փոքրիկ հայելի էր կախած, որ հայտնի էր դարձնում, թե երովական շքեղությունը կամաց-կամաց ներս էր սողոսկում նրանց մոտ: Տան մյուս մասում կանանց բաժինն էր, որը ես չտեսա: Տան աջ կողմում նկուղ էր շինված, որ հայերեն վառարան է կոչվում: Նկուղի կողքին փոքրիկ հացամբաբն էր, հետո հաց թխելու տեղը (հացատուն), հետո խոտածեղը (դարմանանց), և, վերջապես, տնահովության մեջ ամենակարենը—անասնաբակը, ուր առանձին բաժանմունք է բարձրանում, շրջապատված գալերեայով. սա կոչվում է սահման. այստեղ հաճախ, մանավանդ ձմեռը, կը բակի շուրջն են ժողովվում բոլոր տնեցիները, այստեղ են հավաքվում հարեւնները, հաճախ էլ օտարներ են ապրում: Որ ոչինար ունի, նա նրանց համար ըստ մեծի մասին դաշտում փարախ է շինում: Արովյանն ինձ տարավ իր փեսայի տունը:

Այստեղ առաջ բերենք Արովյանի երիտասարդ ժամանակի ընտանեկան կյանքից բնորոշ գծեր ու հիշողություններ, որոնք հաղորդվել են ինձ մասամբ զբավոր, մասամբ էլ բանավոր կերպով: Նրանք որոշ չափով կարող են լուսարանել հայկական ժողովրդական կյանքի բնույթը:

«Քանաքեռի բոլոր հին բնակիչները հակաբությամբ ու հարգանքով են հիշում Արովյանի՝ իրենց հետ ապրած նշանավոր պատմին: Բարձրահասակ, գեղեցիկ տղամարդ, հպարտ, բայց հաճելի կեցվածքով, ամեն տեսակ լավ բանի համար գործունյա, կարիքավորների համար գանձ, երջանիկ ամուսին և հայր, հարուստ, բայց վերին աստիճանի բարեգործ և հյուրասեր, նա մեծ հարգանք էր վայելում հայերից ու թաթարներից և նույնիսկ մեծագարմ պարսիկներից: Նա Երևանում արդյունաբերական գործանոց և խանութներ ուներ, որոնք վարձով էր տալիս, բայց դրանից՝ բավական հողային սեփականություն, մանավանդ գեղեցիկ այգիներ: Վերջիններից մեկը, որ գտնվում էր Թիֆլիսից Երևան տանող ճանապարհի վրա, մոտ կես մղոն տարածություն ուներ, այնտեղ տնկված էին ընկույզի աճաղին ծառեր, ինձորենիներ, բալենիներ, գեղձենիներ, ծիրանիներ, թթենիներ, վշտենիներ ու գեղեցիկ խաղողաթփեր և նշանակված էր օտարների օգտագործման ու բավականության համար: Նրա պահպանության և մշակության համար երեք թե չորս այգեպահներ էին նշանակված: Ամեն մի անցորդի թույլ էր տրված մանել, ուտել և ուղածի չափ ժետը տանել: Քամուց թափված պտուղները ժողովում էին զամբյուղները և դնում դուների մոտ՝ նրանց համար, ովքեր չգիտեին,

թե այդին բաց է ամենքի համար: Անցորդների և այգեպանների թողածները լեռնային գյուղերի հայերն ու թաթարներն էին տանում, որոնք համարյա պառղներ չունեին դաժան կլիմայի պատճառով, այս նրա համար, որ դժկամությամբ էին գործունեությամբ պարապում: Ամառը չգործադրված ձմեռային պտուղներն ու խաղողն առանձին ամբար էին ժողովում, որ բաց էր ամենքի համար: «Եյգուց այսպես աւատորեն օգտվելը, այս հյուրնկալությունն ամենալայն չափով՝ գոյություն ունի և այժմ, սակայն ծնողները գանգատվում են, որ իրենց միջոցները թույլ չեն տալիս այզու պահպանության համար մարդիկ պահել, և որ իրենք չեն կարող այն անել, ինչ որ պապն էր անում» (բառ առ բառ Արովյանի հիշողությունների գրքից): Այդ ժամանակ տունը միշտ լիքն էր լինում հյուրերով. քիչ կպատահեր, որ ճանապարհով անցնողը չի յուրընկալվեր:

Իմ բարեկամ Արովյանն սկզբում ծնողների կողմից նշանակված էր հոգեոր կոչման համար, Երբ նա տասը տարեկան դարձավ, հայրը նրան բերեց էջմիածին՝ կրթության և նախկին Դուռկաս պատրիարքին ներկայացնելու. վերջինս նրա հորն ասաց. «Հայրդ բարեկործ մարդ էր, և թե ես, թե իմ վանքն առատորեն վայելել ենք նրա բարեկործությունը. ուստի մեզ համար այժմ ուրախալի է այս երեխային ընդունելով՝ քո տանը փոքրիկ ծառայություն անել: Հետո երեխային օրհնելով, ասաց. «Միիթարվիր, զավակս, նրանով, որ հայրդ հիմա կհեռանա քեզանից, և մայրդ այլս քեզ իր հետ չի տեսնիլ: Սրանից հետո ես կլինեմ քո հայրը. մոտեցիր, գրկիր ինձ և ձեռքս համբուրիր»:

Արովյանի պապը մինչև այժմ ապրում է մի ամբողջ երկրի ծերունիների հիշողության մեջ: Արովյանը պատմում է, թե երբ ինքը գեռ երեխա էր, շատ հարգելի բարեկամներ երևանից դաւլիս էին այցելելու իր ծնողներին: Այգում, ծառերի ստվերում նստած, նրանք հյուրասիրվում ու զվարճանում էին, իսկ ինքն սպասավորում էր նրանց. մեկ էլ հանկարծ նրանք տիրում էին և ցույց տալիս այն տեղը, ուր հաճախ նստում էին պապի հետ և ուրախանում, զրուցում: Ռոպեական լոռությունից հետո նրանք ասում էին. «Եյնտեղ հաճախ նստում էր—երկու ձեռքով հարդարելով իր մորուքը—մեր սիրելի, հին բարեկամ Արովը, հանգիստ և ուրախ, և մենք բոլորում էինք նրա շուրջը: Հաճախ նա մեղ ասում էր—ես ունիմ ամեն բան, ինչ որ Տերը կարող է մեղավոր մարդուն տալ,—երեխաներ, հարստություն և բոլոր մերձավորների

աերը, դրա համար էլ ես այս այգին նվիրեցի ինեղձերին, որ բուցըն էլ կարողանան օգտվել և հաճույք զգալ: —Մենք գեռ տեսնում ենք նրան մեր առաջ, նրա բարձր, ազնվազարմ ֆիգուրը, ամենաբարակ մահուղե հագուստով, պարսկական թանկագին ոչխարենու գլխարկով, և մոշագույն մետաքս շալվարով: Նա միշտ գոտեորվում էր թանկագին շալով, որի մեջ կարճ դաշույն էր խրում: Մենք փայտե շամփուրներով խորոված էինք պատրաստում բաց կրակի վրա և հետո ուրախուրախ ուտում էինք միասին, վրայիցն էլ թարմացնող գինի էինք խմում: Նա իր իշխանության տակ ծով հարստություն ուներ, որը բոլորին համար անսպառ էր: Նա ու իր հարստությունն այլև գոյություն չունեն, իսկ դու, մեր բարեկամի բարի որդի, գիտցիր, որ քանի գեռ կանգուն է քո տունը և քանի գեռ օջախիդ կրակը չի մարել, մենք ձեզ պետք է սիրենք ու հարգենք, ինչպես հրամայում է մեզ մեր պարտքը:

Աբովյանն իր երիտասարդությունից մի գեղք ևս պատմեց ինձ, որ բավական լավ է բնորոշում այնտեղի ժողովրդի կյանքը:

Մեկ անգամ աշնանը մենք հավաքվել էինք մեկ գեղեցիկ այգում՝ պտուղները ժողովելու: Հայրս տանձի ծառը բարձրացավ, որ պտուղները պոկոտի, որոնցից արդեն ահազին քանակություն կար կիտված: Այդ ժամանակ այգին մեկ գերվիշ մտավ: Հայրս ուրախուրախ ողջունեց նրան ծառի վրայից և մեզ հրամայեց ակուտեղը լցնել ամենալավ տանձերով: հետո էլ գերվիշին ասաց, թե դրանք աշնան պարզեներն են, որ Տերն ուղարկում է մեզ: Բայց գերվիշը ոչ մի խոսքով չպատասխանեց, և մինչդեռ մենք զբաղված էինք պտուղները նրա սկսուեղում զարսելով, նա այնպես լուրջ ու լուր էր, և այնպես շեշտակի էր գետնին նայում, որ կարելի էր անշունչ արարածի տեղ ընդունել նրան: Մենք երկշատ կերպով մոտեցրինք նրան մեր ժողոված պտուղները, նա մկուտեղը վերցրեց և երկար ժամանակ անշարժ նայում էր նրան: հետո հանկարծ տանձերն այնպիսի ուժով գեն շպրտեց, որ նրանք բոլորը հետու գլորվեցին: Եվ այդ ժամանակ միայն կարելի էր մտածել, թե նրա լեզուն միայն անեծք ու հայնոյանք կարող է արտասանել: Անհաղթահարելի մաղձի և կատաղի հայնոյանքի հոսանք էր թափվում նրա շրթունքներից, որոնք վրփրոտել էին, դրա հետ էլ այնպիսի զզվելի ժամածոռություններ էր անում, որ մենք երեխաներս վախով գես ու գեն փախանք և հեռվում սպասում էինք, թե այս բոլորն ինչո՞վ է վերջանալու: Հետո, երբ վերջապես նա

մեղմացավ, սկսեց իր կոչմանը վայել ընծա պահանջել. Մինչդեռ  
հայրս բոլորովին հանգիստ կերպով ծառի վրա մնալով, նրան  
ասաց, թե ոչ միայն որևէ ընծա չի տալ այլք նրան այդուց բաց  
չի թողիր, մինչեւ բոլոր ցրած տանձերը մեկ-մեկ չժողովի և այս  
նվերի համար շնորհակալ չլինի, որովհետև նա իրավունք չունի  
աստծու պարզեն արհամարհելու: Այս պատասխանից գերվիշն ուղա-  
ղակի կատաղեց, ետ ու առաջ վազվեց քարեր փնտուելով, որ մեղ  
վրա գցի—«Դու, շուն, ինչպես ես համարձակվում այդպիսի բան  
ասել մահմեղական գերվիշն»: Հայրս ծառի վրայից նորից գար-  
ձավ գեպի նա, սկսեց հորդորել բայց իզուր, այդ ժամանակ նա  
բանվորներից մեկին հրամայեց տանց երկարաբանությունների  
բոնել հարգելի գերվիշն և ոլինդ կապել ծառին: Թշվառը սար-  
սափելի հայհոյանք էր թափում, երդում էր, թե հենց որ իրեն  
արձակեն, մեր ամբողջ տունը գժոխք կուղարիկի: Այն ժամանակ,  
երբ նա այսպես կապված էր ծառին և այնպիսի ուժով էր աշ-  
խատում ազատվել, կարծես ծառն ուղում էր արմատով հանել  
և ոտքով գետինն էր ծեծում, հայրս նորից սկսեց բարոյական  
համոզմունքներով հորդորել որ ուշքի գա. նորից հարցրեց, թե  
ուղիղ է ժողովել տանձերը և շնորհակալությամբ ու օրենանքով  
հեռանալ այդուց: Դերվիշը ոչ մի պատասխան չէր տալիս, միայն  
նրա շրթունքներն էին ծածկվել փրփուրով: Այդ ժամանակ հայրս  
հրամայեց կարգին ծեծել նրան: Այդպիսի բան երբեք չէր պա-  
տահել զերվիշն և նա մոլեկին չարությամբ ուղղում էր ինքն իրեն  
կոծուել: Հայրս հրամայեց մի փոքր սպասել և նորից հարցնել  
նրան, թե ուղիղ է արդյոք հնազանդվել և ուշքի գալ: Ոչ մի պա-  
տասխան. նա միայն օգնության էր կանչում բոլոր գժոխային  
ուժերին և սատանային, որոնցով սպառնում էր մեզ: Այդ ժա-  
մանակ երկու կողմից փայտի ավելի հաճախ ու ավելի ուժգին  
հարվածներ թափեցին նրա վրա: Վերջապես նա փափկեց ու  
ամենաահեղ ձայնով աղաղակեց. «Գթա, մեծ մարդ, կանեմ, ինչ որ  
հրամայես»: Մինչ այդ նրան ծանոթ չէր մեծությունը, այժմ հաս-  
կացավ նրան: Նրան արձակեցին, նա վերցրեց իր գլխարկն ու  
թիկնոցը, որ գայբույթով գեն էր գցել վրայից, հետո սկսեց ցրած  
տանձերը ժողովել. վերջապես բոլորովին հանգիստ կերպով նստեց  
ծառի տակ և սկսեց ինքն իրեն գատողություն անել. «Այս բոլոր  
տանջանքին ու խայտառակությանը ես իրավամբ արժանի եմ,  
որովհետեւ անշնորհակալ եղա գեպի աստծո պարզեները»: Ինքն  
իրեն երկար այսպիսի դատողություններ անելուց և ինչպես

հարկն է հանգստանալուց հետո, նա վեր կացավ, գլխարկը հանեց  
և ինչպես որ զբանից առաջ առատ հայոցանքներ էր թափել  
մեղ վրա, այնպես էլ այժմ առատ օրհնություններ թափեց մեղ  
վրա, զբա հետ միասին մեծագույն գովեստներ էր տալիս մեղ ու  
մեր տանը, հետո ամենաբարեկամբար հրաժեշտ տալով մեղ և  
հեռանալով, հորս ասաց. «Երբեք չեմ մոռանալ ձեզ, ազնիվ պարոն,  
թող ասաված օրհնի ձեղ, համարձակվում եմ խնդրել ձեր թույլ-  
ավությունը նորից այցելելու ձեր հյուրընկալ շեմքը»: Հայրս հա-  
ճույքով թույլ տվեց: Հետո նա զանազան ժամանակներ դալիս էր  
մեղ մոտ. շուտով սկսեց ավելի հաճախ գալ, քիչ չէր պատահում,  
որ օրերով մնար մեղ մոտ. և վերջապես մեր ամենալավ բարե-  
կամը դարձավ: Մեղ երեխաներիս հետ ևս նույնը պատահեց, ինչ  
որ պատահում է թուչունների հետ սիսեռի արտում զբած խրտվի-  
լակ տեսնելիս.—սկզբում երկշուր կերպով հեռու էինք մնում, հետո  
այնքան ընտելացանք նրան, որ մեղ համար տոն էր լինում, երբ  
նա դալիս էր մեղ. մոտ: Նա խաղում էր մեղ հետ և ամեն տեսակ  
խաղեր գիտեր: Երբ նա իր երկար, սրածայր, բրգաձև գլխարկը  
գլխին, գոմեշի պես ընկնում էր մեղ վրա, մենք ծիծաղից թուլա-  
նում էինք: Իսկապես նա բարի մարդ էր, միայն երբեմն շատ էր տա-  
րօրինակ ու ծիծաղելի: Որպես եղրակացություն, ևս Արովյանի  
կյանքից մի գիծ էլ կրերեմ, որ ինձ համար սրտառուչ բան էր.—  
Արովյանը, ինչպես վերն ասվեց, համարյա 10 տարեկան հասա-  
կում բերվեց էջմիածնի վանքը, որ այնտեղ պատրաստվի հոգեոր  
կոչման համար: Դեռ պատահի հասակում նա շարունակ պատ-  
րիարքի մոտ էր լինում, որ բոլոր հայերի աշքում ամենատրա-  
դան մարդն է համարվում և հարգվում է բոլոր աշխարհիկ իշ-  
խաններից ավելի: Այդ պատճառով էլ Արովյանի գիրքը յուրա-  
տեսակ հաճելի ու նախանձելի էր: Սակայն նրա մեջ ուրիշ ձըգ-  
տում էր թաքնված, և երբ ծանոթացավ ճանապարհորդ Պարբոտի  
հետ, կայծակի պես նրա մեջ այն միտքը վառվեց, թե երոպա-  
կան կրթությունը նրա համար անհրաժեշտ կենսական պա-  
հանջ է: Նա վճռեց Պարբոտին ուղեկցել եվրոպայում: Բայց այդ  
ժամանակ ամեն կողմից արգելվներ կուտակվեցին ու հարազատ-  
ները չէին ուղում այդքան հեռու թողնել: Վերջապես նա բոլոր  
արգելվները վերացրեց և ինքը՝ պատրիարք Եփրեմը նրան թույլ  
տվեց, և այն ժամանակ, երբ Արովյանը նրա առաջ ծնկաչոք,  
արտասուբներով, գեմքը թաքցրել էր նրա կրծքի վրա՝ պատ-  
կառելի ծերունին ասում էր նրան. «Հոգեպավակս, եթե զու ուղում

Աս ուխտազրութ դառնալ, մոռանալ մայրենի եկեղեցին և ինձ՝ քո այժմյան հորը, հրաժարվել քո ծնողներից, երկրից ու հավատքից, համոզված եղիր, որ կյանքում բախտավորություն չես գտնիլ: Եթե դու ուզում ես հեռանալ ինչ-որ առանձին պատճառներով, ասա ինձ, ես ամեն ինչ կսարքեմ: Ես քեզ հետ այնպիսի ծնողական քնքշությամբ եմ վարվել, որպիսի քնքշությամբ թուրիուն էր վարվում իր որդու հետ, որովհետեւ դու ևս ինձ համար այնպիսի որդի էիր: Բայց դու ուզում ես թողնել. ջահելությունն է գրավում գեղի այդ միտքը: Ասում ես, թե հայրենիքիդ օգտի համար ես գնում: Թող քո ցանկացածը լինի: Եթե օտար երկրում դու տանջվես կամ տիրես, պետք է ամեն բան խոնարհությամբ տանես և չգանգատվես ոչ Աստծոց, ոչ մեղնից: Եթե դու չես մոռանալ քո հայրենիքը, քո հավատը և այնպես կանես, ինչպես ասում ես—կվերադառնաս մեղ մոտ, մեր սիրելին կլինես, ինչպես մինչեւ այժմ էիր: Գուցե ինձ կենդանի չգտնես, այդ գեղքում գերեզմանս օրհնիր—այնտեղ պառկած կլինի իմ աճյունը. իսկ ես երկնքում կլսեմ քո խոսքերն ու կօրհնեմ քեզ»:

Արովյանը երբեք չէր մոռանում այս խրատը: Նա կրոպական-գերմանական կրթությունը յուրացրեց, մի բան, որ քիչ անգամ է հաջողվում ասիացուն, բայց և այնպես նա կապված էր իր ժառանգական հավատալիքներին և իր հայրենիքի անդպահան որդին մնաց:

Այս երկար շեղումից հետո, ես նորից վերադառնամ Քանաքեռում իմ մնալուն (օգոստոսի 25):

Արդեն երեկո էր, երբ ես ու Արովյանը թափառելով դյուզում ու նրա շրջակայքում, վերադարձանք նրա տոհմական սրահը: Մենք արդեն վերը նկարագրեցինք հայերի ընտանեկան ներքին կյանքը, իսկ նրանց արտաքին կյանքը, շատ էլ սուր կերպով չի դիպչում օտարականի աչքին, այլ աստիճանաբար է արտահայտվում անհյան երանգներով: Արովյանի վերադարձի ժամանակ տնեցիները հազիվ բարեկեցին, ոչ ձեռքի սեղմում, ոչ գրկախառնում, ոչ բարձրածայն ուրախություն. բայց այդ բոլորի փոխարեն նրա փոքր եղբայրները նրան ամենամեծ արտաքին հարգանք էին ցույց տալիս, նրա ներկայությամբ միշտ գլխարաց էին կանգնում, գլխարկները ձեռքներին. չէին նստում նույնիսկ այն ժամանակ, երբ նա ինքն էր հրավիրում: Երբ նա հանգում կամ հագնվում էր, հարսները նրան որպիս աղախին-ներ էին ծառայում և միշտ պատրաստ էին նրա բոլոր ցանկությունները գեմքից գուշակելու: Ընթրիքի պատրաստություն-

Ներ էին կատարվում: Սրահի բարձր տեղում, որը հետո պետք է քնելու համար որպես թախտ ծառայեր, սկզբում խսիրներ էին փովում, նրանց վրա՝ գորգ, և, վերջապես, սփռոց, որի վրա դրվում էին սկուտեղներն ուտելիքով. այս գեղքում ոչ պնակ-ներ կային, ոչ դանակներ, ոչ պատառաքաղներ: Մենք սկուտեղ-ների շուրջը նստում էինք արևելյան սովորությամբ—ծալապատիկ: Սկսելուց առաջ, ինչպես նաև ուտելուց հետո, Արովյանի հորեղբայրն աղոթում էր՝ սկզբում սնունդ ուղարկելու մասին, հետո՝ Հայր մեր, որի ժամանակ նա և բոլորը խաչակնքում էին: Ընթրիքը բաղկացած էր լինում աղ գրած մսից, փլավից, սոխից և կանաչից: Բոլորովին բարակ, հարթ, մեծ ցորնաբլիթները, որոնք կարելի էր փալասի պես ծալել և որոնք չորուկ էին կոչվում, որոշ չափով անձեռնոցիկի տեղ էին ծառայում, այլև նրա համար, որ հարմար լիներ ուտելիքները վերցնել, որոնք առանց այն էլ պետք էր սկուտեղից մատներով հանել: Մեղանից հետո ինձ, որպես երովացու, հայտնեցին, թե տեղական սովորություն է, որ ամենաջանել կինը, հյուրերի քննելուց առաջ, աղախնի օգնությամբ պետք է նրանց գլուխն ու ոտները տաք ջրով ու սապնով լվանա: Ես համաձայնեցի, որ գլուխս լվանա: Անսովոր գեղեցիկ կինը, որ գլուխս էր լվանում, իսկապես որ չափազանց փափուկ և արագաշարժ ձեռներ ուներ, նրանք շատ հաճելի և շատ քնքույշ կերպով էին խըսդում ինձ՝ մորուքս ու ականջներս լվանալիս: Զահել կանայք ամենից վերջինն անկողին մտան և այնուամենայնիվ առավոտյան ժամի 5-ին արդեն ոտքի վրա էին և սպասում էին մեր արթնանալուն, որ սպասարկեն մեզ: Ասենք՝ միայն ես և Արովյանն էինք քննել սրահի բարձրության վրա, իսկ տանտերը և մնացած ընտանիքը, ինչպես և այնտեղի ընտա-նիքների մեծ մասը, ամառը քնում էին այգում, ծառերի տակ, տան առաջ—փռած ծածկոցների վրա: Այդ ժամանակ աննման լուսնակ գիշեր էր: Լուսինն ինձ անչափ փոքր էր երեսւմ, քան հյուսիսում, բայց զրա հետ միասին շատ ալելի պայծառ և փայ-լուն, կարելի էր առանց գժվարության կարդալ տպածը: Ես աշխատում էի որքան կարելի է, ավելի ուշ քննել ամբողջ շրջապատն իսկապես որ հրապուրիչ էր.—բաց սրահ, հարավային գեղեցիկ ծառեր, հրաշալի երկինք, այգում հոսող առվի քչքչոց, բաց օդում քնողների խմբեր: Ես շուրջս ինձ անձանոթ ասիական մըթ-նոլորտի շունչն էի զգում:

А. Гакстгаязен, „Закавказский край“.

# ԿԱՐԼ ԿՈՒՆ

Գերմանացի նշանավոր բուսաբան-գենդրոլոգ (ծառաբան) Կարլ Կոխը (1809—1879) 1836—38 թ. թ. կատարած իր գիտական ուղևորությունների միջոցին եղավ նաև Կովկասում ու Հայաստանում։ Հենց այդ առիթով էլ տեղի ունեցավ նրա հանդիպումը Խաչատուր Աբովյանի հետ իր թողած մի քանի պարբերություններում նաև շոշափում է մի շատ կարևոր խնդիր՝ պաշտպահական շղանների՝ Աբովյանի նկատմամբ ցույց աված վերաբերմունքի խնդիրը։

Կարլ Կոխը Աբովյանին չափազանց բարձր գնահատելով որպես մանկավարժ, այդ ստվարեղում նրան եղակի մի անձ համարելով ողջ Անգրկովկասում, ցավի հայտնում, սակայն, որ նրան շրջապատում են անարժան մարդիկ, նեղության շինովիկներ, որոնք ոչ միայն չեն հասկանում ու գնահատում Աբովյանի բացառիկ արժանիքները, այլև խանգարում են նրան՝ իրագործելու իր բուռն ձգումները, իր աղնիվ ձեռնարկութները։ Այս կարևոր վկայությունը խիստ արժեքավոր է Աբովյանի ապրած արագեղիան հասկանալու համար։

K. Koch, „Wonderungen im Orient  
Während der Jahre 1843 und 1844”,  
Weimar, 1846—7

Հնարավոր է, որ այս կտմ այն հարցում նա շեղվում է ժողովրդական կրթության բնագավառում պետության նախագծած ուղիեց, քանի որ արտաքին ձևականությունը չէր գոհացնում նրա գեղի վեր սավառնող հոգին, հնարավոր է նաև, որ նա ևս ունեցել է զանազան սայթաքումներ, բայց, անկասկած, մինչեւ հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այնպիսի սիրով ու այնպիսի գոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Արովյանն է... Սակայն, դժբախտաբար, Արովյանին ցույց չեն տալիս արժանի վերաբերմունք: Զինովիևիների նեղարառությունը հաճախ ու շատ է խանգարում նրան առաջ տանելու իր ազնիվ և բուռն ձգտումները... Եթե Արովյանը, որպես երեանի գավառական դպրոցի տեսուչ, կարողանա մնալ իր գործունեության ներկա շրջանի մեջ, եթե նրան գործոն աջակցություն ցույց տան իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի է, որ երեանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մուացված, գարերով ոտնահարված հայ ժողովրդի համար:

# ՄԻ ԱՆՀԱՅՏ ՖՐԱՆՍԻԱՑԻ

Աբովյանի մասին բազմաթիվ կրոպացիների հայտնած կարծիքների մեջ իր բացառիկ տեղն ունի «Անհայտ Փրանսիացու կարծիքը», որ բերվում է ստորև։ Սա լավագույն բնութագիրն է Աբովյանի մասին, որ երբեկց կարելի է պատահել նրա վերաբերյալ եղած թե երոպական և թե հայկական աղբյուրներում։ Մի քանի սեղմ տողերի մեջ կենդանի կերպով գծադրվում է հսկայական կուլտուրայի, բազմազան ընդունակությունների և անսպաս եռանդքի տեղ մարդը, որին վիճակվել էր մի երկը կյանքում պատմական աննախընթաց զեր կատարելու, մի զեր, որ հիշեցնում է հունական դիցարանության մեջ հայտնի Պրոմեթեոսին։ Այս սքանչելի բնութագը ինդինակը թե երբ և որտեղ է պատահել Աբովյանին, հայտնի չէ։ Մենք այսքանը զիտենք միայն, որ Աբովյանի այս անհայտ բարեկամը միաժամանակ մոտիկ բարեկամ է եղել «Արևմուտք» լրագրի խմբագիր Ստեփան Ռսկանին, որին և մի նամակով հաղորդել է իր տպավորությունները հայ մեծ լուսավորչի մասին։ Աբովյանի կյանքին նվիրված հոդվածում Ստեփան Ռսկանը մեջ է բերում այդ տպագործությունները, առանց, սակայն, հիշատակելու հեղինակի անունը։

Աբովյանի հետ տեսնվեցա և իրավամբ զարմացա նրա հմտության վրա։ Գերմանական փիլիսոփայության և գրականության հայացքները նրան այնպես ծանոթ են, որ նույնիսկ երոպացին կարող է օգուտ ստանալ նրա կարծիքներից։ Շիլերին անգիր գիտե, Լեսինգի և Լայբնիցի գաղափարները հրաշալի կերպով յուրացրել է և իր ասիական երևակայությամբ նրանց նոր գույն է տվել։ Գերմաններեն խոսում է որպես գերմանացիանտարակույտ, այս մարդը պատիվ պիտի բերի հայ գրականությանը։ Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության։ հայի բերանն արձագանքում է այնպիսի գաղափարների, որոնք մեր մեջ դեռ նոր են տարածվում։ Շիլերի, Լեսինգի գրությունները հաստատվում և լսելի են գառնում Կովկասի լեռներում, երբ դեռ Եվրոպայում ժողովուրդ կա, որ այս հեղինակների անդամ չի լսել։ Զարմանալի բան պիտի լինի, եթե Ասիայի լուսավորությունը կովկասից սկսի, և Պրոմեթեոսի ժայռը տեսնի իր չարչարանքի արդյունքը։

(«Արևմուտք», 1859 թ., № 6)  
Արևելանայ լեզվի է վերածված մեր  
կողմէց։

# ԱՍԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ

Աբովյանի մասին եղած առաջին տպադիր հայ խոսքի հեղինակը ԱՄՈՒ-  
ՓԻԱՆՈՒ ՆԱՊԱՐՅԱՆՆ է: 1853 թ. լույս տեսած նրա «Հոգեղեն կերակուր հայ  
երեխաների համար» աշխարհաբար դասագրքում պատահում հնք հետեւյալ տո-  
ղերին. «Արժանի է հիշատակության Դորյան քաղաքը իմբախ գետի վրա  
11,000 բնակիչներով և անվանի համալսարանով: Այս քաղաքում էր յուր  
կրթությունը ստացել Խաչատուր Աբովյան երեխի Հայկագունը, որ ափսոս  
շուտով թառամեցավ յուր ազգի համար: Այս սեղմ տողերն ականափոր հրա-  
պարականոսի երախտագիտության առաջին տուրքն էր գաղ թառամած մեր-  
ձավոր բարեկամին, հոգեհարապատ ընկերոջ՝ Աբովյանին, ինչպես նաև այն  
քաղաքին ու համալսարանին, որտեղ նա ստացավ իր բարձրագույն կրթու-  
թյունը՝ դարձյալ նույն բարեկամի ներշնչումով ու գործոն աշակցությամբ  
Նազարյանը, սակայն, վերոհիշյալ մի քանի տողով չը սպառել իր ունեցած  
տեղեկությունները, իր ասելիքը Աբովյանի մասին: Եվ ահա, 5 տարի անց,  
1858 թվին «Հյուսիսափայլում» իբրև ծանոթություն Նալբանդյանի՝ Գեորգ  
Գեղամյանի հիշատակին նվիրած դամբանականի, լույս են տեսնում Նազա-  
րյանի հիշողություններն Աբովյանի մասին, որ այն ժամանակ իրավամբ  
տուածին քիչ թե շատ ամփոփ կենսագրությունն էր 10 տարի առաջ  
տացած և հասարակությանը անհայտ մնացած հեղինակի:


Աբովյանը և Նազարյանը հայ ժողովրդի մտավոր վերածնության գար-  
նան ավելաբը տվող առաջին ծիծենակները հանդիսացան: Մեր խավար իրա-  
կանության մեջ նրանք երազական լուսավորության առաջին ջանակիր-  
ներն էին:

Գեռու Ներսիսյան դպրոցում բանաստեղծ Հարություն Ալամդարյանի  
բարերար աղբեցությամբ, նրանց մոտ ուղարկված է ապագա գործունեու-  
թյան մի ծրագիր, որի բավանդակությունն ու ոգին կազմում էին մեր ժո-  
ղովրդի արգեն հրամայական դարձած պահանջները: Փրկել ժողովրդին իր  
անօդնական վիճակից, քաղաքական սորությունից և մտավոր խավարից, —  
այս էր ահա մեր պատահի հայրենասիրների սուրբ սեփառ:

Մեր հայրենասիր պատահիները բնության և խավարի գևայան տի-  
րապետության մեջ աճում ու զարգանում էին իբրև մի-մի ապատամբ պըսմե-  
թեռներ, նույն այդ խավարը կործանելու համար:

Թե որքն հաստատում էր Աբովյանի ու Նազարյանի մտերմությունը  
Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և թե այդ մտերմության հիմքում ձգտութերի  
ինչպիսի ներդաշնակցություն կար, երեսում է այն բանից, որ Աբովյանը Դոր-  
պատում և մոռացության չի տալիս Նազարյանին և ճանապարհներ է  
մտմտում ընկերոջն իր մոտ տանելու: Երբ մի անգամ Դորպատում խոսք է  
բացվում այն մասին, թե չկան արդյոք Հայաստանում իր նման ուսումնասիր

և ընդունակ ուրիշ պատանիներ, որոնց կարելի վիճեր Դորպատ բերել ուսանելու։ Արովյանն իսկույն Նազարյանի անունն է տալիս։ Այնունեաւ Աքովյանը դադար չի առնում և ընկերոջը, ինչպես Հ. Ալամդարյանին իր հորդորիչ նամակներով ղաղար չի տալիս, մինչև վերջապես իրագործում է նրա բուռն



### ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ

ժափազը, որը և իր փափազն Երևանու կարպատ մեկնելուց հետո Արովյանի մշտական մտահոգության առարկաներից մեկն էլ զառնում է սիրելով ընկերոջ Այութական ծանր վիճակը, որի համար նա սրտառուչ խոսքերով դիմումներ է անում Ներսես Աշտարակեցյան և ուրիշներին։

Թեև Դորպատը թողնելուց հետո Աքովյանը և Նազարյանն այլևս իրար չպատահեցին, բայց և այնպես նբանց բարեկամությունը չխզվեց, Կրտսեր մտերմական սերտ կապեր պահպանեցին մինչև վերջ՝ Նազարյանի մեջ հասած համակներից<sup>1</sup> պարզվում է, որ Աքովյանն իր կյանքի և զործունեության

<sup>1</sup> Նազարյանի՝ Աքովյանին ուղղած նամակները տես «Մուբե» 1904 թ.:

ամենածանր մոմենտներին, հուսահատության բովեներին նրան է դիմել, նըս  
հետ է բաժանել իր տանջալի խոհերը, իր թախծոտ հույղերը, և նազարյանի  
բարեկամական խորհուրդներով, հուսադրով խոսքերով ու հորդորներով է  
գոտեապնդվել: Ուրիշ հի կարող էր այն ժամանակ հասկանալ Արովյանի ապ-  
րած ողբերգությունը, էլ ում առաջ նա կարող էր վստահությամբ բաց անել  
իր սիրառը, եթե ոչ նազարյանի, որը շուտով պիտի ժառանգեր Արովյանի  
որոշ տրագիֆիաները և նրան խոցոտող տատասկյա պսակը:

Արովյանի և նազարյանի մեջ վառ արտահայտություն գտան անասելի  
ծանը պայմաններում ապրող մեր ժողովրդի լույսի և աղատության տենչերը-  
թեև այդ տենչերը նրանց մոտ հավասար ուժով ու հարազատությամբ չար-  
տահայտվեցին, թեև նազարյանին չհաջողվեց թափանցել մեր ժողովրդի մտքի  
և հոգու խորը ծալքերը, մի բան, որ Արովյանի մեծագույն առավելությունն  
էր, բայց և այնպէս նրանց ձգումների ու գործունեության մեջ եղած ընդ-  
հանուրն աշխատն նշանակալից է, որ այսօր մեզ համար միանգամայն հասկա-  
նալի է անցյալի մեր այդ երկու ականավոր գործիչների հարազատությունը-  
նրանց նամակագրություններից հայտնի է դառնում, որ Արովյանն իր  
«անձկալուն»՝ նազարյանին հայտառն էլ հրավիրում միատեղ գործելու, իսկ  
նազարյանը կամենում էր Արովյանին մասնակից գարձնել այն օրպերին, որ  
ինքը ծրագրում էր հրատարակել Թիֆլիսում: Այդ հարազատությանն ենք  
պարտական Արովյանի մասին նազարյանի թողած այն ջերմ էջերի համար,  
որոնք առել են գոել ուրիշ ժողովածուի մեջ:

Ինչպես վերը նկատեցինք, այդ հշողություններն Արովյանի առաջին  
ամբողջական կենսագրությունն է և հենց այդ պատճառով մի արժեքափոր  
գուական փաստ է: Սակայն արժեքափոր է այն ոչ միայն նրանով, որ որոշ  
փաստեր ու տեղիկություններ է պատճենակում մեզ սիրելի մի գործչի մասին,  
այլ գերազանցապես նրանով, որ ինդինական իրավագրած դեպքերն ու հան-  
գամանքները զիտե ոչ թե քըքերից ու արխիվային դոկումենտներից, այլ զի-  
տե որպես ժամանակակից, որպես նույն այդ հանգամանքների ու միջավայրի  
ծնուռը, որ ճաշակել է այդ միջավայրի թույնն ու լեզին Այդ է պատճառը,  
որ նազարյանին հաջողվել է վառ պատկերացում ստեղծել այն մղձավանջա-  
յին միջավայրի մասին, որտեղ անցան Արովյանի տառապագին գործունեու-  
թյան տարիները, հացցնելով նրան՝ նազարյանի բառերով ասած՝ «Խավար  
հուսահատության», որից նա ելք գտավ և մի խավար բովեի մեջ մահու տալով  
յուր անձը:

Գետք է նկատեր, որ նազարյանի հիշողությունները զերծ չեն որոշ  
փաստական անձառնություններից.

ա) Ներսիսյան գպրոցը, ըստ նազարյանի վկայության՝ բացվել է  
1823 թվին, մինչեւ այդ տեղի է ունեցել 1824 թ. գեկտեմբերին.

բ) Արովյանը ներսիսյան գպրոցը թողել է 1826 թվին և ոչ 1828-ին,  
ինչպես կարծում է նազարյանը.

գ) Արովյանը Դորպատից վերադարձել է ոչ թե 1835 թվին, ինչպես  
ասում է նազարյանը, այլ 1836 թվին:

Այս արժանավոր, մեծ ազգասիր Հայը, որդի իշխանապատիկ Ապովի Վիրապյան, Քանաքեռ դյուլից, ուրաբակիր սարկավագ էջմիածնու վանքի Եփրեմ կաթողիկոսի օրերումը, յուր առաջին գաստիարակութենից հետո էջմիածնու խցերի մեջ, յուր հոգաբարձու Անտոն եպիսկոպոսի հետ գալիս է Հաղպատ. Այստեղից տեղափոխվելով հետո դեպի Թիֆլիդ, հանձնվում է Ղարաբաղցի Պողոս վարդապետին, որ սկսյալ մոտ 1820 թվակ. Թիֆլիզի Տափիթաղի վանքումը յուր խցի մեջ ուսուցանում էր աշակերտներ. Ապովյանը, ինչպես որ մյուս հայազգի պատանյակքը, որոնց մինն էր և այս բառերի գրողը, աշխատում էր օր ու ցերեկ գլուխ ջարդելով Զամչյանի քերականության, Ագոնց Ստեփանոսի ճարտասանության և Թեսավրոսի վերա. Պողոս վարդապետը կարող էր միայն մեքենաբար ուսուցանել առանց կենդանացնելու յուր գաստավությունքը հին, մեռյալ հայկաբանության մասին, որ միայնակ ուսանելիքն էր նորա երկաթի վարժապետական գավազանի տակ. և պիտո է ասել, որ այդ վարժապետը ավելի ծեծ քան թե ուսումն է տվել յուր աշակերտներին. այսպես էր այն ժամանակի հայկական ուսումն, և այս բանի մեջ մեղավոր չէ Պողոս վարդապետը, այլ նորա կոպիտ ու խավարժամանակը. և անցած օրերը չափել ու կշռել մեր այժմյան—փառք աստուծո—հառաջաղեմ և բանական օրերի կշռով, ի հարկե անտեղի բան է. 1823 թվականին Ներսիսյան դպրոցը բացվելով և Մոսկվայից հրավիրված Հարություն Ալամդարյանց քահանայի գործակցությամբ փոխվելով Հայոց գավակների դաստիարակության եղանակը Թիֆլիզի մեջ, Պարոն Ապովյանը և նորա աշակերտակիցքս տեղափոխվեցանք նորաշեն ուսումնարանի մեջ, ուր բացի մի կտոր հայերենից կարելի էր ուսանել փոքր ի շատե ուսուերեն, պարսկերեն, վերջումը և Փրանսիարեն, երբ որ Հակոբ Շահանյան Զրպետը հոգաբարձությամբ Ներսես վիճակավոր արքեպիսկոպոսի բերել էր արված Փարիզից. Ապովյանը ուսանելով այստեղ մինչեւ 1828 թ. և լինելով չափահաս աշակերտներից մինը գուցե և ավելի մտախոհը յուր ընկերների մեջ, նշա-

նավոր էր մանավանդ թե յուր շատ զորավոր հիշողությամբ։ Ապովյանը մի մեծ ուսումն գուրս չտարավ Ներսիսյան ուսումնարանից (ինչպես ոչ ոք մեղանից), և անկարելի էր այդ բանը այն վայրիվերո, չքավոր ուսումնատվության մեջ. բայց պիտո է ասել արդարությամբ, որ մի քանի կենդանի սերմեր, մի ազնիվ ձգողություն դեպի ուսումն հառաջացան այդ ուսումնարանից մի քանի մասնավորների մեջ։ Եվ Ապովյանը հրաժարվելով Թիֆլիսից դեպի Էջմիածին, տարավ յուր սրտի մեջ մի վառ ուսումնասիրության կրակ ինչքան սակավ կարողացել էր ուսումնարան տալ նորան, այնքան ևս կարոտ ու սոված սրտով դուրս գնաց նա։ Խորհրդավոր դրություն։ Ապովյանի ուսումնասիրության կրակը շուտով կշիշաներ արդարե, եթե մնացած լիներ ասիական խեղդանյությա ատմոսֆերայի (օդապատի) մեջ. բայց նորա բաղդը այլապես էր կամեցած։ Եվ Ապովյանը քնած չմնաց, երբ որ բաղդը եկել էր զարկելու նորա դուռը։ Դորակատյան համալսարանի ուսուցչապետ Պարբուտի գալուստը Հայաստան, 1829 թվականին, բայցի նորա ուսումնական ճանապարհորդության նպատակից, որ էր քննել և հայտնի կացուցանել Մասիս սարի որպիսությունքը և գիտության արժանի հատկությունքը, շատ արժանահիշատակ իրողություն էր, եթե միտ գնենք դորա հետևանքներին մեր Հայոց լուսավորության համար։ Պարբուտը լինելով Էջմիածնի հողի վերա, ծանոթանում է Ապովյանի հետ և նկատելով նորա խոհականությունը, ընտրում է նորան որպես հայ տեղացի, յուր դեպի Մասիս սարի կատարը բարձրանալու ճանապարհորդակից։ Ապովյանը մոտենալով Եվրոպացի բանագետ առարկականին, և այդպես պողովատը զարկվելով ու տրորվելով գայլախաղի վերա, դուրս է թոշում կայձը, որ պիտո էր միայն կերակուր տալով սնուցանել։ Ապովյանը հայտնում է Պարբուտին, թե կամի աշակերտի կրոպական ուսման, բայց չունի գորա հարկավոր նյութական ճանապարհը։ Օտարական Պարբուտը, բայց մարդկության ընտանի ու բարեկամ Պարբուտը, հանձնառու է լինում հոգալ Ապովյանի դաստիարակության ծախքը Դորակատի մեջ. և վերագառնալով դեպի Պետերբուրգ, բարեխոս է լինում լուսավորության նախարար պայծառափայլ Լիլինի առաջեւ Ապովյանի համար, և թագավորության գանձարանից ստանում է Ապովյանը երեք տարու ապրուստ և ճանապարհի ծախք, որ գա ուսանի Դորակատումը և վերագառնա դեպի յուր հայրենիքը։ Ճշմարիտ, Ապովյանի ուսումնառության հասակը անցած էր և

դժվար էր նորան ամենեին փոխարինել յուր կորուստը. բայց  
պիտո է ասել, թե նորա երեք տարու կեցությունը, ուսումը և  
նկատողությունքը Դորպատյան գիտուն և բարեհիտ մարդերի  
մեջ, մի նոր իմացական մկրտության ավաղան դարձավ նորա  
հոգու համար, և վերստին ծնավ նորան: Այն ընդհանուր կրթու-  
թյունը, այն ազգասիրական հոգին, այն անօրինակ սերը զեպի  
Հայոց մանկունքը, այն առաքինի հոգին, որ նա դուրս տարավ  
յուր հետ Դորպատից, 1835-ին վերադառնալով զեպի Հայաստան,  
մի այնպիսի վաստակ էր, որ կարող էր միայն վաստակել Ապո-  
վյանի պես ազնիվ տղամարդը: Ուսումնական բազմահայաց կրթու-  
թյուն չստացավ նա Դորպատումը, բայց ուսավ ճանաչել յուր  
անձը, սիրել յուր ազգը և աշխատել նորա զավակների կրթու-  
թյան վերա, որպես քաջ դաստիրակ, որպես սիրող ուսուցիչ,  
որպես քաղցր խնամակալ ու հայր և բարեկամ յուր աշակերտ-  
ների համար: Ափսոն միայն, որ մեր ազգը չկարողացավ գնահա-  
տել մի այդպիսի արժանավոր, շատ պիտանի մարդ. ցավելի, որ  
ազգի իշխանքը, մանավանդ թե հոգեորների կարգից, որովհետեւ  
գոցա վերա միշտ ավելի մեծ պարտականություն կա, ըստ որում  
ավելի մեծ են և գոցա իրավունքը, պարզ ասեմ, շատ ցավելի է,  
որ Ներսես Կաթողիկոսի պես մարդը, չկարողացավ կամ թե չկա-  
մեցավ այնպիսի զրություն տալ Ապովյանին, որ սա յուր ազգին  
պիտանի կացուցաներ յուր անձը բոլորամասն չափով, այնքան,  
ինչքան կարող էր, Պատվական Ապովյանը Թիֆլիզից երևան,  
Երևանից Թիֆլիզ տարուբերվելով, անվերջ հալածանքի և տհա-  
ռությունների մեջ, հուսկ հետո անձնատուր է լինում մի խավար  
հուսահատության, և հանկարծ չքանում է յուր ընտանիքի և  
բարեկամների միջից, բայց թե ուր, ոչ ոք չկիտե մինչև այժմ:  
Միտ գնելով նորա տրտում և հուսակտուր երգերին, որ մեր բա-  
րեկամներից մինը ուզարկել էր ինձ Թիֆլիզից, պիտի է եղաւ-  
փակել, որ Ապովյանը մի խավար ըոպեի մեջ մահու է տվել յուր  
անձը: Հայոց Հելիոնի վերա դարնիբ չեն բուսանում արժանի  
գլուխ համար, բայց փույթ չէ. Ապովյանը, ազգի մեծ բարերարը,  
թեև վաղուց արդեն մոռացված յուր Հայրենիքումը, այնուամե-  
նայնիվ փառավորվում է և պիտի միշտ փառավորվի արդարա-  
գատ Եվրոպական մարդկության պատմագրքի մեջ:

# ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Այս, ինչ այստեղ գնում ենք իբրև նալբանդյանի հուշերը Արովյանի ժաման, իրականում դա Արովյանի նախկին առն Գեորգ Գեղամյանի հուշերն են, որ վերապատմել է նալբանդյանը: Նալբանդյանը Արովյանին երեխը չի հանդիպել և նրա գործունեության մասին իմացել է, անշուշտ, եղած ըստավոր զրույցներից, որ տարածում էին նրա երախտագետ աշակերտները, ինչպես, հավանորեն, նաև Ստեփանոս Նաղարյանը Անհավանական չէ, որ նալբանդյանը, նազարյանի շնորհիվ, տեղյակ լիներ նաև «Վեհրք Հայաստանի»-ի մասին: Վերջինս այդ գործին ծանոթացել է Գեորգ Արիմյանի միջոցով, որը, ինչպես հայտնի է, «Վեհրք Հայաստանի»-ի արտագրած օրինակը հասցընել էր մինչև Դորովատ: Գեորգ Գեղամյանի մանվան առթիվ գրած դամբանականի՝ Արովյանին վերաբերող այս հատվածը հետաքրքրական է մի քանի կորմով: Նամի՞ այն գաղափար է տալիս մեր լուսավորչի ապրած մի տրագիկ դեպքի մասին ինչպես հայտնի է, ամեն կողմից հալածված և ամենքից մերժված Արովյանը «ուրոշ հույսեր էր կապում հայրապետական աթոսին ըստմած ներսունս Աշտարակեցու հետ հուշերից պարզվում է, որ այդ հույսերն ինքը՝ կաթողիկոսն էր ներշնչուու Սակայն շուտով Արովյանն առիթ է ունենում ներսունքից ևս հուսախարդիելու Կաթողիկոսը զրժում է մի տարի առաջ արած իր խոսառումը Արովյանի աշակերտներից աչքի ընկնող ընդունակներին Գերմանիա՝ բարձրագույն կրթության ուղարկելու մասին: Այդ հուսախարդությունն առավել ծանր էր այն պատճառով, որ Արովյանի համար այլևս չէր մնում ոչ մի հույս, գալիքի ոչ մի հեռանկար:

Կարգարով այդ հուշերը, ընթերցողի առաջ կանգնում է, մի կողմից՝ իր սաների և իր ողջ ժողովրդի կրթության ու լուսավորության հոգսերով վառված ու կրակված նշարիա ժողովրդասերը, մյուս կողմից՝ ժողովրդի լուսավորության գործի համար մտածերու ժամանակ չգտնող սակայն իր ժամանակն անիմաստ, անվերջանալի վեճերի ու խռովությունների մեջ վատնող ժողովրդի հոգմուր հովիվը: Ահա թե ինչու նալբանդյանը պիտի զառնությամբ բացականչեր՝ «ով վատարախտություն ազգիսա...»

Արովյանի կյանքի այս տրագիկ պատճության մեջ նալբանդյանը տեսնում էր իրեն, հիշում իր ապրած ողբերգությունը միենույն մարդու պատճառով, իր կրած հալածանքները նույն այդ մարդուց՝ ներսու Աշտարակեցուց: Եվ հենց զրա մեջ է այս հուշերի մյուս արժեքը: Հասկանալի է, որ հանձին Արովյանի նալբանդյանը տեսնում էր իր մեծ նախորդին, իր զաղափարների առաջին աղղարարողին և հանուն այդ վեհ գաղափարների հայ ժողովրդի զոհանեղանի ողջակեղին: Նալբանդյանն իր հոգվածներից մեկում Արովյանին անվանում է «նահատակ», նահատակ հանուն ժողովրդի երջանկության, նրա լուսավոր ապագայի: Հենց այդ պատճառով էլ Արովյանի զեմքը նալբանդյա-

Նին երեսում է պայծառ լուսապսակի մեջ։ Պատահական չէ, որ Աքովյանի անունը մոռացությունից հանելու պատվավոր գործն իր վրա վերցրեց «Հյուսափայլ»-ը։ Աբովյանի և Նալբանդյանի հարաբերության հարցը չի սպառվում միայն սույն հուշերով։ Նալբանդյանն է հանդիսանում Աբովյանի «Վերը



### ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայաստանի»-ի առաջին ճիշտ մեկնարանողը և բարձր գնահատողը։ Թեև նա առանձին ուսումնասիրություն չի նվիրել այդ գործին, սակայն այն ամենը, ինչ նա գրել է «Վերը Հայաստանի»-ի մասին այլեալլ կապակցություններով, մերթ իբրև ձեռագիր-դիտողություն «Վերը Հայաստանի»-ի սեփական օրինակե վրա, մերթ իբրև ծանոթություն և այլն, հիմք են տալիս պնդելու, որ մեր գրականության մեջ այդ գործի խաղացած դերի առաջին ճիշտ գնահատականը ավել է Նալբանդյանը։

Գևորգ Գեղամյանցը, ինչպես վկայում է նորա ծննդաբառանական թուղթը, Կայսերական Համալսարանի դիվանատան մեջ ծնած է 1831 թվականին:

Յուր սկզբնական կրթությունը ստացավ նա Երևան քաղաքում, երեելի Հայկաղն Խաչատուր Ապովյանի ձեռքով, որ, 1835 թվականին վերադարձած Դորպատյան ճոխ և պայծառ համալսարանից, աշխատում էր, որքան հնար ուներ, վառել հայերի սրտի մեջ լուսավորության և ուսման եւանդը, որով, ինչպես ամենայն աղնվամիտ բանագետ մարդ, հույս ուներ ջերմացնել այն սառնությունը և պաղությունը, որով պաղած էին հայերը առհասարակ: Հանդուցյալը քանի մի տարի ուսանելով հիշյալ Ապովյանի մոտ հայերեն, ուսւերեն, գերմաներեն և թվաբանություն, և մեծ հույսեր տալով յուր պատգա հառաջաղիմութենից, այնպես գրավել էր յուր դաստիարակի աշխույժ և կրտակոտ աղգասեր սիրտը, որ Ապովյանը աշխատում էր նորա վերա, որպես յուր հարազատ զավակի վերա:

1846 թվականին, մինչդեռ Ներսես արքեպիսկոպոսը ստանալով կաթողիկոսական գավազան, վերադառնում էր Բիսարաբիայից գեղի Եջմիածին, Ապովյանը յուր հառաջաղեմ աշակերտների հետ միասին, որոնց մեջ կար և հանգուցյալը, Երևանից մի իջևան տեղ հառաջ գնաց կաթողիկոսին: Սա հանդիպեցավ Ապովյանին և խոսելով նորա ուսումնական գործունեության վերա, հարց էր արել, թե ունի՞ արդյոք հառաջաղեմ աշակերտներ, երբ լսել էր Ապովյանի ստորասական պատասխանը այդ մասին, խոստացել էր կաթողիկոսը այդ հառաջաղեմ աշակերտներից տասն տղա ուղարկել Բեռլին, որ այնտեղ պարապեկին զանազան ուսման ճյուղերի: Ապովյանի ուրախությունը չափով չէր չափվում:

Անցան այն բանի վերայով մի քանի ամիսներ, Ապովյանը չէր գաղաքում ամենայն խնամատարությամբ կրթել և վարժել յուր աշակերտքը գերմանական լեզվի մեջ, քարոզելով նոցա, թե այդ լեզվուն մանավանդ լինելու էր նոցա համար բանալի մի այնպիսի լուսավոր տաճարի, որի լույսը բավական էր ցըմել Հայաստանի ասիական թանձր խավարը:

Անցանում են սորա վերա մի քանի ամիս. և կաթողիկոսը արդեն օծված ու նստած լինելով հայրապետական աթոռը, Ապովայանը դիմում է գեղի նա խնդրելով որոշել ժամանակը, երբ կամք էր վեհափառ տիրոջը աշակերտքը Բեռլին ուղարկելու, որպեսզի Ապովյանը կարողանա այդ միջոցին պատրաստել յուրաշակերտքը: Կաթողիկոսը ցույց է տալիս մեծ հոժարություն, գովում է և օրհնում է Ապովյանին և խոստանում է կատարել նորա խնդիրը, մանավանդ թե յուր հայրապետական խոստմունքը, միայն թե փոքր ինչ թեթևանար յուր գործերից: Ապովյանը քաջալերություն ստանալով այն կրկին անգամ խոստմունքից, ևս առավել լարում է յուր և աշակերտների զորությունքը, մեծապես աշխատելով և աշխատացնելով նորանց գերմանական լեզվի վերա:

Անցանում է համարյա թե մի տարի ժամանակ. Ապովյանը, մանավանդ որպես աշխույժ և ջերմ բնավորությամբ մարդ, վերջապես հուսահատվում է տեսանելով յուր աշակերտների անորոշվիճակը. հավանում է էջմիածին գնալ Երևանից, կաթողիկոսի վճռական խոսքը լսելու համար:

Բայց ով վատարադդության ազգիս. կաթողիկոսը ժամանակ չունի մտածելու աղջային լուսավորության վերա, նորա ձեռքը պարապած չէ զանազան վիճակային գործերի մասին յուր հատուկ ձեռքով կոնդակներ գրելուց այս և այն գործակալին. վեհափառ տերը ժամանակ չունի ուշ և միտք զարձուցանել Հայոց ազգի նախապատիվ հոգալի օգտի վերա, նորա թանգագին զավակների իմացական բարօրության վերա:

Վրաստանի և Հաշտարխանի թեմակալ Կարապետ և Սերովեարքեպիսկոպոնների հետ հարուցել էր կաթողիկոսը անվերջանալի վեճ և խոռվություն, որ ոչինչ խորհուրդ չունեին վերաբերությամբ դեղի Հայոց ազգային օգուտը և եկեղեցու պայծառությունը:

Այս իրողությունների մեջ ահա ժամանում է Ապովյանը էջմիածին. բայց ինչպես պատմում էր հանգուցյալը, Ապովյանը մինչև Փարաքար գեղը, որ գտանվում է Երևանի և էջմիածնի մեջ՝ ունեցել է սրտումը մի հաջողության հույս, իսկ որքան մոտենում է Մայրականքին, այնքան ևս զորանում է երկմատությունը նորա մեջ, նորա հոգին գուշակում է գալոց անհաջողությունը: Շատ մեծ է անկեղծ և առաքինի հոգիների բնական ազգեցությունը:

Այս անգամ շատ սառն կերպով ընդունում է նորան կա-

Թողիկոսը, որպես երբեք չէր ընդունած, և Ապովյանի հարցմունքին, թե վեհափառ տեր, ինչպես է ձեր կամեցողությունը ուղարկելի աշակերտների մասին. պատասխանում է կաթողիկոսը. «օրհնած, ինչ անհանգիստ մարդ ես. քեզ մի բան ասացին, այլևս ձեռք չես վեր առնում դուք. Այս տխուր խորհրդավոր խոսքերը կաթողիկոսի բերանից, որպես թե մուրճի զարկով մի վայրկյանի մեջ փորեցին ու քանդեցին Ապովյանի. հույսերի հիմքը, որոնց ավերակքը լվացվեցան հետո առաքինի հոդու ազգասիրական արտասուբքի հեղեղով:

«Վարժապետ, ինչ լուր, ինչ համբավ», հանդեպ են դուրս դալիս աշակերտքը, որոնց մեջ գտանվում էր մեր հանգուցյալը. այս անմեղ մանուկների սիրտ կտրատող հարցմունքի պատասխանը լինում է Ապովյանի գեմքի տխուր գծագրությունը և արտասուբքը, որ փայլում են նորա աչքերում: Այն օրը սուրբ օր է եղած և վարժապետի և աշակերտների համար. Մյուս օրից արդեն ուսման ընթացքը ընդունում է այլ ուղղություն, ռուսերեն, երեխայք, ռուսերեն», ասում է այնուհետև Ապովյանը. «դուք ինքներդ պիտի բանաք ձեր ճանապարհը»:

Ահա այսպիսի հանգամանքների մեջ պատրաստվում է մեր հանգուցյալը մտանել Թիֆլիզի արքունական նեմարանը (գիմնազիա): Բայց այս բանի մեջ հանգուցյալ Գեղամյանցի հորեղբայրը, ինչպես լսած ենք նորա բերանից, շատ ընդդիմություն է ցույց տալիս: Տիկին Գեղամյանցը, այսինքն հանգուցելու մայրը, չուներ այնքան արծաթ, որ հոգար յուր որդու ընակության, կերպի, զգեստի, և այլ հարկավոր պիտույքը: Ինչ ճար գտանել սորա համար. Ապովյանցը տեսանում էր ուսման հանդիսում մեծ հառաջադիմություն հանգուցելու մեջ. նորա ժրաշան աշխատությունը շատ բան էր խոստանում ապագայումը:

Մի կողմից արծաթի պակասությունը, մյուս կողմից հանգուցելու հորեղբոր ընդդիմությունը արգելք էին լինում պատասխամայնցի Թիֆլիզ ուղարկվելուն: Նորա հորեղբայրը ստիպանքով առել էր նորա մոր հավանությունը, որ նորա որդին ծառայե քաղաքական Պոլիցիայի մեջ, որպես պարզագեր. և ահա մանուկ Գեղամյանցը երևում է Պոլիցիայի մեջ:

Բայց այս ծառայությունը չէր կարող զովացնել նորա հոգեկան ծարավը. այս պատճառով, մոր գիտությամբ և Ապովյանի օդականությամբ, յուր հորեղբորից թաքուն ուղարկվեցավ Թիֆլիզ, ուր Ապովյանի բարեխոսական նամակի հիման վերա, ընդունվեց

յուր ինսամարկության տակ, այժմ հանգուցյալ Դավիթ Թամամա-  
շյանը: Այստեղ մտավ նա գավառական ճեմարանը, ուր ամենայն  
ժրաշանությամբ աշխատելով գրավեց բոլոր վարժապետների և  
կառավարիչների ուշադրությունը:

«Հյուսիսական», 1858 թ., էջ 144—148.

# ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ


Աբովյանի նկատմամբ մեր հեղինակներից շատերն են իրենց համապահանքը, սերն ու հիացմունքը հայտնել բայց նրանցից և ոչ մեկն այնպիսի ջերմությամբ, ակնածանքով ու երախտադիտությամբ չի հիշել մեր նոր գրականության նախահորը, ինչպես Պռոշյանը, ինչպես և ոչ ոք իրեն այնքան երախտապարտ չի զգացել նրա հանդեպ, որքան զարձյալ Պռոշյանը:

Աբովյանին Պռոշյանը տեսել է մեկ անդամ միայն, և այն իր 8—9 տարեկան հասակում, սակայն գեղքըն այնքան խորն է տպավորվել տաղանդավոր պատանու հիշողության մեջ, որ հետագայում նա մի քանի անդամ անդրադարձել է այդ պատմությանը: Պռոշյանի և Աբովյանի հանդիպումը տեղի ունեցավ այն ժամանակի երբ վերջինս, որպես երեսնի գալառական դպրոցի տեսուչ, այցելեց Աշտարակի զպրոցը: Աբովյանն ընդումենը երեք օր մաս այնուղի բայց մինչ այդ չլսած ու չտեսնված բարեհորոշումներ մտցրեց խալիքայական այդ դպրոցում: Ամենասանսուլորն ու զարմանալին, սակայն, աշակերտների նկատմամբ Աբովյանի ունեցած սիրալիք և փաղաքուշ վերաբերմունքն էր: Ուսումնասեր և արտակարգ ընդունակ պատանի Պռոշյանն իր վարժապետից՝ Շապուհ Շահնազարյանից միայն ծեծ ու հայհոյանք էր ստացել երբեք չեւ լսել իրաֆուսանքը խոսքեր և չեւ իմացել որ ուսուցչն էլ կարող է աշակերտների պես և աշակերտների հետ երգել խաղաք զբոսներ, լուղանալ և այլն: Պռոշյանը, որպես ընկերների մեջ ամենից ընդունակի՝ խելացի ու սրամիստ պատասխաների համար արժանացավ Աբովյանի փաղաքշանքներին ու համբույրին... Այսպես է սկզբում այն հաստատուն կտալը, որը միացնում է մեր երկու ականավոր հեղինակներին:

Այս գեղքից հետո տարիներ են անցնում և շատ բան է փոխվում: Պռոշյանը դեռևս Աշտարակում լսում է սիրելի մանկավարժի ողբերգական վախճանը: Այդ մասին որոշ ժամանակ խոսվում է, և ապա իշխում է մոռացության վարագությունը: Մի առժամանակ սիրելի պատկերը հնուանում է նրա աշքից... Պռոշյանի կյանքում ես շատ բան է փոխվում: Նա ավարտում է ներսիսյան դպրոցը, հայրենի զյուղում երկու տարի ուսուցչությամբ է պարապում, ապա նորից վերապահնում է թիֆլոս Այժմ նա կախարդված է զրականության սիրով: անվարժ գըշով հորինելու փորձեր է անում, որոնք հիշեցնում են մանկական թոթովանքները: Ապրում է մաշող տարակուսանքների և որոնումների ծանր շրջան: Առջևը՝ գեպի ժողովուրզը տանող ճանապարհին, նա տեսնում է զբարարի անանցանելի պատճեղը, և այն խորտակելու ուժ ու վճռականություն չի գոնում իր մեջ: Այսպես մոլոր ու անհաստատ էին Պռոշյանի առաջին քայլերը զրականության ասպարեզում, երբ պատահեց հետեւյալ նշանակալից անցքը:

Թիֆլիսում, 1858 թ. օգոստոսին, մի երեկո, անձրկից հալածված, մինչև

ռակորները թրջված Պռոշյանը իրեն մի կերպ զցում է համագյուղացի, գիմնազիայի վերակացու և ուսուցիչ Հովհաննես Տեր-Հովհանիկյանցի տունը Տանը ոտից զուխ հանդերձափոխում է նրան և թեյի հետ մի նոր, Պռոշյանի համար անծանոթ հայերեն գիրք դնելով սեղանին, ինքն անցնում է մյուս սենյակը, գիշերօթիկ աշակերտների հետ պարապելու:



### ԹԵՐԱ ԹՈՌԵՑԱՆ

Պռոշյանը, հետաքրքրված՝ իսկույն բաց է անում գիրքը: Թե հեղինակի անունը և թե գրքի վերնագիրը հուզում են Պռոշյանին, վառում նրա հետաքրքրությունը, խոսում նրա հետ: Գիրքը Խ. Արովյանի «Վերք Հայաստանի»-ն էր: Մոռացության մշուշը ցնդում է, և Պռոշյանի հիշողության մեջ պայծառությունը կատարվում է:

ըեն գծագրվում է մի ծանոթ կերպարանք, նա լսում է մի հարազատ ձայն, որ գալիս է տարիների հեռվից Սկսում է կարդալ... Առաջին խակ բառերից նա կլանվում է, չի նկատում, թե ինչպես են սահում ըովեները, ժամերը... Մթափլում է այն ժամանակ, երբ գիրքը վերջանում է: «Դժվար է ինձ պատմել այն տպագրությունը,»—գրում է Պոռշյանը «Հուկելներում»,—և այն հեղղուկ զգացմունքները, որ անդադար ներսումս միմյանց հետեւում էին. մի ըուբե արտասուրք արտամթախիծ, մյուս վայրկենին՝ ուրախության արտասուք, երրորդ ակնթաթիվին՝ նստած տեղից անհետեթ ուստատումներ: Ես ինչ գիտեմ ընչեր չէին պատահում ինձ. լավ էր, որ տանուտերս գնացել էր և մոսուչ ոք չկար, ապա թե ոչ արժեր կապկապել և հիմարանոց տաներ: Հենց այստեղ Պոռշյանն ուխտում է աշակերտել Արովյանին, նրա օրինակով անմահացնել հայրենի գյուղը՝ Աշտարակը՝ միա իմ ձեւքը,—դիմում է Պոռշյանը Տեր-Հովսեփյանին, երբ նա ներս է մտնում, —և Արովյանին աշակերտելու հմտ: Նույն գիշելը, ընթրիքը հետո, նա երկորդ անգամ ծայրեիծայր կարդում է «Վերք Հայաստանի»-ն և «Աքաղաղը հինգ մերան կանչել էր, որ եւտեղս մտա, քնիս մեջ զարունակ Աշտարակումն էի ման գալիս:

Այսօր թերեւ շատերը չհասկանան Պոռշյանի վիճակը, չափանցություն համարեն նրա պատմածը ժամանակակից ընթերցողը նույնիսկ որոշ ձանձրութով, դժվարությամբ կկարդա «Վերք Հայաստանի»-ն, սակայն այլ էր Պոռշյանի վիճակը, ուրիշ էր նրա ժամանակը: Մրտին ու մտքին ոչինչ չասող, գրաբար անկյանք գրքերի վրա տարիներ շարունակ չարաչար տանջված կյանքով և աշխուժով լի պատանին առաջին անգամ ձեռքն է անում մի գիրք: Ոսուում է ժողովրդի լեզվով: Մոլացնում ժողովրդի կյանքը՝ չտեսնված հզգրիտ և կենդանի պատկերներով: Պոռշյանին այսպիսն ծանոթ էր, այնքան միբելի վեպում նկարագրված իրականությունը: Քանաքեռը մոտ ու հարազատ էր ամեն մի աշտարակեցու, ինչպես նաև իրեն՝ Պոռշյանին լեզուն, սովորությունները, ծեսերը, տոները, խաղերը նույնն էին, ինչ որ հայրենին Աշտարակում Բարիկենդանի նկարագրությունը ինչըքան հիշողություններ կզարթենելու Պոռշյանի մեջ, քանի քանի այդպիսի բարիկենդանների է մասնակից եղել ինքը Աշտարակում: Խսկ վեպի առաջարանը, որ սրի մի հարվածով լուծեց մեր գրականության գորդիառյան հանգույցը, մեկից պատասխան տվեց մինչ այդ անպատճանան թողնված հրատապ հարցերին, վերացրեց բոլոր տարակուանները: Եթե վերոհիշյալների վրա ավելացնենք այն ջերմ շունչը, այն կենդանի ողին, որոնցով լցված է «Վերք Հայաստանի»-ի ամեն մի բառը հեղինակի ըյուրելոյա սերը դեպի ժողովուրդն ու հայրենիքը, —այն ժամանակ միանգամայն հասկանալի կլինի, թե Պոռշյանի համար ինչպիսի անսահման ուրախություն էր այդպիսի հայտնությունը:

Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն քար լոռության ու իավարի մեջ հնչող այն ծանոթ, հարազատ ձայնն էր, «Ի Պոռշյանին դուրս ըերեց մի պայծառ, լուսավոր ուղի Աբովյանը հանգիստ սահմանացագ Պոռշյանի Վերքի լուրջը: Վերք Հայաստանի»-ի ընթերցանությունը վճռական նշանակություն ունեցավ Պոռշյանի համար, նրա գրական գործունեության լուրջ սկիզբ հանդիսացավ:

Մի տասնամյակ առաջ Արովյանին տանջող հարցերը ժառացել էին 50-ական թվականների դեմոկրատական մտավորականության առաջ: Այդ

մտավորականությանն արդեն հասնում էր ժողովրդի ձայնը, նրա արդարացի պահանջը խալարից և մոռացությունից լույս աշխարհ գուրս գալու մասին: Արովյանի «Վերք Հայաստանի»-ն ժողովրդի այդ պահանջի արձագանքն էր: Այդ գիրքը Պոռշյանին հմայեց իր անհուն ժողովրդասիրությամբ, ժողովրդին ուղղված սիրո ջերմ խոսքերով: Պոռշյանն առաջինն ըմբանեց, որ «Վերք Հայաստանի»-ն աշխարհի գրականության մանիֆեստն է, ժողովրդի ու նրա կուտուրայի մեծագույն հաղթանակը և կեղեցու և կղերականության դեմ: Ըմբռներով այս, նա առաջինը համարձակ և ջերմ խոսք ասաց Արովյանի վեպի և նրա ստեղծած ուղղության մասին, առաջինը խիզախեց սրբագրութել նրա ստեղծագործական տրադիցիաները, որի ողին կազմում է Արովյանի ժողովրդասիրությունը:

Այսպես ծնունդ առավ Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» անդրանիկ վեպը, որ զրկած է «Վերք Հայաստանի»-ի ներշնչումով և զգալի ազդեցությամբ<sup>1</sup>:

«Սոս և Վարդիթերից» ու «Աղասուց» հետո Պոռշյանն ստեղծագործական երկար ուղի անցավ, նա տվեց իր հաջորդ շրջանի նշանավոր երկերը՝ «Հացի խնդիր», «Ցեղեր», «Բղդե», «Հունոն»: Այս գրվածքներով, սակայն, Պոռշյանը չհեռացավ Արովյանից, նրանց մեջ խորթություն չժմտավ, նրանց միացնող դեմոկրատիզմը, սերն ու նվիրվածությունը ժողովրդին և նրա շահերին՝ միշտ անխղելի մնացին:

Տեղին է այսուել ըերել մի հատված ուսւա գրականագետ Յուրի Վեսելովսկուն Պոռշյանի գրած նամակից: «Միակ անձնակորությունը, որ անմիջական աղդին մասնակցություն ունի իմ ամբողջ գրական աշխատությանց մեջ սկսած 60 թվի հունվարից լույս տեսած «Սոս և Վարդիթեր» վիպասանությունից մինչև վերջին գրական երկո՞ւ եղել է, լինում է և լինելու է անմահ հաշատուր Արովյանը նրա «Վերք Հայաստանի»-ն մտավոր խթան է հանդիսացել ինձ համար, նրա շկոլային և անկարծաբար ենթարկել ինձ և այդ ուղղություն մեջ սերելի է ինձ թույլ գրչիս վերջին ճավողունը զարարեցնելու:

Եվ այսպես՝ 19-րդ դարի 40-ական թվականներին մեր գրականության մեջ կատարվեց արմատական հեղացրչում, զրականությունը գուրս եկավ վանքի խուցից և մտալ աշխարհ, խոսեց ժողովրդի հոգուց՝ նրա հետ և նրա լեզվով: Այս մեծագործության փառքը պատկանում է Արովյանին: Պոռշյանը ժամանակին ըմբռնեց այս և, ճիշտ գնահատելով արս նոր առողջ տենգենցը, միացավ այդ շարժմանը, զարգացրեց ու խորացրեց այն՝ նոր ժամանակների նոր պարմաներում՝ գառնալով այդ շարժման հաստատուն այուներից մեջը:

Բնորոշ է, որ Պոռշյանը չի բավականացել իր ապավորությունները Արովյանի և նրա «Վերք»-ի մասին մի անզամ պատմելով:

Աշխարհակի դպրոցին Արովյանի կատարած այցելության մասին Պոռշյանը նախ պատմել է իր «Գյուղական վարժապետները» ընդարձակ հողվածում («Արձագանք», 1888—1889), ապա նույնը, բայց փոփոխած ձեռվ, մացրել է «Հուշելիներ»-ի մեջ: Մեր աշխատառության մեջ զետեղել ենք «Հուշելիներ»-ի

1 Դեպի «Վերք Հայաստանի»-ն ունեցած հիացմունքի արդյունք է Պոռշյանի «Աղասի» դրաման, գրված 1863 թվին, լուս Արովյանի վեպի (տես Պոռշյանը՝ նախ պատմել է իր «Գյուղական վարժապետները» ընդարձակ հողվածում («Արձագանք», 1863 թ.): Պոռշյանը նույնիսկ մասնակցել է պիեսի բեմադրությանը՝ հանդես գալով գլխավոր հերոսի՝ Աղասու գերում:

վարիանտը ավելացրած «Արձականք»-ում տպագրվածի «Նախաշավիղ»-ին վերաբերվող հատվածը, որը, մեղ անհասկանալի պատճառով, տեղ չի գտել հեղինակի մեմուարներում:

«Վերք»-ի ընթերցանության պատմությունը ևս Պոռշյանի մոտ հանդիպում ենք երկու փոփոխակով: Այդ պատմությունը նախ տեղ է գտել «Հուշիկներ»-ում, իսկ հետո, քիչ ավելի ընդարձակ, լուրջ է տեսել «Հանդիսականական» և պատմական-ում (1895 թ.): «Արովյանի «Վերք Հայաստանի»-ն և իմ «Սոս և Վարդիթեր»-ը» խորագրով, Այստեղ բերել ենք վերջին վարիանտը:

Արժեկը առանց հիշողության չթողնել Երևանի դպրոցի տեսչի գալուստը:

Ամառն է, հուլիսի տօտժան շոքերն են, բայց մենք սովորում ենք: Կրակ էլ որ թափվեր երկնքից, Շաբոն (այսպես էր կոչում ռամելությունը մեր վարժապետ Շապուհին) մեզ արձակողը չէր: Դոնե պարապմունքը պակասեցներ:—Ոչ. Շապուհի համար ամառ ձմեռ չկար:

Զմեռներն «Ամենափրկիչ» կոչված հեկեցու արևելա-հյուսային խարխուլ ավերակումն էր փոշեխեղդ անում մեզ, ամառը նույն եկեղեցու հյուսիսային պատի երկարությամբը, կամ արեմ ըստյան բակի տերևաշատ նալբանդենի, կամ չինարի կոչված թեղի ծառի հովանու ներքեւ էր բրանքախաշ անելով վաղ առավոտից մինչև ուշ երեկոն՝ հոգիներս հանում, դաս տալիս:

Գանք մեր պատամության շարունակությանը:

Չեմ հիշում՝ առաջիկմ թե երրորդ տարու ամառը՝ հանկարծ մեր վարժապետը լեղապատառ ներս է ընկնում մեր բացօթյա ուսումնարանն և գոռում. ուղղվեցնք, կարգի ընկեք, փայտի նման տեղներդ չորացեք, վայը թափեցնք, Երևանի թագավորական վարժարանի Մեծն եկել է, հենց հիմի հստեղ կլինի, ձեզ հարցմունքներ կանի, վայ նրան, ով որ մի տառում սխալվել է, ձիպոտի տակին կմահացնեմ:

Խեղճ Շապուհը տերեկի պես գողում է, գույնը դեղին քրքումի (զաֆրան) է փոխվել ատամներն իրար են դիպչում:

Մենք, իսկույն, թուրքերի նամազի և հայտնի ժամերին անհրաժեշտ եղած լուսուեին կոչված ծորակավոր խեցի ջրամանաերով, որոնցով ջուրը էինք խմում, մերձակա առվից ջուր հանցրինք, սրկսեցինք: Մեզանից ոմանք էլ ավելները վերցրած եկեղեցու բակը բոլոր մաքրեցինք, գրքերս ձեռք առանք և սկսանք ամեն ոք մեր գասերը բարձրածայն կրկնել:

Վարժապետը բարակ շյուղը ձեռքին ձոճեցնելով՝ սրա նրա զլուին էր թակում, որ ուղղվենք, լավ նստենք, գրքերս ուղիղ բռնենք և այլն:

Ահա, հետալով տուն ընկալ գզիրն և հայտնեց «աղայի» գաւուստը:

Մի քանի բողեից «աղան» յուր ետևից Աշտարակի բոլոր առաջավորներին քարշ տալով՝ մտավ եկեղեցու բակը, կնաց ժամի դուռը համբուրեց և մոտեցավ մեզ:

Մենք ուսուցչի պատվերին համաձայն՝ տեղներիցս կանգնեցինք և խոր գլուխ տվինք:

Աղան բարեւց, հետո նստեց խալիֆա Շապուհի միակ հասրակ փայտյա աթոռի վերա և մատով ինձ յուր մոտ կանչեց ու հարցրեց.

—Ընչի՞ համար դու փոքրիկ ես ու քո հասակակիցներին թողած՝ մեծ տղայոց մոտ, բոլորի ծայրումն ես նստել երեխ մեծերը քո դասդ սերտացնում են, հա՞:

—Մեղք կլինի, որ ասես՝ ես եմ նրանց չգիտեցածը գլխի ձգում, ես առաջին աշակերտն եմ, հանդինաբար պատասխանեցի ես:

—Ո՞նց թե դու ես առաջին աշակերտը, զարմացմամբ ու քնքաբար առաջ քաշեց, երկու ծնկների մեջ առավ ինձ ու հարցրեց աղան, դու դեռ մի թիզ չկաս, ահազին ահազին մազ ու միբռով տղամարդկանց առաջինն ես:

—Կուզես՝ խալիֆիս հարցրու:

—Հրաման քեզ (այս), ողորմած անը, դա մեր առաջին աշակերտն է, հաստատեց Շաբր խալֆան:

—Ըհը, լավ, ապրիս, գլուխս շոյեց աղան և հարցրեց.

—Եթե դու առաջին աշակերտն ես, ասա տեսնեմ՝ հաց ու պանիր կարդացել ես:

—Հաց ու պանիր ամեն օր ուտում եմ, դու մեծ մեծ բաներ ասա:

—Որ էզպես է, գնա գիրքդ բեր, տեսնեմ:

—Միթե դու քերականությունն ես սովորում, ստուգիվ աշքերը չուց աղան և հարցասիրաբար նայեց ուսուցչին:

—Այո, աղա, դրա փոքրությանը մի նայեք, Զամշյան քերականության առաջին մասը վերջացրել է և ամենքիցը լավ սովորում է, պնդեց վարժապետը:

Աղայի հրամանով եկան և իմ երկու դասընկերներս, որոնք, թեև ինձանից հասակավոր, բայց համեմատաբար շատերից փոքր էին,

Տարօրինակ էր, բայց ճշմարտություն էր, իննը տարեկան

էի ես, երեք տարով իմ երկու ընկերներս՝ տեր Գրիգորի տղա Խաչատուրն և Տնտեսնոց Գալուստը մեծ էին ինձանից, և ահա մենք երեքով, մեր ներքեւ նստած 15—20 տարեկան պատանիների մեջ առաջինն էինք:

Խաչատուր տեր Գրիգորյան, տեր Խաչատրյանցը՝ «Աշտարակցի Խաչիկ» կոչմամբ՝ այսօր ևս լավ հիշում է մեր երջանիկ մանկությունը: Խաչիկի բանաստեղծության միջի գոհարները արտատպված են «Սոխակ Հայաստանի» երգարանի էջերում:

Աղան քառորդ ժամի չափ մեզ հարցունքներ արավ, կարդար թարդմանել տվեց, մեր գրաբար կարճ գրությունները տեսավ և հրամայեց տեղերս նստել: Մի ժամի չափ բոլորին մի առ մի քննեց, ամենքիցս էլ գոհություն հայտնեց, վարժապետի էլ ձեռքը բռնեց, շնորհակալություն արեց:

Խեղճ ուսուցչի գլխին հարամ եղավ շնորհակալությունը: Ի՞նչ չարաձձի էի. մեղավորը ևս եմ:

Մանկական պարզությամբ հայտնած խոստովանությունս ծեծի մասին՝ տեղի տվեց Արքունի դպրոցի տեսչին երկար հարցուխնդիր լինել ուսուցչից ծեծի վերաբերությամբ:

Շապուհը չթագցրեց, պարծանքով հայտնեց, որ ինքն անողորմաբար պատժելով՝ հասել է ցանկալի արդյունքին:

—Երեխայք, դառնում է աղա տեսուչը դեպի մանուկներս, եթե ևս խնդրեմ վարժապետից, որ այսուհետև ձեզ չծեծի, խոստանում եք, որ միշտ դասերդ լավ պատրաստեք:

—Խոստանում ենք, գոչեցինք միաձայն:

—Դեռ, ուրեմն, միամիտ կացեք, որ այսուհետև ծեծը վերանում է ձեր միջից:

Կամեցավ ուսուցիչն ապացուցանել ծեծի անհրաժեշտությունը, բայց զուր աշխատություն էր:

Տեսուչ աղան մի ուրիշ նորություն ևս սահմանեց. նա զարմացավ, երբ մեղանից լսեց, որ զրկված ենք լողալուց:

Նա ինքը նույն երեկոյան պահուն մեզ տարավ գետը, «Ավազագյուղ» կոչված լճի մեջ լողացրեց, ինքն էլ մեզ հետ լողացավ:

Հիանալի լողնորդ է եղած աղան, բայց մենք էլ իրանից պակաս չէինք լողում:

Աշտարակի «Քասախ» գետակը լողալու շնորհն անխնայաբար շուայել է հավասարապես բոլոր աշտարակցիներին. մեծ ու փոքր քաջավարժ են լողալու մեջ:

Երեք օր անդադար դալիս էր Տեսուչը մեղ այցելություն, աշքով չտեսած ու ականջով չլսած նորություններն էր մտցնում խալիքայական մահակի ու ոռղգու սովոր աշարերտներիս մեջ. նոր նոր խաղեր էր սովորցնում. ինքը խաղում էր մեղ հետ և ստիպում վարժապետին հետեւել իր օրինակին:

Դու ոչ մեռնիս, ծեծի օգտակարության գաղափարով տուգորված ուսուցիչը յուր հեղինակության հաստահիմն աշտարակը հիմնահատակ եղած տեսնելով՝ քաշվել էր հեռու անկյուն և կուշեկել օտար մարդու պիս:

Հասկանալի է, նա մտքով անիծում էր Տեսչի եկած ճանապարհը, և անդադար սպասում էր նրա գնալ-կորչելուն, որ վրեժն առնի յուր արդեն երես առած ստահակներից:

Չորրորդ օրն յոթանասուն երեխայք, Շալուհ վարժապետն և գյուղի կեսը ուսքով ուղեկցում էինք Երևանի արքունի դպրոցի մեծապատիվ Տեսչին:

Նա ինքը ցանկացավ, որ իրան ճանապարհ դնենք երգելով և զվարճանալով:

Նա ձի չհեծավ, շուրջ առած գոլոցականներիս՝ մեղ խրախուսելով՝ ուսքով էր գնում:

Գետի կամբջովիս անց կացանք, ձորը գուրս ելանք:

Եթե նա մեղ չկանոնացներ, մենք պատրաստ էինք մեր սիրելի և թանգագին հյուրին ուղեկցել մինչև Երևան:

Ամենքիս մեկ մեղ համբուրելով՝ յուր հրաժեշտը տվեց այս խոսքերով.

—Երեխայք, ձեր վարժապետն ինձ խոստացել է այսուհետեւ ծեծը բոլորովին վերացնել ամառավան շոքերին՝ միայն առավոտյան և երեկոյան հով ժամանակը պարապել, մյուս ժամանակներն ազատ եք, խոստացել է՝ ամեն օր երեկոյան դեմ ձեղ լողալու տանել, օրական երկու ժամ խաղացնել:

—Բայց, երեխայք, եթե որեւէ ինսդիր ունենաք ինձ դառնալու, իրավունք եմ տալիս գրավոր գիմելու. ես Երևանի թագավորական ուսումնարանի Տեսուչն եմ, ձեր թուղթն ուղղակի ուսումնարան ղղկեցնեք. մի քաշվեք, ես ինքս էլ գյուղացի եմ, Քանաքեռ գյուղիցն եմ. իմ անունս է Խաչառուր Աբովյան:

—Աստված կյանք տա, շատ շնորհակալ ենք, ձայն ձայնի տվինք մանուկներս:

Նա ձի նստեց և հեռացավ:

Բլրի ետեն էր անցել Աբովյանցը, իսկ մենք մեր կեցցեները գեռ չէինք դադարեցրել:

Գնաց հայազգի նոր գրականության լուսատու աստղը—  
հանրաճռչակ Խաչատուր Աբովյանցն և մեր սիրալ հետը տարավ:  
Նա տարավ և մեր վարժապետի հոգու անդորրությունը:  
Ինչպես վերն ասացի, այն օրից Շապուհ Շահնաղարյանցի ոգու-  
րությունը մեռավ:

Հայտնի չէ՝ վախենում էր, որ չզրենք Աբովյանցին, թե  
յուր խոստումն էր կամենում սրբությամբ կատարել:

Էլ այնուենուկ ծեծը վերջացրեց:

—Ա՛խ, ինչ անեմ... ատամները կրմտեցնում էր հաճախ  
խալիքան, երբ անկարգություն էինք անում, կամ դասերս չէինք  
իմանում, արել վատ տեղն է մայր մտել թե չե ես գիտեի ինչ  
անելու:

Էլ չդիմացավ Շապուհը, երկրորդ տարին տուն ու տեղն  
ուսեց, յուր մատաղ ամուսնույն շալակեց, Աշոտարակից երեսը  
շրջեց և տեղափոխվեց Երևան, ուր և վախճանվեց ջահել հա-  
սակում:

Կարծեմ գեռ Շապուհը չէր գնացել մեր գյուղից, որ Աբո-  
վյանցի կորսույան բոթը հոչակվեց:

Եթե չեմ սիսակում, 1846 կամ 1847 թվականն էր:

Ասում էին՝ իբր թե՝ մի առավոտ զարթնել են և գտել որ  
տան գլուխը չկա, ուր է գնացել ով է տարել, ոչ ոք չգիտեր,  
(Մինչի այսօր ևս չիմացվեց):

Զայն դուրս եկավ, իբր թե՝ Աբովյանցի գլխարկը, կոշկի  
մի հատն և սյուրտուկը գտնվել են Զանգու գետի ափին: Ումանք  
ասում էին՝ թուրքերն են սպանել թաղել և հատքը կորցնելու  
մտքով արտաքին նշանները գետի ափն են ձգել, իբր թե՝ ինք-  
նակամ գետն է ընկել խեղզվել:

Այլք ուրիշ հավանական և անհավանական ենթազրություն-  
ներ էին անում... ով գիտե, ժամանակից առաջ ծնած մարդ էր,  
տմեն բան կարելի էր գուշակել, բայց հաստատ ոչինչ չիմացվեց:

Հաստատ էր միայն, որ Զանգուն աղեցին, մաղեցին, ամեն  
տեղ որոնեցին և դիակը չգտան, չգտան ու չգտան:

«Հուշիկներ», էջ 15—24:

—Ես քեզ մի դիրք կդրեմ, վարժապետ, կարելի է գու-  
նրանից մի բան հասկանաս և այնպես սկսես սովորցնել, ասաց  
նա մի օր, երկար մի բանի վերա բացարություններ տալուց  
հետո, այն գրքի մեջ իմ ասած դասավանդության եղանակը

մանրամասնորեն նկարագրված է, այնտեղ կտեսնես, որ ավելի հեշտ է երեխային տառերի հնչունների հետ ծանոթացնել, հընչյուններով ձայները միացնել քան թե այր, բեն անուններ տառով, այն դիրքն իմ շինածն է, աշխարհաբառ է, դու նրա հառաջաբանը լնվ կարդա:

— Եատ լավ, շատ լավ, աչքիս վերա, տեր, հավանություն էր տալիս խալֆեն, բայց մենք այն խոսակցությունից ոչինչ չհասկացանք:

Խոսքիս վերջումն ավելորդ չեմ համարում ասել, թե Արովյանցն յուր խոստումը կատարեց. նա ոչ միայն մեզ համար շաքարեղեն էր ուղարկել նա վարժապետին ուղարկած գրքեցը մի մի հատ էլ մեր առաջին դասատան համար էր պարզե գրել:

Ոչ այլ ինչ էր այն, եթե ոչ յուր սեպհական աշխատասիրությունը՝ «Նախաջազիրը», Արզանյանց տպարանում տպված:

Երկրորդ տպագրության մեջ պակաս է գրքի բուն ծուծը և նպատակը՝ նորա մեծ հառաջարանը, որի մեջ խոսքը փիլիսոփա ուսուցիչներին դարձրած՝ սովորեցնում էր հնչական ձևը և խընդրում աշխարհաբառով դասատվությունը:

Պակաս են նույնպես մի քանի լավ ուանավորներ:

Հիշյալ հառաջարանից երեսում է, որ Արովյանցն է առաջին անգամը սկսել մեջ հնչական մետողան դեռ 40 թվականներումը:

Ափսիս, ոչ մեր քունջ ու պուճախում և ոչ ընկերներիս մոտ չգտա վերջին տարիներս այն գրքույկը:

Արժեր արդարե՛, նորա հառաջարանը տպագրել:

Այն ժամանակ Խաչատուր Արովյանցը կհամարվեր մեղանում և առաջին մանկավարժը:

«Արձագանք», 1889 թ.:

Ամառվան մի փոշոտ և տաք օր, երեկոյան բավականին ուշ, թիֆլիսի այն ժամանակվան միակ զրոսարան ծառուղիում, կուսակալի տանից ոչ հեռու, զրոսնում եմ:

Հանկարծ մի հեղեղանման անձրե ուրիշների հետ ինձ ևս փափցրեց զեալի իմ բուրջը: Հարյուր քայլաչափ չէի անցել որ անձրեաջուրը պարանոցովս մտել, ուրքերիցս զուրս էր գալիս:

— Ավելորդ է շտապել, մտածեցի ես և տեղն ու տեղս կանգառաւ:

Ի՞նչ պետք է անեմ տուն գնալով. մահիճ, վերմակ, փոխ-

Նորդ՝ բոլորը վրես ունիմ, մինչև լույս հազիվ թե ցամաքեն, գիշերը Աղամ-Ելայի հագուստով հո չեմ անց կացնելու:

Երկար չքաշեց վարանմունքս, կարիքը մարդիս աչքերը բաց է անում, վարպետ է շինում:

Աչքս ընկավ մոտիկ տներից մեկին, ուր բնակվում էր իմ համագույղացի (արդիս հանգուցյալ), գիմնազիայի վերակացու և ուսուցիչ Հովհաննես Տեր-Հովսեփյանցը:

Վճռեցի և դուռը բաղխեցի:

Երեխ, տանուտերերը կզարմանային. ով կարող էր լինել այս հեղեղին դուռը բաղխողը:

Ծառան իսկույն ցած իջավ և բացեց ու դռան արանքից զլուխը կիսահանել հարցրեց ով լինելու:

Ես հրեցի և ներս ընկա, առանց ուշք դարձնելու ծառայի գիմագրությանը:

Խեղճն իրավունք ուներ ներս չթողնելու, սանդուղքների առաջը հագուստից իջած ջրով լճացավ:

— Դիցուք տանուտերը տանն է, պատասխանեց իմ հարցին ծառան, բայց այդ դրությամբ դուք հո վեր գալու չեք:

— Բո գործը չի, զու ազգանունս տուր և խնդրիր այստեղ քո տիրոջը:

Ծառայի զեկուցումն ավելորդ էր, սանդուղքի զլսին ճրագը ձեռքին երեաց ինքը հյուրասեր տանուտերը յուր մոտ պատըսպարվող մի քանի գիմնազիականների հետ և ձայնիցս ճանաչեցուն պես՝ իսկույն ցած իջավ և անմիջապես հրամայեց ծառային ինձ համար բերել յուր հագուստներից:

— Փոխնորդներից մինչև կոշիկները, պարոն Հովհաննես, պատասխանեցի ես: Ի գեալ թող երեսսրբիչ ու սանտր ևս չմոռանա, արդեն լվացված եմ, երկինքն ինքն է ինձ ջուր մատուցել:

Շնորհակալություն պարոնին ոչ միայն յուր սիրալիր հյուրասիրության համար, այլև իմ կյանքի մեջ կատարված ամենանշանավոր երևութին նախապատճառ հանդիսանալու առթիվ:

Սրտաբաց տանուտերս ոտից գլուխ հագցրեց ինձ, տարավ յուր սենյակը, թեյի հետ մի նոր հայերեն գիրք առաջս գնելով՝ ներողություն ինդրեց, որ ստիպված է մի երկու ժամով միայնակ թողուլ ինձ. ինքը պարապելու է մոտը գիշերող աշակերտների հետ:

Դիրքը նոր էր ինձ համար,

«Վերք Հայաստանի» և «Խաչատուր Աբովյանց» բառերը լա-

Գեցին հետաքրքրությունս. դեռ չթերթած, կազմին նայելով՝ շվարածի նման շուռելուա էի տալիս:

Սկսեցի հառաջաբանից:

Դժվար է ինձ պատմել այն տպավորությունը և այն հեղափուկ զգացմունքները, որ անգագար ներսում միմյանց հետևում էին. մի բոլե արտասուք տրամաթախիծ, մյուս վայրկենին ուշ բախության արտասուք, ելլորդ ակնթարթին նստած տեղից անհեթեթ ոստոստումներ: Ես ի՞նչ գիտեմ, ընչեր չէին պատահում ինձ. լավ էր, որ տանուտերս գնացել էր և մոտս ոչ ոք չկար, ապա թե ոչ արժեր կապկել և հիմարանց տանել:

Թե ինչպես անցավ ժամանակը, ոչինչ չեմ կարող ասել բայց մեկ էլ զգում եմ, որ աջ բազուկս մի բան ծակում է և հեռավոր տեղից լաված արձագանգի նման մի ձայն դիպչում է ականջիս:

Կարելի է, գարձյալ անուշադիր գտնվեի, եթե արդեն գիրքը վերջացրած չլինեի:

—Այ տղա, վերացել ես, խացել ես, թէ անզգայացել ես, հինգ բոլե կա, քեզ շարժում եմ, զոռում եմ և չես պատասխանում:

—Ի՞նչ էր այս, ասացեք խնդրեմ, պարոն Հովհաննես, ի՞նչ է անում Արովյանցը. այս ի՞նչ նորանշան և սքանչելի երևույթ է մեր գրականության մեջ, ուր էր թագցրած մինչև օրս այս անգին գանձը:

—Այն, միևնույն տպավորությունն է թողնում դա ամենընթերցողի վերա, այսօր ամենքի խոսելիքն և դատելիքը «Վերք Հայաստանի»-ն է, շնորհակալություն Փոնդոյանցին, որ հրատարակեց:

—Եվ ինչի, պարոն Հովհաննես, հետեւողներ չունենա Աբովյանցը, ինչի զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, մինչև երբ մեր գրականությունը գրագետ դասակարգեսեականությունը մնա:

—Մենք այդ մասին շատ ենք խոսել, բայց ուր է, այսօր մեր մեջ զորա շավով գնացողը, հեշտ չկարծես:

—Փորձելը հանցանք հո չի:

—Ի՞նչ է դիտավորությունդ, թերահավատական ժպիտով հարցրեց ինձ:

—Այսչափով չեղած, կիսով պակասն ընդունելի է:

—Քառորդի քառորդն էլ մեզ կգոհացնե:

— Լիակատար հաջողության համար խոսք չեմ տալիս, բայց  
ահա իմ ձեռքը, ես Արովյանցին աշակերտելու եմ:

— Ցանկանում եմ փայլուն հաջողություն, եթե մի այդպես  
բան անես, ամենքից ավել ինձ կուրախացնես, քեզ տեսնեմ,  
մեր Աշտարակի անունն անմահացրու: Բայց և այնպես ընթրել  
պետք է, կերակուրները սառեցին: Այնտեղ գինու աղդեցության  
ներքո մենք կշարունակենք մեր խոսակցությունը:

Ընթրիքից հետո «Վերք Հայաստանին» անկողնում պառկած  
երկրորդ անգամ ծայրե ի ծայր կարդացի:

Ընթրիքը վերջացավ, բավական գիշեր անցավ, իսկ մենք  
գեռ Արովյանցի ոսկորներն ենք անհանդիստ անում:

Տեր-Հովսեփյանցն ինձ խաղաղ քուն և բարի գիշեր մաղ-  
թեց, հեռացավ. ես երկրորդ անգամ սկսեցի կարդալ «Վերք Հա-  
յաստանին»: Աքաղաղը հինգ բերան կանչել էր, որ տեղս մտա-  
Քնիս մեջ շարունակ Աշտարակումն էի ման գալիս:

Հիտեյալ առավոտը Տեր-Հովսեփյանցը դարձյալ հիշեցրեց  
ինձ երեկվան խոստումս:

— Լավ, լավ, անպահտնառ, անպահտնառ, ցտեսություն...

Խանութից թուղթ ու թանաք գնեցի, փոնչու մոտից հինգ  
կոսեկի հաց առա և ողջ օրը սենյակիցս գուրս չեկա:

Ծունկս սեղան էի շինել և գրում էի:

«Սոս և Վարդիթերն» էի գրում:

«Հանդես գրականական և պատմական».

1895 թ., № 6

# ՆԱՀԱՊԵՏ ԱԹԱՆԱՍՅԱՆ

Մանկավարժ, հասարակական գործիչ, հետազում քահանա Նահապետ Աթանասյանը (1840—1919) Խաչատրու Աբովյանի՝ Երևանի գավառական դպրոցի սաներից է: Նրա հուշերը վերաբերում են Աբովյանի կյանքի այդ շրջանի հատկապես վերջին՝ 1847—1848 թվական:

Նահապետ Աթանասյանի հուշերը Աբովյանի մանկավարժական մեթոդ-ների մասին թեև Պոռշյանի և ուրիշների պատմածների համեմատությամբ նոր բան չեն ավելացնում, բայց և այնպես հետաքրքրական և արժեքավոր են թեկուղ հենց նրանով, որ հաստատում են մյուսների պատմածները, առավել հավաստիություն տալով նրանց: Եթե այդ խնդրում հուշերի արժեքը համեմատաբար երկրորդական է, ապա մի այլ հարցում՝ Աբովյանի ու Երևանի հասարակական վերնախավի միջև ստեղծված փոխհարաբերության հարցում, այդ հուշերի գերն առանձնապես կարեսը է: Աբովյանի ուսումնասիրողներին շատ բան հայտնի չի այդ խնդրի վերաբերյալ Ուշազիր հետազոտողը, ինարկե, կարող է որոշ պաշտոնական թղթերից կռահել, որ Աբովյանը հաշտ չէր և նույնիսկ որոշ կոնֆլիկտի մեջ էր Երևանի հասարակության բարձր դասերի՝ գանձականության և աղայության հետ: Ուրիշ կերպ էլ լինել չէր կարող Տգիտության և նախալաշարմունքների մեջ քարացած չարչին և աղան շատ էլ գին չէին զնում ուսմանն ու ուսումնականին: Նրանք իրենց որդիների համար ավելի նախանձելի վիճակ, քան իրենց էր, չէին էլ երազում Ուսման հարկ չիմացողները բնականաբար չէին զնահատի և ուսումնականին: Իր առակներում Աբովյանը շատ անգամ է մտրակում ուսման հարկը չիմացողներին և, սեփական դառն փորձերից դաս առած, բազմիցս վայ տալիս նրան, ով ստիպված էր գործելու այդպիսի շրջանում:

«Վայ են մարդին, ով էնպիս տեղ ընկնի,  
Որ գրի, արզի մտիկ տիտղ չըմի?  
Մարդի սաղ սաղ էլ որ ուսեն, սպանեն  
Մեկ սիրս չի ցալիր...»

Աբովյանի «Աղվես» ու գելը՝ առակի այս բնաբանը հաջող կերպով բնութագրում է հեղինակի իր վիճակը, ինչպես և նրան շրջապատող հասարակական միջավայրը:

Երևանում Աբովյանը շատ ճիգ ու ջանք գործ գրեց, որպեսզի հասարակության ազգեցիկ շրջաններին կապի գպրոցի հետ, նրանց դարձնի իր գործունեության հենարան, այդ ճանապահութ բարձրացնի գպրոցի հեղինակությունը, բայց իզնուր: Այսաել էլ Աբովյանը միայնակ մնաց, միայնակ ընդդեմ հասարակական նախապաշարմունքների ու չլնովմիկական բյուրոկրատիզմի, և միայնակ սպաց իր խորտակված հույսերի փլատակների վրա:

Աթանասյանի պատմած դեպքը՝ վաճառականների հետ Աբովյանի ուսնեցած ընդհարման մասին, շատ ավելի նշանակալից է, քան կարելի է առաջին հայացքից ըմբռնել:

Այդ դեպքի մեջ արտացոլված է Աբովյանի ողջ տրագեդիան: Այդ պատմությունն օգնում է մեզ տեսնել այն խորիսը, որ բաժանում էր բարոյական երկու իրարամերժ աշխարհներ: Մի կողմից՝ Աբովյանի դեպի վերսավառող հոգին, նրա վեհ իդեալների աշխարհը, մյուս կողմից՝ շահամոլ չարչիները ստորագրշության աշխարհը: Աբովյանը դոհ դարձավ հավետ ներհակ այդ ուժերի մշտական բաղմուռներին:

Ավելորդ չենք համարում նկատելու, որ իր հիշողությունների վերջում Աթանասյանի բերած չափածո հատվածը արևմտահայ զրող՝ «Շահեն ի Սիպիր» գրքի հեղինակ՝ Սեդրակ Տեվկանցի բանաստեղծությունից է, որը, ինչպես երեսում է, ժամանակին տարածված գործ է եղել: Այդ բանաստեղծությունը լրիվ տպագրված է անվանի բանասեր, աբովյանագիտ Երվանդ Շահագիզի «Դիվան» և Աբովյանի աշխատության մեջ (323—324):

Աբովյանի արտաքինի նկարագրությունը, որ անում է Ն. Աթանասյանը, լիովին համապատասխանում է այն միակ պորտրետին, որը, ամենայն հավանականությամբ, կերտված է Դորպատում:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ցանկանալով մեր ներկա գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի կենսագրության նյութ և նրա բնորոշման միքանի զծեր տալ, ես ավելորդ չհամարեցի մանկական իմ այս հիշողությունները լույս ընծայել: Հուսով եմ, որ մեր մեծ վիպասանի վերաբերյալ կենսագրական ամենաչնչին նյութն անգամ նրա կենսագիրների համար ավելորդ չի լինի:

ԻՄ ՀՈՒՇԵՐՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1848 թվականն էր: Ես արդեն պատանեկական հասակիս 11-րդ տարին էի թևակոխել. հորեղբայրս՝ Սահակ-աղան սկսած 1846—1856 թիվը քաղաքի ժողովրդական ներկայացուցիչ-ղեպուտատոն էր. և այս դիրքի ու հեղինակության պատճառով բավական մոտ անձնավորություն էր Խաչատուր Աբովյանին, որը այդ թվականներին կառավարության կողմից Երևանի Արքունի վարժարանի վրա տեսուչ էր նշանակվել: Հենց այդ թվին էր, որ հորեղբայրս ինձ հետը վերցրեց, մի փոքրիկ խուրջին կրանս ձգեց և տարավ նոր նշանակված տեսչի մոտ: Մենք նրան հանդիպեցինք հենց վարժարանի առջև շրջագայելիս: Աբովյանը, տեսնելով հորեղբորս, մոտ եկավ, և սիրալիր կերպով միմյանց ձեռք ալմեցին և ողջունեցին: Հորեղբայրս դառնալով տեսչին ասաց. «Խրիստաֆոր Արտեմիչ, մեր այս փոքրիկ չարաճճին բերել եմ Ձեր վարժարանը տալու. կասկած չունեմ, որ ինչպես շատերի, նույնը և իմ այս եղանակությունը վերա Ձեր ինամքը և հովանավորությունը կտարածեք: Եվ ես հույս ունեմ, որ իմ նահապես լավ կտովորի, որով թե մեր հույսը և թե Ձեր աշխատությունը իզուը չի կորչի»:

«Ի սրտե շնորհակալ եմ, իսայ Անտոնիչ, հարեց Աբովյանը, որ Դուք ինքնահօժար սիրով ցանկացել եք Ձեր եղբոր որդուն բերել մեր վարժարանը տալու: Զգիտեմ Ձեզ հայտնի է թե չէ, թե ես ինչ չարչարանքներ եմ կրում մեր այս ողորմելի ժողովրդի ձեռքում. էնպիս որ ես շատ անդամ ստիպված եմ լինում կիրակի և տոն օրերին այս և այն եկեղեցի գնալ շապիկ հագնել, քարոզ

Հսոսել, հորդոր կարդալ նըրանց, որ իրենց զավակներին անուսում չթողնին: Քիչ չի պատահում, որ ուսման հասակի հասած որդիք ունեցող ծնողների ականջին փափում՝ եմ, թե քեզ տարեն մի հինգ ոռւբի էլ նպաստ կտրվի, որ դու քո որդու համար թուղթ, գրիչ, գիրք առնես և էդ ծանրությունն էլ դու չես քաշել: Եվ այսպիսով հընթացս այս մի և կես ամսվան հազիվ հազ կարողացել եմ 85—95 աշակերտներ ունենալ»:

Այս ըոլոր ժամանակը՝ ես զլխարկս վերցրած կանգնած եմ տեսչի և հորեղբորս միջնեւ: Պատանեկական մանրադնին հետաքըքությամբ դիտում էի Արովյանին: Իմ տեսածս Արովյանը նման չէր լուսանկարիչների լույս ընծայած նկարներին, լավ հիշում եմ, նա ոչ շատ բարձր և ոչ շատ ցածր, ոչ գեր և ոչ լղար, այլ միջին հասակի բարեձև կազմվածքով, կոր զլխով, բաց շագանակագույն մազերով, խիղախ գեմքով գեղեցիկ երիտասարդ էր՝ մոտ 40-ից 45 տարեկան: Արովյանը ինքը մոտ քաշեց ինձ և կանգնեցրեց իր առջելը. ձախ ձեռքը իմ ձախ ուսին էր զրել, իսկ աջ ձեռքով շիկահեր գլուխս էր շոյում: Այս միջոցում նա մի առանձին բավականությամբ ասաց, մի ուրախալի հանգամանք ինձ շատ մեծ հաճույք է պատճառել, որ քաղաքիս կարող անձինք, որոնք իրենց որդոցը Տիֆիխսի գիմնազիոնը և կամ Լազարյան ճեմարան են ուղարկում, իմանալով, որ ես տեսչական պաշտոնով այստեղ եմ մնալու, այդ մտազրությունները թողին—որը ծախքերի ծանրությունց խուսափելու, և որը Մոսկվայի գաժան սառնամանիքներին իրենց զավակներին զոհ չտալու համար: Որով ես հնարավորություն ունեցա երրորդ զասարան կազմելու: Այլապես ես պետք է ստիպված լինեի առնվազն մի տարի ևս համբերել: Եվ ապա դառնալով ինձ ասաց՝ «սիրելի Նահապետ, քու զլուխն էլ իմ զլիկի պես մեծ է, ինձնից հազիվ հազ վարժապետ գուստուս եկավ, տեսնենք թե քեզնից ինչ դուրս կգա»: Արանց հետո հորեղբայրս ու Արովյանը միմյանց ձեռք սղմեցին և բաժանվեցին:

Արովյանը ձեռքիցս ըռնած ինձ տարավ իր առանձնասենյակը. խուրջինիցս իմ գրքերն ու տետրակները հանեց, կարդացնել ավելց, և հետո տարավ նստեցրեց պատրաստական դասարանի երկորդ բաժնում, և ապա դառնալով աշակերտներին, ասաց. ես ձեզ մի նոր ընկեր եմ բերել մի լավ ընկեր, հույս ունեմ, որ գուշ նըրա հետ սիրով կվարվեք, և սկսեց միասմի հիշել իմ չունեցած արժանիքներս: Դասերից վերջը երբ տուն գնացի, տատիս հայտնեցի, թե ինչ լավ է, որ ճաշից հետո էլ վարժարան

չենք գնալու (ծխական դպրոցում, ուր առաջուց սովորում էին պարապմունքները մինչև երեկո էին տևում): Երբ երեկոյան հորեղբայրս տուն եկավ, ես նրան ասացի, թե՝ աղա, ինչու, երբ տեսուզը գլխարկու ձեռքից առնելով ուզում էր գլխիս ծածկի, դու աչքով՝ ունքով իշարաթ անելով՝ չէիր թողնում, որ ծածկեմ: Հորեղբայրս ինձ պատասխան չտվեց. բայց երբ հայրս տուն եկավ, նրան միտումի պատմեց ինձ Աբովյանցի մոտ տանելը և վարժարան տալու, և՛ նրա հետ խոսածների, և՛ նրանից լսածների բոլոր պատմությունը: Պետք է այստեղ հիշեմ, որ գլխարկ վերցնելը ունի իր պատմությունը:

Խ. Աբովյանը, որ վերին աստիճանի բարի և պատվական անձն էր, միաժամանակ նորա մեջ կար և ինքնասիրության և պատվասիրության հոգի. նա չէր սիրում շուտ-շուտ բազար գուրս գալ և միշտ իրան հեռու էր պահում բազարից, բայց թե ի՞նչպես էր եղել՝ մի օր բազար էր եկել և հենց թարսի պես, ուզեցել էր անցնել մեր բազազների չարսուից, երբ նա նկատում է, որ իրանից 15—20 քայլ հեռավորության վրա իր առջևից անցնում է ոստիկանական թաղապետը (կվարտալինայ): Աբովյանը տեսնում է, որ չարսուի վաճառականներից աջ ու ձախ ոտքի են կանգնում և խոնարհաբար ողջունում են, իսկ իրան հանդիպած ժամանակը անտարբեր և սառն են վերաբերլում:

Հորեղբայրս, որ նույն չարսուում սարաֆի խանութ ուներ, տեսնում է, որ Աբովյանը այլայլած զեմքով իսկույն վերադարձավ չարսուի գլխից և եկավ նստեց իր խանութի մոտ. իրեն խնդրեց, որ անմիջապես բոլոր վաճառականներին էլ իր մոտ կանչի և երբ նրանք... գալիս են, նա, որքան էլ վշտացած էր երեսում, այնուամենայնիվ բոլորին էլ քաղաքավարությամբ ողջունելուց հետո ասում է՝ պարոններ, Զեզ հավատացնում եմ, որ ես մի առանձին փառասիրություն չունեմ և չեմ էլ ունեցել անցյալներում, թեպետ և ծշմարտությունը խոստովանելով պետք է ասել, որ այդ կիրքը ամեն մարդու մեջ էլ կա թե ուսյալ ինչ նա և թե անուա. բայց ես այնուամենայնիվ ամեն կերպ աշխատել եմ ինձ միշտ հեռու պահել նրանից, վասնզի ասված է՝ փառքը ստվերի է նմանվում, եթե նրանից փախչես, ետեկցդ կգա, իսկ եթե նրա ետեկցը ընկնես՝ նա քեզնից կփախչի. այս պատճառով էլ ես աշխատել եմ փառքից փախչել, որ նա իմ ետեկցը զա և ոչ թե առջևից փախչի... Եվ ուրեմն ասեմ Զեզ, այս չարսուով մի քանի բոպե առաջ գնում էր մի քանի քայլ

ինձնից առաջ պոլիցիական աստիճանավորը (կվարտալինայ)՝ տեսա թե ինչպես Դուք ամենքդ ոտքի էիք կանգնում, զլիարկ վերցրած գլուխ էիք տալիս, իսկ ևս նրանից քիչ հետո անցա. Ձեզանից շատերը անտարբեր, հաղիվ թե՝ տեղներից բարձրությունում, զլուխ էին տալիս, կարծեմ, թե այդ էլ մի տեսակ ավելորդ էին համարում... Բայց եթե Դուք մի բովեւ մտածեք, թե ով է պոլիցիական աստիճանավորը և ով եմ ես Ձեզ համար, հավատացած եմ, որ Դուք ինքներդ Ձեղ կդատապարտեք Ձեր անքաղաքալարի և ապերախտ վարմանց համար... Այս, պոլիցիական աստիճանավորը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն՝ որ նա պետք է հսկի փողոցների մաքրության վերա, և եթե սատկած շուն կամ կատու ընկած լինի, նա պետք է իր գեսյատնիկին պատվիրի, որ ժամ առաջ սայլ վարձեն և տանեն քաղաքից գուրս՝ հողի տակվը անեն... Բայց գուրք քիչ անգամ չեք տեսած լինիլ, որ օրեւ բով այդ ապականությունները ընկած են լինում փողոցներում, սաստիկ գարշահոտություն են տարածում, որը կարող է վարակիչ հիվանդությունների պատճառ լինել նոքա այդ մասին էլ անփույթ ու անհոգ են մնում, բայց այնուամենայնիվ, դուք նրանց պատվում եք, մեծարում եք... Ի՞սկ Ձեր որդոց, Ձեր զավակների ուսման և հառաջադիմության մասին մտածող և հոգացողներին՝ ուսուցիչներին և դաստիարակներին պատվել-հարգելուցը Ձեզ հեռու եք պահում... Ահա, հենց այս ուզեցա ասել Ձեզ և ուրիշ էլ ոչինչ չունեմ ասելու. ազատ եք, գնացեք...

Այս ասելուց հետո՝ Աբովյանը տեղիցը վեր է կենում ու հեռանում. և մեր բազագիտանի բազագները, ամոթից մինչեւ ականջների կոթը կարմրած, թողնում, գնում են:

Եվ իսկապես՝ ծիծաղելին նրա մեջն է, որ այս անցքից հետո՝ Աբովյանին մի որեւէ տեղ տեսնողները՝ թե մեր չարսուբազաները և թե ընդհանրապես այս հանգամանքին տեղյակ անձիք աճապարանոք գլխարկ էին վերցնում և խորին խոնարհությամբ գլուխ էին տալիս, ողջունում, նա էլ իհարկե, իւր էրթին փոխադարձար բարեւում էր բոլորին:

Որքան կարողացել եմ մտքիս մեջ պահեր արքունի վարժարանում թե ոռւսաց լեզվի և թե թվաբանության առարկան ինքը Աբովյանն էր պարապում. բայց չգիտեմ՝ նրա ժամանակը Գրուբեր թվաբանական մեթոդը ծանոթ էր նրան, թե չէ. բայց և այնպես նա իր հետ դասարան էր բերում Քանաքերից «կռու» ասված ընկույզներ (պոպոքներ), որոնք թեև փոքր էին, բայց, համեմատած իրենց փոքրության, բավական ծանր և գործ ազբու-

թյան համար շատ հարմար: Եվ այսպես, Աբովյանը դառնում էր գեղի մեզ, ասում՝ ապա ինձ ասա, Պողոս կամ Թաղեսոս, որ եթե՝ այսքան ընկույզ ձեռքիդ ունենաս, և ես այսքան էլ ավելացնեմ քո ունեցածի վրա, դու հրքան ընկույզիդ կունենաս ձեռքի, և կամ՝ եթե այսքան ընկույզիցդ վերցնենք, դու ձեռքումդ ի՞նչքան ընկույզ կունենաս. նույն կերպով էլ պարապում էր բազմապատկումն և բաժանումն:

Լավ չեմ մտարերում թե՝ ինչու և ի՞նչ հարցերին ես կարողացել էի լավ և պատշաճին պատասխան տալ բացարել և ահա, դասերից վերջը նա վերցրեց ինձ և իմ ընկերակիցներին և տարավ բազար՝ թուրք նալարավաճառների և բազազների խանութը, իր ձեռքով խուրջինիս մի թայը դատարկեց մինի մեջ, իսկ այն դատարկ թայի մեջ չոք միրգ առավ լցրեց և ասաց իմ ընկերակիցներին, եթե դուք էլ նահապետի պիս պատասխանեք, ձեզ համար էլ միրգ կառնեմ. բայց ինձ առանձնացրեց և ականջիս ասաց — թե ես կերթամ, քո ընկերներին էլ բաժին տուր, մեղք են — և այն պահուն՝ ես ինձ այնպիսի երանության մեջ էի զգում, որով ոգեսրված՝ այնպես առատաձեռնությամբ բուռ բուռ բաժանեցի ընկերներիս, որ իմ բաժինս նրանցից ավելի քիչ եղավ: Մյուս օրը տեսուչը իմ բացակայության ժամանակը հետաքրքրվել էր իմանալու, թե ես նրա պատվերը կատարել եմ՝ ընկերներիս բաժին տվել եմ, թե չէ: Եվ երբ նրանք հայտնել էին, թե նա այնքան մեզ շատ ալից, որ իրան շատ քիչ բաժին մնաց, այս հանգամանքը իմ վարքը շատ էր բարձրացրել ահսչի աչքում, զբանից հետո նա սկսեց ավելի շատ սիրել ու գուրգուրել:

Չմոռանամ ասել որ մեր տունը հաճախող բարեկամներն ու ծանոթները՝ երբ գեղք էր լինում Աբովյանի մասին խոսելու, ընդհանրապես մեծ գովեստով էին խոսում նրա ուսուցչական պաշտոնավարության և տեսչական գործունեության մասին. թե ինչպես նրա շնորհիվ Աբովյանի վարժարանը օրավուր սկսել էր ծաղկել, օրավուր հատաջագիմական ճանապարհի վրա էր գրվում նրա հիմքը, որ նա, չբավականանալով մինչև ժամը 1—2-ը ճաշից սկսի պարապմանքից, ժամը 5-ից էլ նորից իր մոտ էր ժողովում երկրորդ, երրորդ դասարանի աշակերտներին և նրանց հետ գերմաներեն էր պարապում: Ասում էին նմանապես, թե վեհափառ՝ Ներսես կաթողիկոսը իբր թե Աբովյանին խոսք է տվել, որ նրա ձեռնասուն աշակերտներից ավելի ընդունակներին էջմիածնի ծախքով արտասահման — Գերմանիա պետք է ուղար-

կի, որ այնտեղ հիմնավոր ուսում ստանան և վերադառնան գան մեր կողմերում ուսուցչությամբ պարապեն:

Սարաֆ Մկրտիչը (իս մորեղբայրը), որ բալական հին հասկացողության տեր և իր ժամանակի ազգեցիկ մարդն էր, լսելով Աբովյանի մասին գովեստ, համբերությունից գուրս եկավ և ջղայնացած ասաց. գուշ ինչքան կամենում եք գովեցեք Աբովյանին. «փառաց փեթակը» հասցըք, ես նրա մի վարմունքը իսկի չեմ հավանում. Ախար ինչպես հավանեմ. մին էլ՝ էն ես տեսնում, որ հրեն վարժարանի աշակերտներին գլխին ժողովեց, զինվորների պես շարքով կանգնեցրեց, առաջն արեց — տարավ Թալարի-Սարգարի այդին: Դե հիմի էստեղ՝ աչքդ բարին տեսնի — տեսնում ես, որ ամեն մի աշակերտի զբանից հրես մի մի նախշուն բրդից շինած թոփ է գուրս դալիս, դեռ սկսվում ե թոփակութվը աշակերտների մեջ. հետո աթրմեն, հետո աշքակապուկը և զբանց պակասն էլ ինքը պարոն տեսուչն է լրացնում զանազան նոր խաղեր, նոր թռիչքներ սովորեցնում:

Հայրս՝ որ ընդհանրապես բամբասանքից միշտ խուսափող մարդ էր, սկսեց Աբովյանցի օգտին խոսել և դառնալով զեռպի սարափ Մկրտիչը, ասաց. «Աղա, ուղիղը ասեմ՝ ես էլ առաջ քու կարծիքին էի, բայց բարեբաղաբար անցյալ շաբթին գործով Բերդը գնդապես Վորոբյովի մոտն էի գնացել: Այս, ինչ որ մի քանի ըսպե առաջ գու ասացիր, նույնը ես գնդապետին հայտնեցի: Եվ նա ինչ ասաց. «Շատ սիսալվում եք, Գրիգորի Անտոնիչ, որ Աբովյանին դատապարտում եք այն բանի մասին, որը գովասանքի է արժանի: Նա զրանով կամենում է նոր կյանք մտցնել երեխաների մեջ, թարմ արյուն հոսեցնել նրանց երակների մեջ»: Հետո գնդապետը մի առանձին ոգեստությամբ զվարթացած վեր թռավ տեղիցը և դեմ առ դեմ կանչներով ասաց. «Գիտե՞ք, Գրիգորի Անտոնիչ, այդ ձեր Աբովյանը մեր՝ ոռւսներիս մասին ավելի լավ կարծիքի է, քան մենք՝ ոռւսներս: Երևակայեցեք, թի նա ինչ է ասել այս օրեւս մեր կոմենդատին՝ Կիլ ալոկովնիկին: Նա ասել է, թի ոռւս ազգը և ոռւսաց կայսերական կառավարությունը, նախախնամությունից սահմանված՝ աշխարհ է եկել որ երկրագնդիս վերա եղած բոլոր քրիստոնյա ազգերին, որոնք գարերից հետեւ հեծում են մահմեղական կիսալուսնի բռնակալության տակ, նրանց բոլորին էլ աղատի և խաչի միրկարար հովանու տակ պատսպարի:

Եվ այսպիսով, ավելացրեց հայրս, գնդապետ Վորոբյովը,

կարծեք, թե լիուլի հաղեցած Արովյանի անկեղծ զգացմունքով  
արտահայտված տեհչանքներից, դարձավ ինձ ասաց. «Բայց դուք՝  
հայերդ գիտեք, թե ովք է Արովյանը. նա Դորպատի համալսարա-  
նը ավարտած, բարձրագույն ուսում ստացած մարդ է, և միտ-  
ժամանակ լավ մանկավարժ այս բառի իսկական մտքով, և  
ուրեմն դուք ոչ միայն որևէ առիթով նրանից գժգոհ, այլ ընդ-  
հակառակը, պետք է ասածուց շնորհակալ լինք և գոհ, որ ձեզ  
այդպիսի պատրաստված ուսուցիչ և դաստիարակ է պարզեց: Այս  
տեսակ խոռքեր լսելուց հետո, այն էլ մի օտար ազգի հաս-  
կացող անձից, գեռ սրանից հետո արի ու Արովյանի վերա ծուռ  
աշքով նայիր:

Ահա այսօրինակ գովիսատներ էինք լսում թե մեր ծնողներից  
և թե մեզ շրջապատղներից, մանավանդ թե ավելի էլ գովիսատի  
արժանի վերաբերմունք էինք տեսնում մեր անմոռանալի տես-  
չից, երբ մի չարաբախտ օր գնում ենք արքունի վարժարանը և  
ինչ ենք տեսնում—տիսուր և թափծալի գեմքեր, այս ու այն  
կողմ փափսուկ, ծածկախոսություններ, հառաչանք, նույնիսկ լաց,  
արտասուքի կաթիներ և խմանում ենք, թե մեր անդնահատելի  
ուսուցիչը, մեր բարի ու պատվական տեսուչը, գիշերը տանից  
դուրս է գնացել և այլևս տուն չի վերադարձել...

Վայնասուն, լաց ու կոծը սկսվում է աշակերտներիս մեջ,  
մեզ գրեթե բռնի տուն են ուղարկում, երեք օր ընդհատավում է  
ուսումը և մենք միայն այն իմացանք, թե՝ մեր անմոռանալի  
տեսուչը, սաստիկ վշտացած՝ տնից գուրա է եկել և օգտվելով  
Զանգի-Հրազդան գետի գարնան օրերում նրա բարկացած կա-  
տաղի գրությունից, իր փրկությունը և հանգիստը ավելի լավ է  
համարել նրա կոհակների մեջ փնտուել, որը աճապարանքով  
պետք է նրա խնկելի դին տաներ և Մայր-Արաքսի գիրկը ձգեր:

Սնցան այս օրից ավելի քան հիսուն երկար ու ձիգ տա-  
րիներ, լավ չեմ հիշում, թե ինչպես և ինչ տեղից, ձեռքս ընկավ  
մի շատ սիրուն և պատշաճին բանահյուսություն, որից մի օրի-  
նակ ավել՝ դեռ անցյալ տարի, մեր հայ անդրիագործ պարոն  
Անդրեաս Տեր-Մարուքյանին, իսկ ահա, մի օրինակը զետեղում  
եմ այսուղ որպես վերջաբան այս երկասող հուշերիս:

— Գերեզմանդ կորած, աչքից հեռացած, մտքից մոռացած,  
աշխարհն անկեղու, մարդիք անիրավ, հեշ չհարցրին, թե իսկան  
Արովյանն ուր գնաց կորավ. ոչ սուզր հիշատակդ սրտից կորու-  
ցինք և ոչ էլ քարե արձան կանգնեցրինք»:

## ԳԵՐՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ Գերրգ Բարխուդարյանի ուսանողական այս հուշերը հետաքրքրական են նրանով, որ գաղափար են տալիս այն մասին, թե որքան լայն ու բազմազան շրջանների հետ էք կապված Արովյանից Դորպատում, և թե անցած տասնամյակներն ինչպես անդոր են եղել ջնջելու այն պայծառ տպավորությունը. որ թողել էք Արտվյանն իր գորպատյան բարեկամների ու ծանոթների մաքերում: Այս փոտոն առավել ևս հաստատվում է Ս. Քամալյանի գրի առած հուշերով:

## ՄԻ ՀԱՏՎԱԾ ԻՄ ԱՆՏԻՊ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Նվեր Խաչատուր Աբովյանի անմահ հիշատակին)

1851 թվականի գեկտեմբերի 8-ին, երեկոյան 6 ժամին, պոստի համակառքը, որի մեջ նստած էինք ես և երեք գերմանացի վաճառականներ, մտավ Դորպատ քաղաքը և, արշավելով Պետքը բուրգուցյան փողոցի մի մասը, ուղղվեց գետի աջ ու գոռդոռալով անցավ փայտաշեն կամուրջով Էմբախ գետի աջակողմյան ափը։ Այդ միջոցին կոնդուկտորը որոտաձայն հնչեցնում էր իր փողը, զգուշացնելով փողոցներում պատահող անցորդներին ու կառքերին։ Նրա փողի հնչյունները տարօրինակ կերպով հուզում էին իմ կուրծքը, սիրոս սաստիկ թրթոռում էր ուրախությունից, որ վերջապես, երկարատև ճանապարհորդությունից հետո, հասաւ այնտեղ, զետի ուր եռանդադին ձգտում էր իմ բոլոր անձը։

Համակառքը, մի քանի նեղ ու ծուռ փողոցներ անցնելով, վերջապես կանգնեց մի հասարակ միհարկանի շինության առաջ։ Դա պոստի կայարանն էր։ Իմ երեք ուղեկիցներից մեկը, որ մի բարեսիրու, ալեղարդ ծերունի էր, միակ խոսակիցս էր բոլոր ճանապահորդության ժամանակ Պետերբուրգից մինչև Դորպատ, որովհետև բավական աղաս խոսում էր ոռուսերեն, թեև, ի հարկի, գերմանացուն հասուել արտասանությամբ։ Այս համակրելի պարոնը համարյա հայրաբար խնամում էր ինձ ճանապարհին, թե իջևաններում հոգալով իմ սնունդի մասին և թե կառքում փաթթելով ինձ իր լայն մուշտակի մեջ, որովհետև իմ թեթև վերակուն լավ չէր պաշտպանում ինձ 30 աստիճան ցրտի դեմ։

Երբ կառքից իջանք, բարեսիրու գերմանացին ասաց ինձ։

«Ահա, սիրելի բարեկամ, վերջացավ մեր ճանապարհորդությունը, և զուք շուտով կհանդստանաք ձեր բարեկամների մոտ տաք բնակարանում։ Բայց ասացեք, խնդրում եմ, ուր պիտի գնաք դուք։»

—«Պետերբուրգյան փողոց, ճարտարապետ Զիգելի տունը»,— պատասխանեցի ես։

«Գիտեմ, գիտեմ», ասաց նա—«այնտեղ բնակում են մի քանի կովկասցի հայ ուսանողները: Ես ճանաչում եմ ձեր հայրենակիցներից մի քանիսին: Նրանք բոլորն էլ կտրիմ, աշխատասեր և աղնիվ երիտասարդներ են և շատ սիրով ընդունված են քաղաքիս լավ ընտանիքներում: Ես նույնպես ճանաչում էի սրանից տասնհինգ տարի առաջ ալ. Արովյանին, որ մի շատ եռանդուն և պատվական երիտասարդ էր: Եթե չեմ սխալվում, նա կարծիմ առաջին հայ ուսանողն էր այստեղի համալսարանում: Հետո եկավ ալ. Նազարյանցը, ապա ալ. Խատիսյանցը, որ նոր ավարտեց ուսումը և վերագրաբավ իր հայրենիքը: Դրանք, անշուշտ, այժմ օդատակար անդամներ են իրանց հասարակության, և իրանց անխոնջ աշխատանքով ձեռք բերած գիտության պաշարով ծառայում են իրանց հայրենակիցների մտավոր լուսավորության գործին»:

—«Այո»—ուղարասիսանեցի ես անվատահ, որովհետեւ ամոթով պիտի խոսառվանեմ, որ նրա հիշած անուններից և ոչ մեկը ծանոթ չէր ինձ: Բայց զրա հակառակ շատ լավ հայտնի էին Պուշկինը, Լերմոնտովը, Գոդովը և ուրիշ ուսա գրողներ, որոնց շարադրությունները ոչ միայն կարգացել էի ծայրեւ ի ծայր մի քանի անգամ, այլ շատ բան անգիր էլ գիտեի:

«Ես հույս ունեմ, որ առաջին և վերջին անգամ չենք պատահում իրար, և էլի առիթ կունենանք խոսել ձեզ հետ այս առարկայի մասին: Այժմ պետք է հոգալ ձեզ տեղ հասցնելու», — ասաց բարեկամս և պատվիրեց կայարանի ծառային մի սահնակ բերել ինձ համար:

Երբ սահնակը եկավ, ճանապարհի կապոցս տեղավորեցին նրա մեջ, և իմ գերմանացի բարեկամը նստեցնելով ինձ սահնակ մեջ, պինդ սեղմեց ձեռս և ասաց:

«Յտեսություն, սիրելի բարեկամ: Յանկանում եմ ձեզ կատարյալ հաջողություն, ինչ նպատակով որ եկել եք այստեղ ձեր հեռավոր հայրենիքից: Խնդրում եմ չմոռանաք ինձ և երեխն, երբ ազատ ժամանակ ունենաք, այցելեցեք ինձ: Իմ տունը հեշտ է գտնել. դա ուղիղ գերմանացոց եկեղեցու գիմացն է: Այստեղ ում հարցնեք Մյուլերի տունը, իսկույն ցույց կտան ձեզ»:

Ես սրտանց շնորհակարություն արի, խոստանալով անպատճառ օդավել նրա սիրալիր հարավերից:

Նա մի անգամ էլ սեղմեց ձեռս և ասաց կառապանին. «Պարոնին կտանես Պետերբուրգյան փողոց, Զիգելի տունը»:

Մենք բաժանվեցանք:

Հիանալի պարզկա լուսնակ երեկո էր։ Փողոցների ասլակու  
պես հարթ սառած ձյունը պեծպեծին էր տալիս, կարծես թե  
ծածկված էր միլիոն միլիոնավոր մանր ադամանդներով։ Երկնի  
սահնակը նետի արագությամբ սահում էր փողոցներում, և տասը  
ցոսկերց հետո կանգնեց մի երկինարկանի փայտաշեն տան մուտքի  
առաջ։

— Զիգելի տունը, — ասաց կառապանը։

«Տպագ», 1911 թ., № 1:  
Տպագը մի հասլած

# ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼՅԱՆ

Նշանավոր բանահավաք, հեքիաթագիր Սարգիս Քամալյանի գրի առաջ հուշերը գրքում զետեղած նյութերից ամենածավալունն է: Հարգելի բանահավաքի տարիների որոնումների արդյունքն են այս հուշերը: Զբավականանալով լսած հուշերի հաջորդական շարադրումով, Քամալյանն ալիւացրել է նրանց վրա նաև իր ունեցած տեղեկությունները, տալով Արովյանի կյանքի և գրական գործունեության մի ամբողջական շարադրություն: Քամալյանի այս աշխատության մեջ ամենաարժեքավորն այն է, ինչ գրի է առնված Արովյանին ճանաչող ժամանակակիցների բերանից:

Գերմանացի բժշկապետ Օտտո Ֆուլբերգի հիշողություններում մեր առաջ կենդանանում է աշխատժ, հայրենասեր երիտասարդը՝ Խաչատուր Արովյանը, սիրութ իի հայրենիքի սիրով և նրա անօգնական կացության գիտակցությունից առաջացած վշտով, ամբողջ էությամբ իր ժողովրդին նվիրվելու, նրա սիրուն ողջակեզ լինելու ազնիվ ցանկությամբ: Այդ են ապացուցում նրա տիտուր երգերը, նրա խոր հառաջները, որոնք երբեմն փոխվում են բարձրաձայն լացի: Նա հաճախ խորհրդածում է լուսնի ու աստղերի հետ: Այս միանգամայն կենդանի մարդկային գծերն սքանչելի կերպով բնութագրում են Արովյանին: Մենք խորապես հասկանում ենք նրա ապրածն ու զգացածը, սրտով՝ հաղորդակից լինում նրան:

Աքիմյանի հուշերում Արովյանը ներկայանում է իրեք իր գործին սիրով և հոգածարությամբ նվիրված մի մանկավարժ: Նա սաների մեջ տեսնում է իր երազների, փայփայած լավագույն տեսների գալիք երագործողներ: Այդ դաստիարակն իր սաների մեջ ցանում է բարու և գեղեցկի սերմերը, ավանդում իր մեծ և խոր սերը գեպի ժողովրդին ու հայրենիքը:

Աքիմյանի հուշերում վեր է հանդում նաև Արովյանի՝ իրեք ստեղծագործողի առանձնահատկություններից մեկը՝ նրա ստեղծագործության կապը ժողովրդի հետ: Այս ասթիվ Աքիմյանի հաղորդավագ փաստերն առանձին կարևորություն են ստանում: Նրանք, լրացվելով մեզ ծանոթ այլ փաստերով, պարզում են Արովյանի ստեղծագործության ժողովրդայնության գաղտնիքը, ժողովրդի հետ ունեցած նրա խոր, անմիջական կապը, ժողովրդի կյանքի նկատմամբ ցուցաբերած նրա մշտական սերն ու հստագրքությունը:

Ով ծանոթ է Արովյանի անմահ «Վերը Հայաստանի»-ին, նրա առակներին ու ողջ ստեղծագործությանը՝ շատ լավ կնականա, թե մեր մեծ ժողովրդասերի համար որքան բնութագրական են Աքիմյանի հուշերի հետեւյալ տողերը «Մեր գարժապետն առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական տռներին՝ դիտելու ուսումնասիրել օքաները, բաներ քաղել այնտեղից: Բայց նա օքաները լոկ զվարձանալու համար չեր գնում, այլ ինչպես ասի, ուսումնասիրելու համար: Երկար կանգնած ականջ էր դնում, թե ժողովուրդը՝ մարդ թե

կարել, ինչպես են խոսում, ինչից են հաճույք զգում, կամ ինչպես Են պահում իրենց։ Սա մի սքանչելի պատկեր է, որ արժեր նկարչի վրձինով անմահացնել, ինչպես տաղանդավոր նկարիչ Եղիշե Թաղեսյանի վրձինով անմա-



### ՍԱՐԳԻՍ ՔԱՍԱԼՅԱՆ

Հացել է հանճարեղ Կոմիտասը՝ ժողովրդութան երգերը գրի առնելիս Զարմանալիք նմանություն . . . մեկի մոտ ժողովրդի զրույցն է, մյուսի՝ մոտ՝ երգը. երկու գեղջում էլ խոսում է ժողովրդի սիրաց, նրա հարազատ լեզուն:

Աքիմյանի հուշերում «Ներք Հայաստանի» վեպի տպագրության վերաբերող մասը ասիթ է տալիս հետաքրքիր խորհրդածությունների. չէ՞ որ այդ

անմահ ստեղծագործության ճակատագիրը նույնքան ողբերգական է, որքան-նրա անմահ հեղինակինը Պատմությունն այդ գործի վրա զրել էր մեր կուլ-տուրայի մեջ արժատական հեղաշրջում կատարելու մեծ և պատասխանատու դերը, սակայն երբ մտածում ես, որ այդ գործը կարող էր զո՞ն գառնալ կույր պատահականության ու անհետ կորցել՝ սարսու ես զգում և խոր երախտագի-տությամբ ես լցովում գեափի Գ. Աքիմյանը և Փողոյանցը, այդ գործն առաջին-անգամ լույս աշխարհ հանողները, որոնք, հակառակ տիրող մտայնության՝ հասկացնան նրա արժեքը:

Մենք մտազրություն չունենք մի առ մի թվել այն բոլորը, ինչ ուշա-գրավ ու արժեքավոր է այս հուշերում, այդ ավելորդ է: Ինչ որ ասվեց, միան-դամայն բավական է այս գործի վրա ընթերցողի ուշադրությունը հրավիրելու համար:

Վերջում ավելորդ չենք համարում ընթերցողին զգուշացնել հուշերում տեղ գտած մի քանի անձշտություններից:

ա) Հուշերում ասված է, որ Արովյանն ունեցել է երեք զավակ. այդ սխալ է, նա ունեցել է երկուսը որոնցից ավագը—տղամարդ Վարդան անունով, կրտսերը—աղջիկ՝ Զարմանդուխտ անունով:

բ) Սխալ է այն կարծիքը, թե Արովյանը Թիֆլիսի գավառական դպրո-ցում հայի ուսուցիչ է նշանակվել, ապա տեսուչ: Արովյանը թե տեսուչ և թե ուսուցիչ նշանակվել է միաժամանակ:

գ) Հուշերում ասված է, որ Արովյանի կենդանության օրոք լույս տեսակ «Պարապ վախար խաղալիք» առակների գիրքը սխալ է: Վիճականը բախս է ունեցել տղագրված տեսնելու միայն Շնախաչավիթութեա-լ առաջին մշակումը՝ «Պարապ վախտի խաղալիք»-ը լույս տեսակ է. Էնֆիեաճյանի հրատարակությամբ 1864 թվին, հեղինակի անհայտնալուց 16 տարի անց:

դ) Աքիմյանն ասում է, որ 1838 թվից սկսած Արովյանը «Ազասու պատ-մությունը հատված-հատված կարգում էր պահանջների աշակերտակությունը:

«Վերը Հայաստանի» վեպի ինքնազրի վրա հեղինակը սեփական ձեռքով նշանակել է 1840 թ.: Առաջին հայացքից կարող է թվար, որ այսուել ոչ մի հակասություն չկա, գործը կարող էր սկսած լինել 1838 թ., ավարտել 1840-ին: Սակայն ով ծանոթ է «Վերը»-ին և նրա ասածարանին՝ զիտե, որ այն ար-դասիք է հախուսն զգացմունքների ուժգին պոռթկման Այդ մասին կա հեղի-նակի հայտնի վկայությունը վեպի առաջարանում: «Վերը Հայաստանի»-ն սկսված և հիմնականում ավարտված է 1840 թվին, այն էլ կարճ ժամանակա-միջոցում:

ՆԵՄԵՅ ԵՎ ՀԱՅ ԾԵՐԵՐԸ ԱԲՈՎՅԱՆՑ  
ԱՆՄԱՀ ԽԱՉԱՏՐԻ ՄԱՍԻՆ

1898 թվի սեպտեմբերին, հայակեր Գոլիցինի դաժան ռեժիսի միջոցին, ևս՝ Քամալ. Ս.-ը ստիտլած էի Կովկասից հեռանալ դեպի հյուսիս: Դրա պատճառը հայ գոլրոցների փակման առթիվ էմ կազմած այլաբանական զրույցն էր. «Աև լինի այդպիսի վարձքը» վերնագրով, տպված «Արձագանք» լրագրում, որով հայ կաթողիկոսն անարգում էր ուսւ ինքնակալին իրա զործած ահոելի անիրավության համար: Այդ ֆելետոնի պատճառով բռնավոր կուսակալի հրամանով փակվեց «Արձագանք»-ը, իրբև պետական շահերի վասակար թերթ:

Եվ 18 տարի գասատվությունով պարագելուց ետ վճռեցի գնալ համալսարան և ուղևորվեցի դեպի Պետերբուրգ: Եղյանց մեծարգո Կարապետը հեռվից ինձ ճանաչում էր «Արձագանք»-ում տպված իմ բանասիրական հոդվածներից: Երբ նրան այցելեցի, նա ասաց.

— Քանի որ ձեր մտադրությունն է Գերմանիա անցնել և կովկասի կուսակալը ձեզ անցաթուղթ չի տալիս, ես խորհուրդ կտամ գնաք Դորպատ և զրվեք համալսարանի ազատ ունկնդիր, դա կլինի նախագուռ Գերմանիա անցնելուն: Դորպատում հեշտ կլինի բարեհուսության վկայական ձեռք բերել: Բայց ձեզ դեպի Դորպատ ուղևորելով մի բան եմ առաջարկելու, ոուք սիրում եք ծերերին խոսեցնել մինչև օրս բավական շահական նյութեր եք քաղել նրանց բերանից: Միսկին-Բուրջի աշուղը կորած էր, Գանձակի ծերերին խոսեցնելով կազմեցիք նրա կենսագրությունը: Բայց կասեմ ձեզ՝ եթե Դորպատ գնալով կարենաք տեղական ծերերի մեջ Արովյանց Խաչատրին ճանաչող մի ձեր նեմեց գտնել ու խոսեցնել, Դորպատից նրա հեռանալը հազիվ 50—60 տարի է, անկարելի է որ այնտեղի պրոֆեսորների, պաստորների մեջ 80—90 տարեկան ծերունի չկինի, շատ ուրախ կլինեմ, եթե աշողվի ձեզ այդպիսի գյուտ անել:

1898թ. սեպտեմբերի վերջերին մտա Դորիքատ, որ գտնվում  
է կմբախ գետի ափերին: Մի քանի ամսից հետ կարող էի հարց  
ու փորձ անել ծերերի մասին: Վարժուհուս միջոցով իմացա, որ  
80 և ավելի տարեկան գերմանացի ծերեր կան. ցուցակ կազմեցի  
ու հետզետե այցելեցի Նրանց, ըսլորը պրոֆեսորներ, պատուր-  
ներ, բժիշկներ էին՝ Հանրե, Իտաշե, Գյորել, Շվարց, Հերշելման-  
և այլն: Դրանցից ոչ մինը ծանօթ չէր եղել Աբովյանց ուսանո-  
ղին և չկարողացավ որևէ տեղեկություն տալ նրա մասին: Քա-  
զաքի միջի, գետի աջ ափին գտնվող Դոմբերգ նշանավոր պարկի  
ծառերն անթիվ անդամ տեսած ու լսած կլինեին Աբովյանցին-  
նրանք էլ լեզու չունեին, որ նրա մասին պատմեն: Մնացել էլ  
մոլորված, սրտակոտը, ու արած փորձերս ապարդյուն, անաջող  
էին անցնում: Մտահոգված ասում էր՝ մեծարդու Եղյանցը հիմի  
կկարծի թե իր առաջարկը մտահան եմ արել: Նամակով նրան-  
հայտնել թե այստեղ մեր Աբովյանցին ճանաչող ծեր չկա, գժար  
էր թվում, ամաչում էր:


1899թ. վիերավարի մի ցուրտ ու ձյուն օր էր, ես էլ զա-  
րիբի պես տխուր, քաղաքամիջից բարձրանում էի Դումբերգ ծա-  
ռապատ պարկով, որ համալսարանի մատենադարանում պարապեմ:  
Արդեն հասել էի պարկի երկու մասերն իրար միացնող կամրջի տակը,  
աչքովս ընկապ մի նիհար, լանջը ճերմակ միրուքով կալած, կար-  
ճահասակ ծեր, որ կամենում էր կամրջի տակով ներքեւ իջնի, բայց  
քայլերը վախիսելով էր փոխում, մայթի սալաքարերի վրա կըրկ-  
նակոշիկները ձեռին բռնում, քիչ էր մնում ընկնի, ջախջախվի:  
Սիրտս ասեց, խոռնացած վերարկուից երկում է, որ աղքատ մարդ  
է, շուտ վազիր, կոնից բռնիր: Հասա մոտը, կոնատակից ամուր-  
բռնած ըերի կամրջի ներքեւ մի ապահով տեղ: Ծերը համակրելի,  
անուշ գեմք ուներ, ավելի ինտելիգենտի էր նման, քան հասա-  
րակ քաղաքացու. շնորհակալություն արեց ու բարի աչքերը  
վրես հառելով ասեց. Սիրելի երիտասարդ, եթե աղոտած, թույլ  
աչքերս չեն սիսալում, վստահ կասեմ, որ դուք օտարերկրացի  
եք, թույլ գույնը հետներդ բերած, բայց լննդրեմ, ասեք, ո՞ր աշ-  
խարհից եք, որ ինձ այսօր քաղցր ծառայություն արիք. ես ընկ-  
նելու մոտ էի, ով զիտե, ինչ կարող էր պատահել ինձ այս սար-  
քարերի վրա:

— Ես հայ եմ, Կովկասից եկած, ծերուկ, —պատասխանեցի  
նրան: Նշմարեցի, որ Արմենից բառը լսելիս թույլ ծերը մարմնով  
ամրողջովին ցնցվեց: Մտքովս անցավ՝ չլինի թե մի օրհնված ձեռ-

Արովյանց Խաչատրին ճանաչող նեմեց ծերին իրա տանից այսօր հանել, բերել է առջևս կանգնացրել:

— Միթե գուք հայ եք, բացականչեց նիհար ծերը, որքան ուժ ուներ, ամուր բռնեց բաղկեց ու հուզված խոսեց.

— Ա՛յս, ի՞նչ եմ լսում, ուրեմն գուք իմ սիրելի Արովյանցի հայրենակիցն եք, Ո՛հ, ի՞նչ երջանիկ օք է այսօր ծերիս համար: Դուք չգիտեք թե որքան կարոտ էի հայի երես տեսնելու, Արովյանցի մասին բան իմանալու: Ողջ ձմեռը տանը փակված եմ եղել խնամատար կինս չի թողել բնակարանից հեռանամ: Ի՞նչ լավ էր, որ այսօր անուշադիր եղան նրան ու քաղաք իջնել կամեց, փառք և գոհություն տերին, աչքերս հավիտյան փակելուց առաջ կարող եմ իմ սիրելի Արովյանցի մասին որևէ բան իմանալ:



ՕՏՏՈ ԴՈՒՄԲԵՐԳ

Ես մնացել էի ապշած այս անակնկալի վրա, ակնապիշ նայում էի թանկադին ծերի երեսին ու սրտիս մեջ ցնծում, որ վերջապես մեծարգո եղյանցի մոտ պարզերես գուրս կդամ: Ել չթողի, որ ցանկալի ծերը վողոցում կանգնած մնա, իսկույն կառապան կանչեցի ու տարս իրա օթևանը, ուր ծանոթացրեց իր պառավի կնոջ ու մի գստրի հետ: Դուրս եկավ, որ ինձ անակնկալ պատահող ծերը բժշկապետ է, Օտառ Դումբերգ անունով, ծնված 1821 թ. հունվ. 16-ին: Ամբողջ 30 տարի ծառայել է Ալտայան կողմերում իրեն շրջանային տեսուչ, միայն ծերության օրերին գարձել է Դորպատ ու ապրում է իրբե թոշակառու: Անդամ է համալսարանի

թանգարանի պահպանության և գիտական ընկերության: Մեծ դուստրը նշանավոր գաշնակահարուհի է և բարոնի ամուսին, երկրորդ դուստրը պլովֆեսորի կին է, երրորդը զիմնազիայի զիշեկառի կին է Պետերբուրգում: Մի տղա ունի Ալեքսանդր անունով, ծառայում է օտար գավանությունների գեպարտամենտում:

Հանդիպելու օրվանից մենք գարձանք մտերիմ բարեկամ-ներ: Երկու օր չանցած սիրելի ծերը եկավ օթևանս և ասեց:

— Դիտեք ինչ, ևս իմ պլով։ Պարբռտի գիրքն իրա ժամանակին կարդացել էինու շատ բան մոռացել։ Ձեղ պատահելուց հետո զնացի համալսարանի գրադարանից վերցրի, նորից սկսեցի կարդալ մեծ բավականությունով ու Աբովյանցի վերաբերմամբ տպագորություններս թարմացրի։ Խորհուրդ կտամ, դուք ևս կարդաք, դժար չի, կհասկանաք, շատ կենդանի գրվածք է, վերնագիրն է „Reise zum Ararat“։ Աբովյանցի մասին կխոսեմ, առայժմ պատմեմ թե՞մեր Պարբռտն ինչպես է հանդիպել ձեր մեծ հայրենակից Աբովյանցին։

Մեր Փիզիկոս Պարբռտը ծնվել էր 1791 թ., վախճանվեց 1841 թ.։ Պսակվել է՝ անգամ, առաջին կնկանից ունեցել է մի դուռապ, որ գարձել է նշանավոր վիրահատ Ցեղեցի Մանստոֆեյի մայքը. երկրորդ կնկանից ունեցել է 3 տղա, նրանցից մեկի՝ Մուրիցի կինն այժմ ապօռւմ է Դորպատում, եթե կարիք լինի, կտանեմ նրա մոտ։ Պարբռտը ճանապարհորդելու դուրս է եկել Դորպատից գեպի ձեր 1829 թ. մարտի 30-ին և մերագարձել 1830 թ. փետրվարի վերջին։ Դեռ ամենից առաջ այն առեմ, որ Պարբռտն իր գրքի մեջ ամեն տեղ Աբովյանցին հիշելիս անվանում է գիտակոնուս։ 1829 թ. սիրելի գիտակոնուսը, Պարբռտի տակը, եղել է 20 տարեկան, ուրիշն ծնված պետք է լինի 1809 թվին։ Պարբռտն այստեղից Թիֆլսի հասնելուն պես, պաշտոնական անձերին ներկայանալուց հետ, այցելել է հայոց սեմինարի տեսչին, որ ուսւագետ քահանա թե վարդապետ է եղել Ալամդարյանց ազգանունով։ Երբ թարգմանի առիթով Պարբռտը խոսք է զցել, տեսուչն ասել է՝ իմ աշակերտ Խաչատոր Աբովյանցը հջմիածնի վանքումն է, նա լավ թարգման կլինի։ Նամակ է տվել մի Օսեփ վարդապետի վրա, որ վեհի մոտ միջնորդի, տիրացու հաչատրին զնել տա պլով։ Պարբռտի տրամադրության տակ Այդպիս էլ կատարվում է։ Պարբռտի գրելով՝ հջմիածնինը ծովից բարձր է 2867 ոսնաչափ։ Ամեն պատրաստություն տեսած, մարդիկ վերցրած գնում են գեպի վիթխարի Մասիս։ Դուք հայերդ այնտեղ Ս. Հակոբի վանք ունեք, դա դառնում է Պարբռտի կայսեր։ Երբ առաջին վերելքն անաջող է անցնում, սարից իշնում են այդ վանքը։ Այդ վերելքի միջոցին Պարբռտի հետ էր Սահակ անունով մի հայ որսկան։ Երկրորդ վերելքի միջոցին Աբովյանց գիտակոնուսն էր հետը, բայց չհասան կատարը, դարձան։ Այդ փորձերը վստահություն էին ներշնչել. երրորդ վերելքն սկսեցին, Աբովյանցը դարձյալ հետն էր, երկար տալատ (կապա) հագին,

մի փայտե խաչ էլ շալակին: Երբ 13 հազար ոտնաչափ բարձրացած են եղել, այդտեղ մութը կոխել է, ուղեցել են Մասիսի լանջին գիշերել. ցրտահար չլինելու, փորը տաք պահելու համար Պարբռտը սպիրտով կերակուր է պատրաստում, մեջը յուղ, սոխ ածելով, բայց անչափ ցավում է, որ Արովյանցը կերակրին չի մոտենում, պատճառ է բերում թե ուրբաթ օր է և հայերի համար պաս է: Զարմանալի ավանդապահ Արովյանցը ոչ մի թախանձանք չի լոււմ, սոված է քնում:

1829 թ. սեպտ. 27-ին վերջապես հասնում են Մասիսի ամենաբարձր կատարին, զիակոնուսը տարած խաչն իրա ձեռով տնկում է ձնի մեջ: 6 հոդի են լինում կատար հասնողները՝ Պարբռտը, Արովյանցը, 2 կազակ, 2 հայ որսկաններ՝ Մուրբադ և Օհանես: Շատ գեղեցիկ է նկարագրում Պարբռտը Մասիսի գագաթից երևացող տեսարանը, արժե կարգալ 159 էջը: Արովյանցը տարի կատարից հետը վերցնում է թաշկինակով ձյուն և կեսը ջուր կըտրած հասցնում էջմիածնի վանքը:

Պարբռտի զրքի անթիվ էջերում հիշվում է Արովյանցի տնունը. քանի այդ գերքը կա, Արովյանցը կմնա անմահ:

233 էջում նկարագրում է Քանաքեռը, Արովյանցի հայրական տունը. այդ գեղը ծովից բարձր է 4148 ոտնաչափ: Դիակոնուսի ուշիմությունը շատ էր դուր եկել պրօֆ. Պարբռտին. Երբ իմանում է, որ չնայած վանական երկար վերաբերուով շրջելուն, Արովյանցը ջերմ փափագ ունի ուսումը շարունակել եթե հնար տվող լինի, խոստանում է նրա փափազը կատարել, ուսումնածարակ չթողնել: Պարբռտը Պետերբուրգ վերադառնալով, միջնորդում է ուր հարկն է, և կառավարության հաշվով Արովյանցը, իրեւ թոշակառու՝ 1830 թ. ամառը գալիս է Դոբռպատ երկար տալատը հազին: Այդ հագուստն այսուղ իհարեկ փոխեց. հագնում էր ուշ սերտուկ:

Պարբռտի մտադրությունն էր Արովյանցից պատրաստել հայ գլուցների համար մի ընտիր մանկավարժ՝ գերմանական մտքով: Նախ և առաջ իր տանը պահելով՝ նրան պատրաստել տվեց գերմաներեն լեզվից, որ մտցնի տեղիս ուսուցչական սեմինարիան, որի տեսուչն էր Ռողենբերգը: Պարբռտի համար դժար բան չէր Արովյանցին համալսարանի ուսանող դարձնելը, քանի որ նրա հիմնագիրն էր իր մեծ եղբայր Ֆրիդրիխ Պարբռտը: Դա անդրանիկ ուեկտորն էր, որի մեծ պատկերը կախած է համալսարանի գլուցարանի վերև: Բայց այդ չէր կարելի, որովհետև դիակոնու-

սը գիմնազիավայրու չէր: Պարբոտի խնդրանոք Արովյանցի հետ պարապում էին գերման պրոֆեսորներ՝ Բլումբերգը, Ֆրիդլինցի բերը, Վալտերը, Դրասը, իսկ ամենից շատ՝ ինքը Պարբոտը: Արովյանցը գիտեր հայերեն, ուսւերեն, այժմ սովորում էր գերմաներեն, ֆրանսերեն:

Սիրելի ծեր բժշկապետն այսչափ երկար խոսում էր մեր Արովյանցի առթիվ: Նրա կարծիքը ճիշտ է, Արովյանցը համալսարանի ուսանող չի եղել. 1899 թ. ինքս անձամբ քրքրեցի Դորովատի համալսարանի սովոր ալբումը և Արովյանց Խաչատրի անունը չգտա 1830—36 թվերի ուսանողների թվում: Համալսարանի ամենառաջին հայ ուսանողը եղել է Նաղարյանց Ստեփանը: Արովյանցի հուշատետը նրա ավագ թոռ Կոստանդինի ներկայությամբ մի առ մի աշքի եմ անցկացրել, նայել եմ, այնտեղ համալսարանական պարապմունքի մասին ոչինչ չի հիշվում:

— Արովյանցը,—պատմում էր ծեր Դումբերգը,—շատ կայտառ, խնդումերես երիտասարդ էր. լավ հիշում եմ, ես այն ժամանակ տասերկու տարեկան տղա էի ու միշտ տեսնում էի նրան Պարբոտի տուն գնալիս. երբ կամենաք, ցույց կտամ Պարբոտի բնակարանը, որտեղ Արովյանցն ընդունված էր ինչպես հարազատ որդի: Նրանից ետ, երբ ես տասնչորս տարեկան էի ու այրի մորս հետ ապրում էի Վիլբույյի տանը, այդաել կացարան ուներ նույնապես Արովյանցը. պատի մի կողմը նա էր, մյուս կողմը ես ու մայրս: Ամբողջ շարի պատկից հարեւաններ էինք: Նա երգասեր, աշխույժ բնավորության տեր էր, ճիշտ է՝ հասակով կարճ էր, բայց ամբակազմ ու գեղեցիկ. կովկասցիք թխադեմ են, իսկ նա ավելի խարսյաց էր:


Պրոֆեսորների մասերը դասերի գնալիս նրան միշտ հյուրասիրում էին մրգով, թեյով. Պարբոտի պատիմա այստեղ շատ մեծ էր, ի հարգանս նրա՝ Արովյանցին, իբրև նրա հiebling-ի, գերմանական շատ ընտանիքներ հրավիրում էին ու միշտ հետը զրուցում. զրա հետևանքով Արովյանցը գերմաներեն լեզվին շուտ ու լավ տիրապետեց: Պարապ նստել նրա համար գոյություն չուներ, շարունակ կարգում, ուսանում էր: Նրա մեջ մի բան էր նշմարվում—հայրենի երկրի կարուղը հանգիստ չէր տալիս, գիշեր ցերեկ մտքից չէր հանում ծնողներին, ազգականներին: Ազատ ժամին մեկ էլ տեսար ձայնը վեր քաշեց, սենյակը գոռում գոչումով լցրեց. թվում էր, թե խաղ կամ երգ է ասում՝ մեզ անհասկանալի երգլով, երկի հայերեն կամ թուրքերեն: Թուսերեն երբեք չէր եր-

գումար. երգածի մեջ թախիծը շատ էր, անս ու վախ շատ էի լուսմ: Իմ պես մի պատանու համար շատ ախորժելի էր լսել նրա տարօրինակ երգեցողությունը, բայց հիվանդոտ խեղճ մորս զբությունն իսկի նախանձելի չէր: Արովյանցն իբրև բնության ծոցում մեծացած տղա, հիշելով հեռու հայրենիքում թողած ծնողներին, բարեկամներին, շարունակ թնդացնում էր իր ձայնը և մորս ջղային դարձնելով՝ հանգիստ խում: Նրա կերպարանքն այնքան հաճելի էր, որ մայրս առանց գժղոնելու կամ լուրջ բարկանալու՝ համբերում, տանում էր նրա գիտ արարքները: Երբ իրա գոռզուսոցով չափն անց էր կացնում՝ մայրս պատվիրում էր ինձ, որ ձեռքով թեթև խփեմ պատին, Արովյանցը քիչ չափավորի իրա ոգեսրությունը, բայց նա իսկույն լսելու տեղ երկար ծոր էր տալիս, հայ հայ կանչում: Թե մենք, թե ուրիշները գիտեինք, որ Արովյանցը պրոֆ. Պարրոտի hiebling-ն է, սիրելին, գրա համար էլ ոչ ոք չէր համարձակվում նրան որևէ կերպ վիրավորել այլ ամենքը սիրով ու հարգանքով էին վերաբերլում նրան:

Հետագա տարիներին Արովյանցի հետ ապրել եմ ուրիշ տան մեջ, որը գտնվում էր Ռիգաշե փողոցում. այդ տան տերն էր գընդապետ Գիբահարտը, զբա կինը. քույրն էր այն արիկին փոն Կայզերի, որի տանն ապրում էր պրոֆ. Պարրոտը. Զարմանալի ընդունակ զլուխ ուներ ձեր Արովյանցը. Փրանսներենի մեջ լսվ հմտանալու համար սեմինարի դասընթացը քիչ էր համարում, մասնավոր դասեր էլ էր տանում: Ցանկացած միջոցին՝ Պարրոտի շնորհիվ լսում էր համարաբանում այս կամ այն պրոֆեսորի լեկցիաները: Ինչ որ հետաքրքրում էր նրան, նրանով էլ զբաղվում էր Արովյանցը, ավելի քաշում էր նրան ընդհանուր կրթությունը՝ էնցիլուսեղիան. կարծ՝ այստեղ գիտուն ու բարեխիղճ ուսուցչապետաների միջոցով պատրաստվում էր զառնալ հմուտ դաստիարակ ու պատանեկությունը սիրող ուսուցիչ:

Նա երգեցողության հետ սիրում էր նաև երաժշտությունը, երգելու հետ նվազելու սեր էլ ուներ, նա վարժվում էր կլավիրի վրա: Այս, սիրելի հոգին բազմակողմանի ձգտութեաների հետ ուներ նույնպես բազմակողմանի ընդունակություններ: Մի օր տեսա, նա փողոցից եկավ ձեռին բռնած նվազելու մի հին գործիք—սպինետ կոչվող տեսակը. գնել էր 2 ոսուբլի 60 կոպեկով: հենց որ պարապմունքներից ազատ բռպե էր գանում, խեղյն սկսում էր չխչխացնել սպինետի վրա ու խեղճ մորս ջղերը տե-

զահան անելը Նվագելիս կուպղետներ էր երգում, չգիտեմ՝ հայեցին էին, թե թուրքերն:



ԱՅՆ ՏՈՒՆԸ ԴՈՐՊԱՏՈՒՄ, ՈՐՏԵՂ ԱՊՐԵԼ Է ԱԲՈՎՅԱՆԸ

Գիպհարտի տան առաջ մի մեծ ծառ կա, ձեզ անպատճառ ցույց կտամ. պանդուխտ Արովյանցը լուսնյակ գիշերներին նատում էր ծառի տակ, մեջքը բնին դեմ տալիս, աչքերը երկինք դցած խոսում լուսնի, իր հայրենի աշխարհի, սար ու ձորի հետ՝ զանազան կուպղետներ երգելով։ Այդպիսի հուզումնալից բոպեներին նրա աչքերից արտաստոքները թափվում էին, ևս կողքին նստած փարփում էի նրա վզով, իրեն իմ ավագ եղբոր և համբուրում։ Ես նրան շատ էի սիրում, ուստի անչափ տիրեցի, երբ մայրս մեր ընտանեկան գործերի պատճառով ուղևորվեց Ռիզա, ես էլ ակամա այդ բնակարանից տեղափոխվեցի ազգականիս տուն՝ մինչե մորս վերադառնալը։ Գնացի աիկ, Կայզեր ֆոն Նիլկհայմի տունը ու նրա ուսանող Թեոդոր որդու հետ ապօռում էի ձեղնահարկի մի սենյակում։


Այդ ուսանողի մոտ հաճախ գալիս էր ձեր մյուս, նույնպես  
նշանավոր լօնցմանն-ը՝ Նազարյանց Ստեփանն իրեկ նրա մտե-  
րիմ ընկեր։ Ես Նազարյանցին ճանաչում էի մեր գիմնազիայից։  
Նա ինձանից 6-7 տարով մեծ էր, բայց երբ նրան առաջին ան-  
գամ գիմնազիա բերին, վոքքերիս շարքում նստացրին. պատճառը  
նրա գերմաներեն չիմանալն էր, իսկ գիմնազիայում բոլոր առար-  
կաները գերմաներեն էին անցնում։ Նա միայն ոռուերեն գիտեր,  
սակայն երբ սկսեց պարապել գերմաներեն, այ զարմանք, նա-  
լեզուն ոչ թե սովորում էր, այլ անկուշտի պես կլանում։ Տեր ի՞ն  
աստված, ի՞նչ երեխի գլուխ ուներ այդ հայը, ամեն մի տված  
դաս անզիր սերտելով, լեզվին այնպես շուստ և արագ վարժվեց,  
որ կարձ միջոցում ստորին բաժանմունքների գլխով թռավ, հա-  
սավ իր հասակակից գերմանացիներին։ Կեղուներ ստվորելու մեջ  
անշափ ընդունակ էր. գիմնազիան ավարտելիս Նազարյանցն իր  
հայ տեղով ինձանից լավ էր խոսում գերմաներեն։ Նա մարմնով  
խոշոր էր, բարձեն կազմվածք ուներ. Աքովյանցից 4-5 տարով  
փոքր էր, բայց հասակով բարձր նրանից։ Հիշում եմ նրա սե  
թերթերունքներով շրջապատված կրակոտ աչքերը. միս, ի՞նչ զար-  
մանալի աշխատասեր էր այդ Ստեփանոսը։ Հագուստից նկատելի  
էր, որ ապրուստի համար քիչ էր փող ստանում։ Նա գիմնազիա-  
յում մնաց 5 տարի և 1835 թ. մտավ համալսարան ու ավարտեց  
1840 թ., իսկ ես 1840 թվին մտա, 1845 թ. ավարտեցի և 1856 թ.  
Բարնառուում արդին բժշկապես էի:

Նազարյանցն առաջ ապրում էր այստեղի Պետերբուրգյան  
կոչվող փողոցում. փողոցով անցնելիս իսկույն աչքի էր ընկնում  
բարձր հասակով, զեղեցիկ զեմքով, սև սաթի պես երկար մազե-  
րով։ Նա ուսանող Թեոդորի մոտ հաճախ գնալ-գալով ծանոթացել  
էր իմ ազգական օրիորդ կիլին հետ, որի եղբայրն այդ ժամանակ  
պաշտոնավարում էր նորանվաճ երեանյան նահանգում։ Այդ հան-  
գամանքն առիթ բռնած՝ նրանք երկուսով երկար զրույցներ էին  
անում կովկասի մասին։

Օրիորդ կիլն ուսանող Թեոդորի համար թելերով նախշած  
մի կրծկալ էր պատրաստել. այն ժամանակ ուսանողների մեջ  
սովորություն էր նախշուն կրծկալ հագնելը։ Օրիորդի ծանոթու-  
թյունը Նազարյանցի հետ այնքան ջերմ ու մտերմական էր, որ  
մի նախշուն կրծկալ էլ նրա համար պատրաստեց ու ընծայեց  
„Briderchen“-ին, ինչպես սովորաբար կանչում էր Նազարյան-  
ցին։ Հետագա տարին ես ապրում էի Նազարյանցի հետ փոստի  
շենքի գիմացի տանը։

Մի օր այս բարի ծերն օթևանս եկավ մի գրություն ձեռին.  
դա տեղեկություն էր Նազարյանցի մասին, որն իր ձեռով քաղել  
էր համաբարանի ալբոմից:

— Արովյանցի մասին այնտեղ տեղեկություն չկա,—ավելացրեց նա,—այդ պետք է որոնել տեղիս ուսուցչական սեմինարի հին թղթերը քրքրելով:



#### ԴՈՐՊԱՏԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԸ

Ծեր բժշկապետը սիրահոժար տարավ ինձ պտտեցրեց Դորպատի այս ու այն փողոցները, մի առ մի ցույց տվեց այն տները, ուր Պարբուար, Արովյանցն ապրել էին, հետո մոտենալով մի ճակա թեղի ծառի, գոչեց իր նվազ ձայնով.

— Ահա այստեղ էր նստում 60 տարի առաջ ձեր մեծ հայրենասերը, երբեմն գլխակոր, մտքերի մեջ խորասուզված, երբեմն էլ լուսնի հետ խոսելիս, երգելիս:

Մի քանի օր հետո հանել տվի այդ տների և ծառի լուսանկարները, որոնք անկորուստ պահված են թղթերիս մեջ:

— Վերջապես հասավ 1836 թ. գարունը, — շարունակեց 80 տարեկան ծերը, — երբ սիրելի դիակոնուսը կրթությունը լրացրած պետք է թողներ Դորպատը — Musenstadt-ը: Փոստի սայլակը պատ-

բաստ էր նրա համար: Նախօրոք Արովյանցը մեկամեկ պատել էր այն բոլոր պրոֆեսորների տները, որոնք իրեն ձբի դասեր էին տվել: Նրան սիրող պրոֆեսորները Պարբոտի գլւավորությամբ ժողովվել էին փոստատան՝ առջև: Արովյանցը հուզված արտասովում էր: Նրան ծանոթ տիկիններ, օրիորդներ էլ շատ կային: Զեղ մոտ սովորություն է հոգևորականի ձեռքը համբուրելը. Արովյանցն իր երախտագիտությունը ցույց տալու համար ցանկանում էր Պարբոտի և մյուս երախտավոր պրոֆեսորների ձեռները համբուրել բայց նրանք չթողին, իրենք համբուրեցին նրան: Ես և մայրս էլ ներկա էինք, մենք էլ հրաժեշտ տալով բարի ճանապարհ մաղթեցինք:

Պրոֆ. Պարբոտը նրան մի ծրար տվեց, պատվիրելով անձամբ հանձնել լուսավորության նախարարին: Արովյանցը գնալու էր Պետերբուրգ, որ չնորհակալություն հայտնի նախարարին ստացած թոշակի համար: Հետո մենք լսեցինք, որ կայսրուհին, նախարարից իմանալով Արովյանցի մասին, ցանկացել է տեսնել գերմանախոս, ֆրանսախոս հային: Արովյանցը ներկայացել էր կայսրուհին սիրալիր ընդունել է, նախաճաշիկի պահել, հետը զրուցել գերմաներն, ֆրանսուերն:

Այսպիս բաներ պատմով ծերն անչափ ուրախացավ սկզբում, երբ ինձնից իմացավ, որ Պարբոտի որդեգիրը մեր աղքի մեջ վիպասանի ու մանկավարժի մեջ հոչակ է թողել. սակայն վերջը շատ ախրեց, երբ լսեց որ 1848 թ. գարնանն անհայտ կորել է: Հեզանոգի բժշկապետը շեշտելով այսպես արտահայտեց իր վեշտը.

— Ավան այն գիտության պաշարին, որ նա այսաեղ Պարբոտի ու մյուս բարեկամ պրոֆեսորների միջոցով ամբարել էր զիսի մեջ և իր ուսումնածարավ ազդին ծառայել միայն 10—12 տարի... շատ ափսոս....

Քիչ հետո ծերն ավելացրեց.—Կովկասից նամակագրություն ուներ Արովյանցն իր բարերար Պարբոտի հետ. մի անգամ, կարծեմ 1838 թե 39 թվին էր, Պարբոտն Արովյանից ստացել էր մի նամակ, կարգում էր ու սրտանց ծիծազում: Ինչպես հետո իմացանք, Արովյանցն իր ունեցած զպրոցի մասին տեղեկություն տալով, գանգատվում էր, որ գասազբեր չկան հայերեն, աշակերտները եկեղեցու լեզվով զրած զբքերից ճանձրանում են: Կատակով խնդրում էր պրոֆեսորին, որ Դորպատից փոստով մի փութ Knallerbsen (տրաքացնելու հունդ) ուղարկի, որպեսզի նրանցով գոնե աշակերտներին դվարթ տրամադրության մեջ պահի:

Ծեր Դումբերգից Արովյանցի նամակադրության մասին լսելով, 1900 թվի ապրիլին այցելեցի Պարբռտի հարսին, Մորից որպու կնկանը և խնդրեցի թույլ տա Պարբռտի թղթերի միջից Արովյանցի գրած նամակները վերցնեմ: Հարգելի տիկինը հայտնեց, որ Պարբռտի կարենոր թղթերը հումբոլդտը տարել է ավել Բեռլին, մնացածներն ինքը ժողովել է մի արկղի մեջ, որ գտնվում է Դորպատից գուրմ՝ իր կուզնա կալվածում, իսկ ինքն այնտեղ կլինի միայն ամառը: Մայիսի սկզբին ես բարեհուսության վկայական ձեռք բերելով Դորպատից շտապ անցա Բեռլին, այլևս անկարող եղա ամառը կուզնա գնալ և Պարբռտի թղթերը քրքրել: Կարենը եմ համարում ծերունի բժշկապետի մասին մի երկու խոսք ասել:

Փելիսոփայական հայացքներով նա պատկանում էր Ֆեիներ, Լոցցե փելիսոփաների ուղղության, ուստի բժիշկ լինելով հանդերձ՝ հավատում էր հոգիների աշխարհին: Վերջին ամիսներին նրան այցելելիս շարունակ տեսնում էի Լոցցեի «Միկրոկոսմուս» գրքի Գ հատորը կարգալիս, ուսումնասիրելիս: Մի օր դարձավ այսպիսի բան ասեց ինձ մահճակալի վրա պառկած միջոցին:

— Սիրելի բարեկամ, Արովյանցի միջոցով սիրել եմ հայ ժողովրդին, այժմ էլ լսում եմ՝ մի գաղան կուսակալի ձեռնարկած գաժան հալածանքների ու հայակեր քաղաքականության մասին, հոգուս խորքում վրագվառում եմ եղած անարդարությունների դեմ, բայց ցավում եմ, որ ձեր նահատակ ժողովրդի անցյալի մասին շատ քիչ բան գիտեմ: Ամիսներ չի անցնիլ, ես հոգնած մարմնու կթողնեմ այստեղ ու կաեղափախվեմ լավագույն աշխարհը: Ահա թե ինչ եմ փափագում իմ կյանքի արևմուտքին: քանի որ աստըծու մատը ձեզ հանդիպեցրել է ինձ և քաղցր մտերմացրել— հնար գտեք, որ հայ ազգի անցյալ վիճակի մասին ողարգ գաղափար ունենամ՝ հետո աչքերս փակեմ: Երբ հոգիների աշխարհում հանդիպեմ Արովյանցին, Նազարյանցին, որոնց հետ կապված են պատանեկությունս քաղցր տարիները, նյութ ունենամ հետները զրուցելու:

Հոր չափ հարգում, սիրում էի պատվական ծերին, չէի կարող նրա փափագն անկատար թողնել, որոնեցի Դորպատի գրադարաններն ու վերջը համալսարանի գրադարանում գտա “Berliner Jahrbücher” ժողովածու. այդ հանդեսի մեջ կար Արևելքի ժողովուրդների կյանքով հետաքրքրվող դոկ. Պատվ Ռուբախի կազմած հայ ազգի համառոտ պատմությունը: Բերի այդ հանդեսը, ան-

կողնի մոտ նստած կարդացի. նա լարված ուշադրությամբ մինչև վերջ լսելուց ետ ասեց.

— Այժմ հասկանալի եղավ ինձ, թե ինչի՞ էր այնպես ոգեգորվում հավերժ սիրելի Աբովյանցը մեր ցուրտ երկրում. ուրեմն այդքան տանջված ժողովրդի զավակ է եղել հանգուցյալն ու իր ուսումնածարավ հայրենիքի լուսավորության սուրբ գործի համար էր այստեղ այնքան տքնում. Ա՛հ, երանի՛ նրա հոգուն....

Բարի ծերունին արդար շունչը փչեց 1900 թ. մարտի 17-ին. Էս էի նրան սպասավորում, մինչև միակ որդու դալը Պ. Բուրգից. Պատվով թաղվեց բժշկապետ Օստո Դումբերգը. Նրա դադարը մինչև գերեզման տանողները պլրոֆեսորներ և անդում գտնվող հայ ուսանողներն էին՝ թվով 15—20 հոգի:

Նրա լուսանկարը կա մոտս, նվեր եմ ստացել նրա Ալեքսանդր որդուց:

Աբովյանց Խաչատուրը Թիֆլիս հասավ 1836 թվին, երբ այնտեղի թեմական առաջնորդն էր Երգորումից գաղթած Կարապետ եպիսկոպոսը. Գերմանական դալրոցում պատրաստված անդրանիկ հայ մանկավարդը գարճայլ նախկին տիրացու Խաչատուրն էր առաջնորդի ու այն ժամանակի Կարբեցի Հովհաննես կաթողիկոսի աշխում—այսինքն մի չնչին արարած, որին կարելի էր արհամարհել, ամեն բոպե ոտի տակ արորել:

Աղջնվասիրտ Խաչատուրը միտք չուներ հոգեսր կոչումից հրաժարվելու, ուխտազանց լինելու, Պ. Բուրգում եղած միջոցին գեռ հայտնի էր գերմանացի Հանին նրա կուսակրոն դառնալու մտադրությունը: Նույն բարձրաստիճան պաշտոնյան պետական գործով Թիֆլիս եկած միջոցին, Հովհաննես Կարբեցուն տեսնելիս, առաջարկում է անհապաղ հարգել քանքարավոր դիակոնուս Աբովյանցի իղձն ու նրան վարդապետ-քարոզիչ ձեռնադրել: Ապաշնորհ կաթողիկոսը խիստ վիրապօրված այդ գիմումից, զայրացած իր մոտ է կանչում տիրացու Խաչատրին ու առանց այլևայլության վրան գոռում թունավոր հեգնանքով.

— Ի՞նչ, հրամանամկ գաս ի վերա իմ, վտարանդեալդ ի հավատու Դու լալ խմբել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսս չէ քո գործ:

Տգետ միծավորը գիտական պաշարով զինված Խաչատրին համարելով լութերական՝ հաստատ վճռել էր նրան չընդունել ոչ եղմիածնի վանքում վարդապետ և ոչ ներսիսյան դպրոցում վարժապետ, չմինի թե ապագա քահանաներին և ուսուցիչներին բողոքական հոգով խմորի:

Խաչատրւը շուտ չլքվեց, մտադրությունը գլուխ բերելու, վարդապետ լինելու համար գնաց էջմիածին, թախանձեց այս ու այն ծանոթ եպիսկոպոսին, որ միջնորդ դաւանալով համոզեն կաթողիկոսին՝ ընդունել իրեն կուսակրոնների շարքում: Բոլոր ջանքն ու թախանձանքն ապարդյուն անցան. էջմիածնի բոլոր հայրերը խեթ նայելով նրան ասում էին.

— Այստեղ վարդապետ լինել դու ոչ տեսանես, բայց եթե կամենում ես էջմիածնում պաշտոն ունենալ, եղի՛ր Սինողում՝ թարգման իրրե լեզվագետ:

Աբովյանցը բացե ի բաց մերժեց իր կոչմանն անհարմար պաշտոնը և գլխակոր ու մասհող գարձավ Թիֆլիս: Ի՞նչ աներ արհամարհված անդրանիկ դորպատականը, գնահատող չկար, աղքատ էր զրպանով, բայց հպարտ էր հոգով, մրրկած, ալեկոծ սըրտով գիշերներն անց էր կացնում Պարրոտի սիրասուն որդեգիրը աղքատի պես վանքի բակում, այն հին խուցի մեջ, ուր 20-ական թվերի սկզբին Պողոս վարդապետն իր առջև չոքած մանչերին դաս էր տալիս, նրանց թվում նույնուես Խաչատրին: Այդ խուցի շենքը քոշկի պես բան էր, աղյուսե հաստ պատերով: Վերջին տարիները վանքի ժամանակն էր ապրում այստեղ ու ժամանակուների համար ցուրտ ջուր պահում հողե կծերում: Ամենավերջն այդ շենքը քանդեց վանքի միաբան Տ. Ֆ. ու նրա տեղը շինեց երկնարկանի մի տուն: այժմ էլ կա:

Աբովյանցի բուռն ցանկությունն էր ուսուցիչներ պատրաստել հայրենիքը խավարի միջից հանելու համար, ասպարեզ չէին տալիս, չէին թողնում գլորցի շեմքը կոխի. խորթ որդի էին համարում նրան այն ժամանակի հոգեռորականները նրա հագած սերտուկի, անբեղ, անմորուք դեմքի համար, իսկ իրենք՝ վարդապետ թե քահանա՝ մազոտ ու բրդոտ էին պահում զեմքն էլ վիզն ու ծոծրակն էլ: Առանց որևէ արժեք տալու նրա բարձր կրթությանն ու երոպական լեզուներ իմանալուն՝ հրում էին իրենցից հեռու, համարելով նրան հերձվածող ու վտանգավոր անդամ եկեղեցու և աղքի համար:

Դորպատից մեծամեծ հույսերով յուրայինների մոտ՝ Թիֆլիս եկած Աբովյանցը տարրուց ավելի մնաց պարապ, օրվա պարենի կարուտ: Քանից պաշտոն էին առաջարկել պետական ծառայության մեջ, Խաչատրւը չէր մոտենում: հոգեռոր կոչումն ընդունելն ամուր էր նրա մտքի մեջ, իսկ ամուսնանալու մասին հայ չէր էլ երազում: Ծեր Դումբերդի ասելով՝ Դորպատում անթիվ գեղեցկու-

հիմներ պատում էին նրա շուրջը, նա միշտ աշխատում էր իրան հեռու պահել նրանց ցանցն ընկնելուց, որ ապագայում չասեն, թե տիրացու Արովյանցն ուխտաղանց դարձավ, 1830 թ. էջմիածնում տված երգումը դրժեց: Բայց վերջը չքավոր վիճակից ազատ վելու, գոյությունը պահելու համար ակամա 1837 թ. փետրվարին պետական պաշտոն ընդունեց Թիֆլիսի գավառական գոլրոցում, հետագայում նույն գոլրոցի հսկողությունն էլ հանձնեցին նրան, դարձավ վերատեսուչ (СМОТРИТЕЛЬ уезд. уччилища): Այս ամենը պատահեց Խաչատրի հետ այն ժամանակ, երբ նա, սրտի ու հոգու անդորրությունը կորցրած, դարձել էր հոգսի ու վշտի գերի:

Այդ դարդուս օրերին Արովյանցը սիոնիանքի ու միիթարության բովեներ գտնում էր Թիֆլիսի գերմանական գաղութում—Փերմեր կոչված քաղաքամասում (այժմյան Պետիանովյան փողոցի վրա): Մոտ 30 տարեկան Խաչատրը այդտեղ գնայ գալով որոշեց բախտը կատել Լոռոցի աղջանունով ուելցի էմիլիա օրիորդի հետ, որպեսզի կարենա պահանջոն պահել—փոքրիկ սեմինար ստեղծել: 1838 թ. սեպտեմբերին պաշտոնապես նշանվեց, մտում եր հոգևոր կոչումից արձակվելը: Այդ առթիվ խնդրագրով դիմեց էջմիածնի սինոդին, որի մեջ ասում էր.

«Թէկ կամէր ինձ ամենայն ջերմեռանդութեամբ ընծայել զանձն իմ անդրէն ի պաշտօն նախկին կոչման իմոյ, բայց բազմակերպ հանգամանք և մանաւանդ զգալով թէ փոփոխութիւն մտաց և վարուց իմոց ոչ կարէին պատասխանել միշտ ծանր և ժուժկալ կենցաղավարութիւն հոգեորական վիճակի, ստիպեցայ մտանել ի ծառայութիւն արքունական, յոր և զտանեմ ահա ամս երկու... Յանկութիւն իմ այն էր, փորձել զանձն իմ և դիտել հավաստի, կարելի՞ է արդեօք յանձն առնուլ զայն և տանել ըստ արքանուոյն, բայց բազմադիմի փորձ հակառակն ցուցին ինձ, վասնորոյ կամք իմ է գոնէ այսու ընթացիւք կենաց հայթայթել ապրուստ կենաց իմոյ... Միթե որք աշխարհականք են, չե՞ն որդի սրբոյ աթոռոյն, միթէ այսու վիճակաւ ոչ կարեմ միշտ ծառայել նմա»:

Սինոդը միայն 1839 թ. ամառը բարեհաճեց տալ արձակաման վկայականը: Արովյանցի պսակը օրիորդ էմիլիայի հետ տեղի ունեցավ նույն թվի սեպտեմբերին՝ Զիգրաշեն կոչվող եկեղեցում, պսակողն էր Սայաթ-Նովայի թոռ տեր Մովսեսը, մի պատվական անձն, որ մեծ գովասանքով էր խոսում Արովյանցի մասին ու մի առ մի պատմում պսակվելու պայմանների մասին»

Խաչեղբայրն էր ռուս-հայ բառարան կազմող Երեսփոխյանց Գարս-  
րիել վարժապետը: Ոմանք խաչեղբայր են համարում Արարա-  
տյանց Առաքել վարժապետին, բայց դա սխալ է:

Հանձն առած պաշտոնները հենց սկզբից չէին գոհացնում  
Արովյանցին: Նրա ցանկությունն էր սեմինարի պես բան ստեղ-  
ծել-հայ տղաներին իր ուղածի պես կրթել, իր ուղղությունն ու  
հոգին ներշնչել: Իր բնակարանը դարձրեց մասնավոր դպրոց,  
ավելի ճիշտ կիսավանսիոն, մանկավարժական հմտությունը այդ-  
տեղ էր գործադրում: «Վերք Հայաստանի»-ի առաջարաննում  
ասում է.

«Էս միջոցում աստված ինձ մի քանի երեխեք հասցըեց, որ  
պետք է կարդացնեի»:

Արովյանց Խաչատուրի պանսիոնի աշակերտներից մի քա-  
նիսին ծեր միջոցին պատահել եմ թիֆլոսում ու խոսեցրել: Նրանց  
մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ներսիսյան դպրոցի եր-  
կարամյա հոգարարձու Աքիմյանց

Գեորգը կամ Եղորը: Ահա թե  
ինչ էր պատմում նա 1909 թվին  
իր վարժապետ Արովյանցի մա-  
սին.

—Ես Արովյանցի մոտ սովո-  
րելու գնացի 1837 թվին, բայց  
այբբենն ու կարդալն սկսել էի  
Մողնու տեր Ղազարի մոտ. Արո-  
վյանցի բնակարանը այժմյան  
Լոմբարդի կողքի շինության մեջ  
էր, հետո փոխվեց, գնաց Բաղար-  
սայա փողոցը բնակվեց, հետո  
Դվորցովի նոմերներից քիչ վերև  
էր թե յեզդ. սկսլուծ-ն, որի  
վերատեսուչն էր և թե իրա բը-  
նակարանը: Իմ ասած շենքերը  
այժմ փոխված են, ինչպես ամեն  
բան աշխարհում: Վարժապետու  
շատ դասեր չուներ Գավառական  
դպրոցում. ագատ ժամերին մեղ  
հետ էր պարապում՝ իրա օթևանում: Աշակերտներս ճաշում էինք  
նրա տանը, կերակուր եփողը, հացի պատրաստություն տեսնողը



ԳԵՐԳ ԱԳԻՄՅԱՆ

Էմիլիա կինն էր: Ինքը Արովյանցը մեղ հետ ճաշի չէր նստում: Նրա մոտ գնացող առաջին աշակերտը ես էի: Դժարը մեկ աշակերտի գալն էր: Նրանից հետո, իրար նայելով, Թիֆլիսի ունեոր, անվանի գերզաստաններն իրենց զավակներին ուղարկում էին Սբովյանցի մոտ՝ Ներսիսյան դպրոց կամ զիմնադիա տալու փոխարեն: Ալամդարյանի հեռանալուց հետո՝ «Վանքի շկոլլ»—այսպես էին անվանում Ներսիսյան դպրոցը—ուսումի կողմից ընկել էր. Հովհաննես Կարբեցու ուզածն էլ հենց այդ էր:

Երկրորդ աշակերտը Շարոյանց Պետրոսն էր: Մի շաբաթ անց եկավ զոկ Կարապետի տղեն՝ Աղամջանյանց Գասպարը. հետո եկավ Խատիսյանց Գաբրիելը, իրար հետեւ ավելացան Դերիշ-շյան Դավիթը, Յուղբաշյանց Արությունը, Խերոդինյանց Գաբրիելը, Բորիսյանց Միքայելը, Քիշմիշյան Ստեփանը, Զուբարով Կոստանդինը, Զարավյան Սոլոմոնը, Ղայթմազյանց Իվան և Նիկողայոս եղբայրները, Խանջալամյանց Խանակը, Շարոյանց Նիկողայոսը, Ռոտիխնյանց Մարկինը, Խերոդինյանց Տատոն, Սունգուկյանց Միքայելը, Սունդուկյանց Գաբրիելը, Զալյոմանը, Մագերը, Բարդը, Ռեյտեր Իվան և Կոնստանդին եղբայրները, Կուշկուշանյանց Իվանը, Նուխվա կողմից կուրտաշշենցի Զաֆար Ղուլին:

Աշակերտներս թվով 20—26 հոգի կլինիկնք: Նրա օթևանը մեզ հազիվ էր տեղավորում. ողջ օրը լինում էինք Արովյանցի տանը, ամառն էլ արձակուրդ չկար. ամեն մի աշակերտ տարենը վճարում էր հարյուր հիսուն ոռութիւ, այդ գումարով՝ բացի չորս լեզու սովորելը, ուսում առնելը, ճաշ էլ էինք ուսում նրա տանը, որ պատճառ լինի հետը խոսելու, օտար լեզուների մեջ բացվելու, վարժվելու: Մեր պանսիոն այցելող գերմանացի Վակները իր գրքի մեջ ասում է, որ մենք կարդում, գրում էինք նույնպես վրացերեն և թուրքերեն: Զէ, այդ սխալ է, մեր մեջ վրացի չկար, մի հատ թուրք էր, նա էլ հայախոս էր:

Արովյանցն այս պանսիոնի աշակերտների համար է գրել իր նշանավոր «Աերք Հայաստանի»-ի առաջարանում. «Միլտոս ուղղում էր պատավի, որ ես երեխանց ձեռն էլ ինչ հայ գերք տալիս էի, չէին հասկանում... Ուղում էի շատ անգամ մազերս պոկեմ, որ օտար լեզուները ալելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր, էն լեզվներում նրանք կարդում էին երեկի մարդկանց գործերը, նրանց արածներն ու ասածները: Նրանք կարդում էին էն բաները, որ մարդի սիրտ կարող է

զրավել. սրտի բաներ ով չի սիրել: Ո՞վ չի ուզիլ լսել թե սերը՝ բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կոփը ինչ զատ են: Բայց մեր լեզվում թե եղախ բաներ ըլեն, թող աչք հանեն: Ել ընչճկ երեխին քո լեզուն սիրել տաս»:

Պանսիոնի աշակերտներս էինք Արովյանցի «սիրելի, աղիզ բարեկամքը»: Նույն առաջարանում կան նմանապես այս տողերը՝ «մեկ օր էլ ամառվա դաստուրի ժամանակին աշակերտներս որ առավոտը թողի, ճաշից հետ ընկա սարեսար, ճարս կտրվեց, գնացի նեմեցի կոլոնիեն... երեք օր չթողին գամ քաղաք... իմ սիրելի աշակերտները... հենց իմացել էին թե Քուոն եմ ընկեր, չունքի ամեն առավոտ, բիգուն գնում էի, լողանում: Ելի իմ սիրելի աշակերտներն էին ընկեր ետևիցս, որ բալքի մի բան էլա իմանան... Որ չտեսան նրանց, հոգիս տեղըհան էլավ: Իմ ու նրանց էն օրվան իրար տեսնելը ով կարա պատմել...»

Բալքի թե գերեզմանումը էս ձեր սերը մտքիցս գնա, այ իմ սիրելի, այ իմ աղիզ բարեկամք. թե չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերանումս, ձեզ, ձեզ սուրբ պետք է համարեմ ինձ համար, ձեր արեին մեռնեմ...»:

—Թեպես 1843 թվից հետո այլևս չտեսա իմ սիրելի վարժապետին, առում էր 80-ամյա Աքիմյանցը, բայց շատ լավ հիշում եմ նրան, պաշտելի հոգուն. կարճահասակ էր ու ամրակազմ, գեմքը շեկավուն, գլխի մաղերը խարսյաշ, վիզը կարճ, շուտ բորբոքվող, ոգեսրվող, բեղ ու միրուքը մաքուր սափրած: Իրբե պետական գոլոցի պաշտոնյա՛ համարդիստ ուներ, այսինքն պսալդուն կոճակներով, երկար վեշերով սև սերտուել:

Դյուրաբորբոք բնույթը իսկույն լույս էր ընկնում մեկի հետ խոսելիս կամ աշակերտների հետ պարապելիս: Անչափ զգայուն, ջղային էր, ամենաթեթև առիթից հուզվում, բռնկվում էր: 1860 թվերին անգամ ծեծն ընդունված էր գոլոցներում, ինչ թե 40-ական թվերին: Վարժապետս էլ, իր իր ժամանակի որդի, համբերությունից զուրս եկած միջոցին երբեմն գիմում էր ծեծք օգնությանը. պաշտում եմ նրան, բայց տեսածս չեմ կարող ծածկել: Դորպատում իմ ժամանակ էլ ծեծը կար, ինչ թե Արովյանցի ժամանակի: Բայց նա այնքան նրբազգաց, բարի սիրտ ուներ, որ քիչ ժամանակից հետ սկսում էր ծեծած աշակերտին փայտայել ու իր արածի համար արտասկելու չափ զգացվել: Ազնիվ մարդը բռնկած ըոպեին իրեն կորցնում էր, չէր կարող իրեն զսպել, ինչ լինում էր ձեռին, վրա էր բերում, խփում աշակերտի մեջքին, գլխին:

Նա ձեւնափայտ ման ածելու սովորույթ չուներ, բայց տանը ծխելու շիբուխ կար, գավաղանի տեղ երբեմն այն էր ծառայում: Զբոսնելու համար, ճաշերից հետ, աշակերտներիս տանում էր Սոլրակի կողմերը, որտեղ այդինքն էին, վերեն էլ անտառով պատաժ էր: Վարժապետա սիրում էր բնության մեջ բացօթյա գաւախոսել, զբույցով բնության երևոյթները բացատրել: Երբեմն էլ տանում էր այժմյան Միքայելյան փողոցի ուղղությամբ, որն այն ժամանակ զուտ գերմանական գաղութ էր՝ այդիներով շըրջապատած, փողոցի կողմը փշե ցանկապատ: Քուան ձախ ափն անցնելու համար գնում էինք Մետեխի մոտի կամքջով, ուրիշ կամուրջ չկար, ոչ վերև, ոչ ներքև: Գերմանական գաղութում ամենքը վարժապետիս ճանաչում էին. իր կողմն էլ այնտեղից էր ընտրել:

Արովյանցն իրեն մանկավարժ՝ խիստ էր, չէր կարում համբերել, տանել երբ մեկն իր դասավորության միջոցին անուշադիր էր. ով հանդիսա նստելու, լսելու փոխարեն ստահակություն էր անում, թունդ պատժվում էր: Մի անգամ ևս շարունակ դեռ ու գեն էի նայում, չէր ուղարկ ուշքս վրես պահեմ. ինձ սիրող վարժապետը մոտեցավ, բոնեց զլիխի մազերից ու խփեց կողքիս պատին: Դրա հետեւանքն այն եղավ, որ սկսեց քթից արյուն հոսել. ևս իսկի ցավ էլ չդգացի, բայց այդ բանը բարեսիրա Արովյանցին խոր կակիծ պատճառեց: Ծույլերին, դաս չսովորողներին չոքացնում էր: Ամենքս խոր հարգանքով էինք վերաբերվում գեղպի նա՝ դիմելիս կանչում էինք՝ պարսն Արովյանց:

Մեր վարժապետը առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական տոներին—դիտել, ուսումնասիրել երկույթները, բաներ քաղել դրանցից: Թիֆլիսում այն ժամանակ ոչ թատրոն կար, ոչ օպերա և ոչ անգամ կրկես: Դրանց փոխարեն կային ջիրիդ, մուշտակուիլ, կոխ՝ ըմբշամարտ: Բայց նա այդ հանդիսավայրերը լոկ զվարճանալու համար չէր գնում, այլ ինչպես ասի, ուսումնասիրելու համար, երկար կանգնած ականջ էր գնում, թե ժողովուրդը—մարդ թե կնիկ ի՞նչպես են խոսում, ընչեց են հաճույք զգում կամ ի՞նչպես են պահում իրենց: Այդ անում էր նա որոշ նույտակով. մենք, նրա հետ եղող աշակերտներս, այդ չէինք իմանում, բայց հետո՝ վերջն իմացանք, եղք սկսեց մասսաս մեղ մոտ կարգալ «Աղասու պատմությունը»:

Երբ թիֆլիսի հայոց ու վրաց եկեղեցիների և մոտակա ուխտատեղերի բաները տեսել, դիտել էր, կամեցավ Բոլնիսի և Գևորգի

Հոչակավոր տոնախմբությունն էլ տեսնել: Այն ժամանակ Հավաքարը քաղաքամասի ժողովուրդը ձիռվ, սայլով, փուրգոնով գնում էր Բոլնիս ուստի Աշունքն էր, գինու և մրգեղենի առատ ժամանակը. վարժապետը փուրդո՞ն վարձել տվեց, ուխտատեղին թիֆլիսից 50—60 վերստ հեռու էր: 1841 թվի աշունքին պահապոնի աշակերտներից 10 հոգի ճամբորդի պես հազնված գնացինք վարժապետի հետ՝ մեծ մասս ոտով, զըռւյց անելով՝ դեպի Սոմիկեթ, Խրամի կողմբ: Ֆուրգոնի մեջ նստած էին տիկին Էմիլիան՝ Վարդանիկ տղեն գրկին և մեր ընկեր Յուղբաշյանցի մայրն ու քույրը: Աբովյանցը շարունակ հարցեր էր տալիս այս ու այն պատահող գեղացի ծերին, թե ինչ անցքեր են պատահել այդ ձորերում, շենքերում և ծոցատերի մեջ նշանակում էր նշանավոր տեղերի, անձերի անունները: Երբ տեղ հասանք, քեզ անելը թողած՝ խոսեցնում էր ուխտավորներին, տեղեկություններ ժողովում 15—16 տարի առաջ եղած քրդերի արշավանքի մասին, թե քուրդ Օքյուզ աղեն ինչպես է թալանել նեմեցի Կոլոնիին, որի նկարագիրը վարժապետ գեղեցիկ կերպով գրել է «Վերք Հայաստանի»-ի մեջ: Տոնախմբության միջոցին գիշերն էլ բաց երկնքի տակ անցկացրինք առանց քննելու, ամեն կողմ զուտնա, դաիրա, պար ու քեզ էր. Թիֆլիսի զվարձասեր լոթիքը գիփ հաւաքված էին այնտեղ՝ զառով ու կապիտոնով զուգված: Գիշերը ճրագի կարիք չկար: Բոլոր ուխտավորներն իրանց սայլերի մոտ խարույկներ ունեին վառած: Կրակի շուրջը բոլորած ոմանք աշուղների ածելուն ու խաղին էին ականջ գնում, ոմանք էլ ուտել-խմելուց կշտացած՝ ետ նստել հնից, նորից ասում, խոսում էին:

Հետեւյալ առավոտ ֆուրգոնով գնացինք Շուլավեր, ուր հրավիրեց մեզ մեր ընկեր Զարաֆյան Սոլոմոնը. Նրա հայրն այնտեղ լավ այցի ուներ, մեջը սարքին մառան՝ գինու կարասներով: Տեղափորվեցինք նրանց տանը և լավ ժամանակ անցկացրինք՝ երգերով, ճառախոսություններով, մեծերի համար գինին էր տառա, աշակերտներիս համար խաղողի ջականները, որին տեղացիք բանդաղ էին ասում: Վարժապետս լսել էր, որ Հասան խանի օրով երկու շուլավերցի մելիքներ են նահատակվել քրդերի ձեռքով. ուստի զուրս եկավ փողոց, ծերերին խոսեցրեց, ծոցատերի մեջ նշումներ արեց: Այդ մասին երկար գրած կա «Վերք Հայաստանի» գրքի մեջ:

1841 թիվը զարմանակի բեղմնավոր էր վարժապետիս գրչի

համար, գուցե և ամենաբախտավոր տարին նրա կարճատև կյանքում: Կինը մի տղա էր ունեցել, անունը՝ Վարդան, ինքը միքանի աշխատություններ էր պատրաստել և կաղան ուղարկել՝ այնտեղի համալսարանում հիմնվող հայ ամբիոնն ստանալու համար: Դրանցից չգոհանանալով՝ մտածում էր ժողովրդական կյանքից նոր մեծ բան զրել: Մինչև այդ ժամանակ ուսանալոր թե ուրիշ բան միշտ զրել էր գրաբար. այդ ամառվանից սկսեց աշխարհաբար զրել՝ առանց ուշք զարձնելու թեր ու զեմ խոսողներին: Գրած առակները, առասպելները, ասացվածքները բերում էր մեզ մոտ կարդում, թելադրում: Խալիսի բերանից լսած բաները ժողովելով, ուսանավոր գարձնելով սազացնում էր աշակերտաներիս համար: Ուսւերենից, գերմաներենից, Փրանսերենից ինչ էլ թարգմանում էր, լեզուն այնպես էր փոխում, որ մեզ խալիսի սրտով լինի, այսինքն հայերեն լինի ոչ միայն բառերով, այլև հոգով, իմաստով: Վերջն այդ բաները առանձին գրքով տպել առ անունը զրեց «Պարապ վախտի խաղալիք», որ ժողովուրդն էլ աշխարհաբար բան կարդա: Նրա առաջաբանի վերջին խոսքերը զեռ միտս են, ասեմ, լսեք. «Թե գիտուն, խելոք մարդիկ ինձ պախարակին, զու էլ ա ինձ պահիր, սիրելի ազգ (իմ վարժապետը ազգ ասելով հասարակ ժողովուրդն էր հասկանում և ոչ աղնվական կամ հոգեռորական), չունքի իմ ուզածն էլ էն ա, որքեզ ծառայեմ, քեզ իմ կյանքը տամ, քանի շունչը բերանում ա»:

Գրքի ճակտին խրատ կար, սկսվում էր այս խոսքերով.

«Գնա, իմ խեղճ գիրք, գնա՝ մարդամեջ,  
Գլուխդ քաշ զցիր, մի նեղանար հեչ,  
Ականջդ փակիր, սիրտդ լեն բանիր.  
Ինչ ասեն, խոսեն, տար ու համբերիր:

Հալբաթ մի օր էլ արև զուրս կդա,  
Են վախտ կիմանան, թե ուզածդ ի՞նչ ա,  
Ով լայադ չանի, քեզ վերցնի, կարդա,  
Թհող իր շնորհքը պահի, մոտ չըգտա»:

1841 օրնյալ թվի ամառը հուլիս ամսին մեզ համար միպիս էլ էր սարքել՝ «Որդիական սեր» վերնագրով: Նախարանում ազնիվ հոգին այսպիսի սրտառուչ խոսքեր էր շարում. «Հույս ունեմ, որ ամեն մարդ էնդուր համար ալելի հավեսով կարդա, չունքի մեկ դժար բան չկա միջումը, բոլորն էլ աշխար-

հաբար ա: Մախսուս էս լեզվով գրեցի, որ գեղցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ: Միթե գեղացին մարդ չի, չի ուզիլ որ մեկ նոր բան էլ նա լսի կամ կարդա»:

Սրովյանցը պահսկոնի աշակերտներիս անվանում էր որդեգիր, միայն թե մենք ներսիսյան դպրոցի որդեգիրներից տարբերվում էինք նրանով, որ նրանք գիշերօթիկ էին, մենք՝ երթեւկ: Բոլոր աշակերտներս նրա Թիֆլիսից հեռանալուց ետև էլ առանձին քաղցրությունով էինք հիշում նրան՝ նրա զարմանալի բարեսրության համար, ամենիս վրա հոր տպավորություն էր թողիլ: Նա ամեն ջանք թափում էր, որ աշակերտներս ուսման մեջ թերի չմնանք, որիէ բարձր տեղ շարունակելու գնանք, մասնավանդ եթե հնար ունինք, գնանք Դորպատ, ուր իրեն լավ ընդունել, պահել էին: Իր սուրբ միջոցներից անգամ չէր խնայում ճանապարհածախս տալ, եթե աշակերտներից մեկը գնում էր Մոսկվա կամ Պ. Բուրգ:

Վարժապետու 1838 թվից սկսած մեզ մոտ կարդում էր Ազատու պատմությունը՝ հատված-հատված: Թե մրգան լրիվ էր այն ժամանակ, չեմ կարող ասել. բայց մենք սիրով լսում, սրտանց ոգեսրվում էինք, որովհետև շատ լավ էր կարդում: Այժմ էլ, վաթուն վեց տարի անցնելուց հետո, կասես նրա ձայնը ականչում է:

1909 թվին ծերունի Աքիմյանցը ապրում էր Բեհրության փողոցում: Ամուրի էր մնացել վերջերը ապրում էր իրա պառավքուջ մոտ՝ Կաթողիկական փողոցի տուպիկի վրա:

—Եթե չեմ սխալվում, ասում էր Աքիմյանցը, 1842 թ. էր, որ գերմանացի Վագները Թիֆլիս եկավ, այցելեց Արովյանցին. հետաքրքրվեց մեր պահսկոնով: Աղա իր ճանապարհորդական տպավորություններն առանձին գրքով լույս ընծայեց, կարգացել եմ գերմաններեն. այժմ չեմ կարող նրա գրածը մի առ մի հիշել, գուշը էլ կարդացած կլինեք: Նա լսեց մեր գերմաններեն կարդալը, խոսելը. զարմանք հայտնեց մեր առաջադիմության վրա: Վարժապետու աշակերտներին գերմաններեն հարցեր էր տալիս, մենք նույն լեզվով ազատ պատասխանում էինք: Վագները հիանում էր, երբ ես Շիլլեր էի կարդում ու իմ բառերով պատմում, իսկ հատիսյանց Գարբիելը՝ Գյոթեի ոտանավորն էր կարդում ու արձակ պատմում: Թիֆլիս եկող նշանավոր գերմանացիք ու Փրանսիացիք եթե թարգմանի կարիք էին ունենում, միակ հարմար անձը Արովյանցն էր: Այս հանգամանքը նախանձով լցնում էր

նրա կոլեգների սիրտը: Վագները նույնպես իրավունք խնդրելով կուսակալից, Արովյանցին վերցրեց հետո, երբ գնում էր Երևանյան նահանգը:

Հետո Թիֆլիս եկավ մի ուրիշ գերմանացի գիտնական ճանապարհորդ՝ բարոն Հաքստհառլեյնը. սա մեծ գովասանքով է խոսում մեր վարժապետի մասին՝ իր զքչի մեջ: Հիացած նրա անձնավորությունով, ասում է՝ կյանքում այնպիսի հանճարեղ, աղնվասիրտ մարդ չեմ տեսել: Արովյանցը շատ կողմերով օգտակար էր եղել նրան: Իրեւ գպրոցի վերատեսուչ՝ ինքնակամ չէր կարող բացակայել, ուստի Արովյանցին իրեւ թարգման հետը վերցնելու համար թույլտվություն խնդրեց կուսակալից և տարավ նրան Երևան, Էջմիածին:

Վարժապետս, ինչպես երկում է գերմանացի բարոնին Քանաքեռ էլ էր տարել, հայրական տունը ցույց տվել: Ահա թե նա ինչպես էր նկարագրում ծնողական տունը մի ոտանավորի մեջ, որ ես անզիր եմ արել. --

Ի տանեաց, ի յորմոց, ի ճեղքաց լուսամբտից,  
Աստ ի ներքըս տեղային, հոսէին, թափէին,  
Ե՛ւ կարկուտ, և՛ ճեղեղ, և՛ անձրե, և՛ սումբ ձիւնից,  
Ե՛ւ մըրբիկ, և՛ հոսան, փոթորիկ սարսըրագին:

Ալեքսանդր Երիցյանն անսարդար է վարդում, երբ մեզագրում է Արովյանցին, թե չիների վրա սիրահարվելով՝ թողեց կուսակըն դառնալու միտքը: Ո՛չ, դա հիմնովին սխալ կարծիք է. այն Արովյանցը, որ Դորպատից վերադարձին, Պետերբուրգով անցնելիս, իրեւ կրապական լեզուներ քաջ իմացող հայ, արժանացել էր կայսրունու հուրասիրությանը, ինչ կարիք ուներ հասարակ չինի: Բոլորին էլ հայտնի է, որ խավարամիտ Հովհաննես Կարբեցին էր գլխավոր պատճառը, որ վարժապետս 1836—37 թվերին վարդապետ չգտառավ: Սակայն այդ բանը ես բարերախտություն եմ համարում, այլապես վանական մթնոլորտում նա անկասկած կխամրեր, անպատուղ կկորչեր, հայ ժողովուրդը չէր ունենա «Աերք Հայաստանի»: Եթե Արովյանցին Թիֆլիսից հեռացրին նրա պաշտոնակից ուսուցիչների նախանձն ու չարակամությունը, արդյոք պորտաբույժ վերաբավորները նրա սիրտն ու հոգին հանգիստ կթողնեին Էջմիածնում: Երա կազմած դասագըրքերի, նոր ողով շարադրած հայերեն ընթերցարանի քննողներն ուվերեր էին՝ մի կոլեժակի ասեսոր Արզանով—մեծավորի

շվաքի առաջ ծունը դնող, որ իր փոտած գլուխը հայագետ էր անվանում, մի Արարատյանց Առաքել վարժապետ: Ի՞նչ ժառանգություն են թողել գրանք հայ գրականության համար, գրեթե ոչինչ, բացի մի քանի գրաքար հայտարարություններից ու թղթերից, որոնք թափված են Կոնսիստորի արխիվում մեների համար: Այդ ողորմելիքը ինչպես վկայում են կուսակալի դիվանում գտնվող գոկումնատները, գպրոցների դիրեկտոր Ռոսկովշենկոյին Արովյանցի ընթերցարանի մասին զեկուցում տալիս՝ ասում են—  
1. լեզուն ուամկալան է ու քերականական որոշակի կանոններ չունի, 2. գրվածքը խակ մտածության պտուղ է, 3. բացի այն, որ լեզուն բազմաթիվ սխաներով լիքն է, ճաշակի մաքրության մասին էլ գաղափար չունի:

Այս անարդար նկատողություններն արվում էին այն ընթերցարանի վերաբերմամբ, որի մեջ մտցված էր «Խաղարկություն մանկաց» վերնագրով պիեսը, որը սկսվում է զիժ մանուկի սրամուրեն հյուալած մոնուպով: Դուք երկար տարիներ ուսուցիչ եք եղել, զիմում էր ինձ ծերը, և հայերեն նոր կազմած ընթերցարաններին՝ ծանոթ կլինեք, ճշմարիտ ասեք —ով է զրանման կլասիկ, աննման զվարճալի և խելացի բան ստեղծել: Գերեզմանին մոտեցած հասակումս էլ, երբ կարդում եմ 60—70 տարի տարի առաջ լրացնոգի վարժապետիս բերանից լած այդ մոնուպը, սիրտս ցնծությունից թնդում է, նորից աշխուժանում եմ, զիժ մանուկի տրամադրություն ունենում: Արովյանցի մի հայերեն աշխատության քննող էլ ֆրանսիացի ակադեմիկ Բրուսան է եղել, որ չի հավանել: Թեկուզ լիներ էքստրաօրդինար ակադեմիկ, 40-ական թվերին ի՞նչ տեղեկություն պետք է ունենար երեանյան բարբառի համ ու հոտից մի ֆրանսիացի, քանի որ հայ վարժապետները և իրենց հայագետ համարող Արարատյանցն ու Արզանյանն այդքան տգետ ու տհաս էին աշխարհաբար խոսելու և գրելու մեջ:

Անդրկովկասյան պետական գպրոցների դիրեկտոր Ռոսկովշենկոն, որ բացի ոսւսերենից ուրիշ լեզու չգիտեր, ապիկարի մեկն էր, բայց իրենից ընդունակ անձին վատարանելու, անվանաբարելու մեջ քաջ էր. կուսակալ Գոլովինին զեկուցում էր ծածկաբար, որ Արովյանցն իրու վերատեսուչ՝ անբավարար հատկությունների տեր է...: Զար նախանձն իրանն արեց և սիրելի վարժապետիս ոտի տակը փորեց, մոռւմ էր նրան թիֆլիսից հեռանալ, ուր այնքան քրտինք էր թափել: Նա մեկնեց Երևան 1843 թ. օդուստոսին, հետը տանելով մեր սերն ու արտասուքը:

«Աղջասունը մարդ» վերնագրով ոտանավորի մեջ վարժապես  
այսպիսի խոսքեր ունի ասած»

Բայց մեռնել ես որ շուտ ուզում չէի,  
Պետք գամ ազգին՝ ախ, ասում էի...  
Թե իմ աշխարհին ջանըս զուրբան տայի,  
Որ հողի տակին՝ ճփ | պետք է փըթի...  
Բայց ինչպես փակեմ աչքըս ու մխ չըքաշեմ,  
Որ հազար մտքեր հողը պետք է տանեմ...  
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,  
Երբ չէի կարում պետք գալ ազգիս...  
Իշխանություն, թե, կամ փառք ուզեցի,  
Պատկի, թագի, թե փափաղեցի,  
Էնդուր համար միայն որ հազար մարդի  
Աչքի արտասուրքը սրբեմ, որ չըցավի...  
Մարդի զրախտն ու կյանքը հենց էն ա,  
Որ խեղճ ժողովրդի ցավը հասկանա....

Սիրելի Արովյանցի խրամն աշակերտներիս միշտ այն էր, որ  
պիտանի լինենք մեր խեղճ ազգին, այսինքն ժողովրդին:  
Մեղանից ամեն մինը յուրօվսանը ձգել է հետեւ այդ խրա-  
տին—վարժապետի ցուցումին։ Օրինակ, մինը ևս փոստի վար-  
չության մեջ ծառայելով՝ մասնակցել եմ նույնպես հասարակա-  
կան, ազգային գործերին։ Ներսիսյան դպրոցի ուսուցիչներն ու  
աշակերտներն ինձ անշուշտ հիշելիս կլինեն։ այնտեղ 30 երկար  
տարիներ հոգաբարձու եմ եղել Թանի՛-քանի՛ պարտաճանաչ, բարե-  
խիղճ դասաստուների պաշտպանել եմ. քանի՛-քանի՛ աղքատ, ընդու-  
նակ պատանիների օգնել եմ՝ թոշակ նշանակել տալով։ Այդ ես չեմ  
արել, այլ Արովյանցի ներշնչած հոգին։ Երանի չէ՛ լինիւ, նա  
մեր օրով ողջ լիներ և ցանկանար ներսիսյան դպրոցում տեսուչ  
լինել. եթե կարգին հայերեն չիմացող Մանդինյանց Սեղրակին  
այնպես պաշտպանում էինք, Արովյանցի պես հայտեաին, ան-  
կասկած, զլմաներիս վրա կապահենք և ոչ թե չոր սրաի պես կլա-  
նեինք, ինչպիս վանելով հուսահատության դուռը հասցըին Հով-  
հաննես և ներսես կաթողիկոսները։

Մեր մեջ, ըստ սովորության, երեսփոխները կողովտում էին  
եկեղեցական ժողովրդական գումարները և ձայն հանող չկար, որով-  
հետեւ գործակալ առաջնորդ զբանից մաս ունեին իրքեւ իշխա-  
նավորներ։ Ժողովրդից աշարութները փորձեցին, ինձ երեսփոխ

ընտրեցին Քամոյանց եկեղեցու համար. ծխական էի, հոժարակամ ընդունեցի այդ պաշտոնը և մի քանի տարում դանձեցի քսան հինգ հազար ռուբլի գումար. ոչ մի իշխանավորի կողեկ չտվի, որ աչքը դնի: Սիրելի վարժապետիս խրատին հետեւլով, բաց արե կարգին ծխական գպրոց՝ ուսուցչական ընտիր խմբով: Մինչև այդ օրը Քամոյանց հարուստ եկեղեցին երբ էր իր բակում գըպրոց ակնել:

Արովյանցը շատ էր սիրում Եղիշե մատենագրին, դրա համար էլ իր նորածին տղի անունը դրեց Վարդան: Մենակ այդ չէր. շատ էր սիրում Եղիշեի ոճի կրկնաբանություններն ու գործ ածում ինքը. ով «Վերք Հայաստանի»-ն ուշի ուշով կարդացել է, նկատած կլինի դա: Մեզ էլ ստիպում էր, որ Եղիշե կարդանք. շատ էջեր բերանացի գիտեմ պատանեկության օրից սերած:

Անթիվ գրածներից, մինչև Երևան տեղափոխվելը, իմ քաղցր և ընտիր վարժապետը ապել էր տվել միայն «Պարագ վախտի խաղալիք»-ը: Ես այդ միջոցին 15 տարեկան էի: Նրա գնալուց ետ մտա գիմնազիա ու 1846 թվին գնացի Դորպատ ուսանելու: Երբ իմ անմոռանալի վարժապետս Երևան էր, ես էլ դեռ Թիֆլ միս, 1844 թվին նրանից ստացա մի ստանավոր այս խորագրով: «Առ պատվական իմ բարեկամ և աշակերտ հոգեսուն շնորհազարդ պատանի եղուր Ակրման»:

Դորպատում նղած ժամանակս Արովյանցն Երևանից այս ու այն հանձնաբարությունը տալով՝ մի քանի նամակ էր գրել ինձ. ես էլ պատասխանել եմ, ցավում եմ, որ նրա գրած նամակները թղթերիս մեջ չկան, կորել են:

1848 թ. Դորպատում նամակ ստացա Թիֆլիսից. մերոնք գրում էին, որ Արովյանցը 1847 թ. վերջերին եղել է Ներսես կաթողիկոսի մոտ, պատմել է իր խղճալի վիճակը, հայտնել է, որ ինքը գավառական գպրոցի համար չի երկար տարիներ տքնել Դորպատում նշանավոր պրոֆեսորների ձեռի տակ, խնզրել է ուսուցիչ ընդունել իրեն Ներսիսյան գպրոցում: Վեհափառը խոստացել է նրան ոչ միայն ուսուցչի, այլև տեսչի պաշտոն տար Վարժապետս միանգամայն տպահով կաթողիկոսի խոստումով, վատահ վերադարձել է Երևան, վճած լինելով իր պաշտոնը (ԸՄՕՏ-րիտել): հանձնել ուն Տուրքիեստանովի, բայց նենգավոր, չար լեզուներն այնպես են վարպետորեն նրա դեմ գործել, որ ազնվասիրտ Արովյանցը դեռ Ներսիսյան գպրոցում պաշտոն չստացած՝ Երևանում անակնակալ զրկվում է ուսուցչի և վերատեսչի պաշտոն-

ներից: Ստացած ռոճիկի քանակն էր 380 ո., ինքը հազիվ 38-39 տարեկան էր, անապահով վիճակում, կնոջ ու 3 մանր երեխաների տեր: Այս կրիտիկական սրատակոսոր միջոցին ովկ կարող էր իսկ կույն և թափել հայրենասեր Արովյանցի խոցված սիրալ, հուսադրել նրան, որ չըքվի տարգի հարվածից: Իմ կարծիքով՝ միմիայն ներսես ե-ի ազգեցիկ մի խոսքը, որ կանչեր ու ասեր: «Որդին, մի հուսահատվիր, դու տիսուչ ես իմ հիմնած գովոցում»: Բայց այդպիսի սրտապնդիչ խոսքի փոխարեն, երբ հայ, անդրանիկ, գերմանական դպրոցում պատրաստված մանկավարժ ներկայանում է ներսես ե-ին Թիֆլիսում ու իրեն նեղ վիճակից աղաւանելու համար հիշեցնում ամիսներ առաջ տված խոստումը, ցամկոտ բնույթով կաթողիկոսի բերանից լավում են այս բառերը.

— «Ի՞նչ ես գլուխ ցավեցնում ստիպելով, խոսք էր, ասացի: Իո ստորագրություն չափի՞ քեղ»:

... Գովկած ներսեսի այս անսարքու ու անտարբեր վերաբերամունքից անհունորեն վշտացած ու հիասթավիված անզուգական վարժապետական մնում է իր հույսերի մոխրի վրա նստած. դրանից հետո այն ժամանակ մեմ գիմեր: Այլևս ինձ հայտնի չէ, թե 1848 թվի սկզբի ամիսներին ինչ սիրտ վշշող հանգամանքներ են պատահել Երևանում նրան, որ ապրիլ ամսում գլուխը մահու է տվել, անհետ, անգուման կորել...»:

1850 թվին հորս մահվան պատճառով Դորիատից եկել էի Թիֆլիս. լսեցի, որ վարժապետիս ամուսինը գտնվում է Թիֆլիսում, միտու ընկավ «Աղասու պատմության» թողած տպագորությունը. բնակարանի տեղն իմանալով գնացի այցելության՝ միիթարելու մտքով: Թեև 7-8 տարի անցել էր, բայց նա ինձ լավ հիշում էր. երբ խոսք դցեցի վարժապետիս թողած ձեռագրերի մասին, ասեց:

— «Ես հայերեն չգիտեմ, նրա բոլոր թղթերը ժողովել եմ շարկի մեջ, ահա այնտեղ են, նայեցիք: Դուք առաջին մարդն եք, որ հետաքրքրվում, հարցնում եք նրա ձեռագրերի մասին»: Արկղի թղթերը քրքրելով՝ զաա «Վերք Հայաստանի» քառածալ հաստ տետր դավթարը—հետո խնդրեցի տիկնոջը, որ թույլ տա արտագրել տամ: Իրավունք ստանալով՝ մարդ վարձեցի, պատճենը վերցրի, բնագիրը վերադարձրի տիկ. Էմիլիային: Բժ. Հայսկեր-դյանց Գ. այդ բանը որ լսեց, ցանկացավ կարդալ: Տվի, կարդաց, շատ հավանեց: Նորից վերապառնում էի Դորիատ ուսումն շա-

նին, որին ճանաչում էի Դորպատից. պատճենը հետո էր, ցույց տվի նրան: Նա երկար թերթեց «Ողբ հայրենասերի» ձեռագիր աշխատությունը, բավական երեսներ կարդաց ու այսպիսի գնահատական տվեց.

— «Սրա ամեն մի բառը բանաստեղծություն է. ժողովրդի հոգուց է խոսում, ապրել է նրա ծոցում, կենդանի կերպով պատկերել է տեսածը, լսածը, զգացածը, երանի՛ լուսահողի նաշատությին»....:

Հենց որ ձեռագիր «Վերք Հայաստանի»-ն հասցրի Դորպատ, ուսանող հայերը հավաքվեցին շուրջս, սկսեցին կարդալ ու հիանալ Աբովյանցի հարուստ լեզվի, ժողովրդական սիրուն դարձվածների, մանավանդ արյուն եռ բերող նրա հայրենասերական ոգու վրա: Վարժապետիս գրվածքի գործած խոր ազդեցության տակ ամենախորթացած ուսախոս հայ ուսանողն էլ ձգում էր հայերեն խոսել սովորել—հայանալ ու օրհնել նրա անունը:

1853 թ. ուսումն ավարտած վերադարձա թիֆլիս: Լավ պաշտոն ստացա փոստային վարչության մեջ, կրոպական լեզուներ իմանալն ահազին նշանակություն ուներ այն ժամանակները, սակայն չէի կարողանում խոր վիշտալ սրտես հանել, տանջվում էի՞ մտածելով, թե մինչև երբ ժողով անտիպ մնա իմ մոտ գտնվող պատճենը «Վերք Հայաստանի»-ի, և նրա հետ անծանոթ մնա սիրելի—կորած վարժապետիս անունը: Ինքս երևանցի չէլ բայց Աբովյանցի ազդեցության տակ խոսում էի ու գրում արարատյան բարբառով, ասածիս ապացույց կարող է ծառայել զերմաներենից իմ թարգմանած «Նալա և Դամայանդի» գրքույկի լեզուն: Ծանոթաների շրջանում խոսում էի Աբովյանցի աշխատությունը տպագրուելու մասին, ոչ ոք հավանություն չէր տալիս, շատերը խրախուսելու փոխարեն գետ ծաղրում էին ինձ ու հուսահատեցնում: Տարիներ անցնելուց հետո վերջապես գտնվեց թիֆլիսում մի ազնիվ հոգի, Աբովյանցի գրիչը, տաղանդը իմ չափ գնահատող—այդ պատվական հայը Փոնդոյանց Հովսեփն էր, որ մի ժամանակ տեսուչ էր Ներսիսյան գլորցում: Դա ոչ միայն հավանեց մտադրությունս, այլև տաք սրտով ընկերացավ հրատարակության գործին: Իմ չափ նա էլ փող վեր գրեց, ներկայացանք Աբովյանցի ամուսնուն, հայանեցինք մեր միտքը, հրատարակելու իրավունք խնդրեցինք: Նա ուրախությամբ հոժարվեց, մենք նրան հոնարար տվինք, ճիշտ չեմ հիշում 200 թե 250 ոռութիւն արծաթ: «Վերք Հայաստանի»-ն տպել տվինք 1858 թվին՝ հազար օրինակ կամ քիչ

ավելի. տպագրությունն իմ մոտի պատճենի համեմատ էր, սրբագրության նեղությունը քաշեց պարոն Փոնդոյանցը: Գիրքը լույս տեսավ հեղինակի անհայտանալուց ուղիղ 10 տարի հետո: Սկզբից մենք շատ օրինակներ բաժանեցինք ձրի, որ կարդան, ծանոթանան, թե ինչ տաղանդի տեր մարդ է կորել անհետ: Մենք մեր նպատակին լիովին հասանք. կարդացողը մնում էր հիացած, բերանը բաց: Ամեն տեղիրից խնդրում էին, որ Աղասու գիրքն ուղարկենք, այդպիս էին անվանում «Վերք Հայաստան» գիրքը: Շատ տեղերից եթե ուղարկած օրինակների համար փող չէինք ստանում, չէինք հոգում: Մեր հրատարակելու նպատակը փող վաստակելը չէր, ուստի մնացած օրինակները հանձնեցինք Շահինյանց անունով գրավաճառին, որ ցանկացողներին տա 50-ական կոպեկով:

Այսպիս վերջացրեց ծերունի Աքիմյանց Գեորգն իր զորոյցը: Վերջին անգամ նրան տեսա 1911 թվին հիվանդության մահացում պառկած: 82-ամյա ծերունին ասում էր ցնծագեմ.

— Երագիրներից տեղեկանում եմ, որ ազգը ցանկանում է գերեզմանն անհայտ վարժապետիս արձան կանգնացնել: Այս... ուր էր թե ամենաբարի տատվածը կյանքիս թելն այնքան երկարացներ, որ այդ երջանիկ օրն էլ տեսնեի ու հետո աչքերու փակեի...:

Աքիմյանցից հետո Դորովատ ուսանելու գնացողն էր Խատիսյանց Գալրիկելը, Արովյանցի հիշատակին իր երախտագիտությունով պատկող աշակերտը, որ մի ժամանակ Թիֆլիսում պահասիոն էր պահում: Դորովատում ես իմացա, որ սա եղել է քիմիկոս կարլ Շմիդտի սիրելի աշակերտը և շատ մոտ նրա ընտանիքին: 1899 թվին պրոֆեսորի պառավ այրուն այցելած ժամանակ, նրանց ալբոմի մեջ տեսա Խատիսյանցի ձեռագիրը, հայերեն գրած նրա անուն աղքանունը: Նա իբրև զեղեցիկ հայ երիտասարդ՝ շատ սիրված է եղել գերման ընտանիքների մեջ, ինչպես երեաց: Նա Դորովատում սիրած է եղել Ելենա անունով մի օրիորդի ու նրան ընտրել իբրև հարսնացու: Անհայտ պատճառով Գալրիկելը թողել է հարսնացուին ու դարձել կովկաս: Պրոֆեսորի կինն ինձ հարցեր տալով՝ հետաքրքրվում էր Խատիսյանցի վիճակով: Երբ լսեց, որ նա ծերացել է ու մնացել ամուրի, զարմանքով ասեց.

— «Միթե այն կարմրաթշիկ, գեղեցիկ երիտասարդին ձեր աշխարքում մի ուրիշ օրիորդ չսիրեց, որ ամուսնանար»: Հետո ավելացրեց: — «Այսր նրա հարսնացուն էլ այստեղ պառավեց առանց

ուրիշ մեկի սիրելու, պսակվելու: Նա շատ կմխիթարվի, եթե այդ լուրն իմանա»:

Գաբրիելը Թիֆլիսում վաղ մեռավ, Դորպատից վերադարձալուց հետո նրան չտեսա, որ խոսեցնեմ: Նա Արովյանցի ականավոր ու նրա ընտանիքի համար մեծ սրտացավություն ցույց տվող աշակերտն էր:

Արովյանցի միակ տղան՝ Վարդանը, ծնված է 1840 թ., բարեսիրու Խատիսյանցի հոգածության շնորհիվ գնաց Դորպատ ուսանելու: Աքիմյանցի ասելով, Խատիսյանցն իրենից և մյուս ընկերներից փող ժողովելով՝ միշտ կանոնավոր ամսավճար էր ուղարկում Դորպատ, որ վարժապետի որդին առանց կարիքի ուսումը համալսարանում շարունակի ու վերջացնի:

Երբորդ աշակերտը, որին հաճախ պատահում էի, Դերվիշյանց ծերունի Դավիթն էր, որ երկար ժամանակ թարգմանի պաշտոն ուներ Թիֆլիսում՝ ֆրանսիական հյուսվածութի մոտ: Սա ֆրանսունի կին ուներ, առանձին հարգանքով ու սիրով էր հիշում իր ուսուցիչ Արովյանցին ու նրան անվանում իր բարերար և պաշտելի մարդ: Նա էլ վկայում էր, որ վարժապետին նիկոլայ Լի կինը Պ. Բուրգում հյուրասիրել է նախաճաշիկով ու հետը զրույց արել:

— Մի անգամ, — պատմում է Դերվիշյանցը, — ես դասը թողել փախել էի տուն, մյուս առավոտ դասի եկա թե չէ, վարժապետս բանեց, վեր զցեց սենյակի հատակի վրա ու իր ձեռքով ինձ մի լավ սովորի տվեց, փափուկ տեղերս տաքացրեց: Ապրի նրա ձեռը, եթե նրա խստությունը չլիներ, ես շատ գիմն էի, խելքի չէի գա, լավ չէի սովորի, որ վերջը Մոսկվա գնայի և ուսումն շարունակեի: Եթե պետք է գնայի Լազարյան ճեմարան, փող չունեի, ճամբածախս նա տվեց իր ծոցից:

Դերվիշյանցն ընտանեկան կողմից դժբախտ էր, վերջերը շատ չքալոր էր ապրում, բարեսիրու Աքիմյանցն էր օգնում հին ընկերին: Եթե նրա լուսանկարը վերցնելու համար Բարայանց Գրիմ մոտ էի տարել, նա իմանալով Դերվիշյանցի ով լինելը, ոչ միայն ձրի նկարեց, այլև ամսական որոշ թոշակ էր տալիս մինչև մահը:

Սունդուկյանց Գաբրիելը, սիրելի հայ զբամատուրգը, որ ծերության օրերին սովորություն ուներ Միքայելյան փողոցով, ուսով գեպի Մուշտացիդ՝ զբոսնելու գնալ հաճախ էր հանդիպում ինձ:

— Խաչատուր Արովյանցը, — պատմում էր նա, — եղել է իմ

ուսուցիչը: Նա է ինձ ոռուսաց լեզվից պատրաստել: Նա չկհներ, ինձ գիմնազիայում չէին ընդունի: Նրա մոտ պատրաստված աշակերտները Մոսկվայում, Պ. Բուրգում էլ անվանի էին, ինչ թե Թիֆլիսում: Շատ լավ մարդ էր, շատ էլ աշխատանքեր: Նրա մասնավոր գպրոցը կես պահսփոնի պես բան էր, բաղկացած էր մի մեծ սենյակից ու բոլորովին կից էր ունդնի ուչիլիշի շենքին, որտեղ նա սմուրիտել էր, գտնվում էր Ալզանվի խանութից քիչ վերև, ուր Լոտի կոնդիտերի խանութն է:

Եղբայր՝ Միքայելը նույնպես կարգում էր Արովյանցի մոտ, բայց շատ հարգաքար, անուշակալաւ տղա էր, մի օր վարժապետը մի քանի անգամ նկատողություն արեց, որ ուշքը վրեն պահի, եղբայր ականջ չդըմց: Արովյանցը տաք բնույթ ուներ, բարկացավ, բոնեց նրա ականջից, այնպես ամուր քաշեց, որ բլթակն արյունաթաթախ եղավ: Վարժապետը մեղավոր չէր, Թիֆլիսի տղեքը ցեղ էին. խնդրեմ, գեթազվա, թախանձեց ծերունի գրամատուրգը, ոչ ովիշ չասես, թէ էդ բանը Առնեղուկյանցի բերանից է դուրս եկել Արովյանցի մասին:

Դորդանյանց Հովհաննեսը, Արովյանցի երկանի աշակերտաներից, ստացել էր վարժապետից երգերի տեսք, որ նրանից արտագրի Զանգի գետին վերաբերող երգը: Մինչև 1896 թ. մնացած էր նրա մոտ, էլ չիմացա՝ ում ձեռն ընկապ: Տեսրի մեջ կար 19 ոտանավոր՝ գրված Խաչ. Արովյանցի սեփական ձեռքով, բոլորը գրեթե գրաբար: 11-րդ երգի վերնագիրն էր՝ «Առ հանդէս ուխտի ի լեռան Մթածմինդա ի 1840 ամի» (17 տուն):

18-րդ երգի վերնագիրը. «Առ պատվական իմ բարեկամ և աշակերտ հոգեսուն շնորհազարդ պատանին եղոր Ակիմյան, 1844 թ. 28 ապր.»:

19-րդ երգի վերնագիրը. «Առջին պատկերի բազմերախաւ իմ բարերարի Ֆրիդրիխս Պարբուխ, որ վախճանեցաւ ի 1841 ամի ի Դորպլատ» (8 տուն):

Արովյանցի պահանջոնի մյուս աշակերտներից Թիֆլիսում կենացնի տեսել եմ Խանդղալամյանց Իսայուն, Արասթումանում՝ Յուղը բաշյանց Հարությունին, որ շատ սրախոս, բարեհոգի անձն էր, վերջն էլ բոլոր կարողությունը կտակեց բարեգործական նպատակով:

1913 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հանդիպեցի Արովյանցի աշակերտներից մի ծերունու՝ ծնված 1829 թ. գեկտեմբերին: Դա զինվորական բժիշկ Իվան Կուկովանյանցն էր, որի տունը գտնվում է

վրաց սեմինարի շենքի դիմաց: Այդ հասակում դեռ ժիր էր, լավ շրջում, լսում, խսում էր, միայն աչքերն աղոտ էին տեսնում: Նա պատմում էր ինձ հետեւյալը.

— Այբբենը սովորել եմ Զիգրաշենի պառավ կույսի մոտ, երեխեքս գետնին ծալսպատիկ նստած էինք կարդալը սերտում, գրել սովորելը դեռ աղաթ չէր: Կարդալ սովորելու վարձը կույսի համար շարթենը տանում էինք մի արասի փող: Առժամանակ հետո նրան թողի, գնացի նորաշենի տիրացուի մոտ կարդալու: 10 տարեկան կլինեի, երբ հայրս ինձ տարավ Խաչատուր Արովյանցի մոտ: Որքան հիշում եմ, նա կտր երեսով սիրուն, շեկավան օքամին էր, բակենբարդ ուներ, բեխեր չէր պահում, ուրախասիրտ, լայնալանջ, միջին հասակից ցած, շարժուն մարդ էր, ֆաս տալիս սովորություն ուներ ձեռները շալվարի գրպաններում դներ, և շուտ-շուտ ման գալ, հագնում էր երկար սև սերտուկ, սև ժիլետ: Երկու անգամ եկել է մեր տուն: Սովորություն ուներ աշակերտների ծնողներին տեսության գնալու, որ իմանա, թե տղերանց ի՞նչպես են պահում. քաղցրեղեն շատ էր սիրում, մեր տուն եկած միջոցին մայրս մուրաբայով հյուրախրում, պատվում էր: Մի երկու անգամ իմ ձեռքով ուզարկել է, որ անուշ անի իրա տանը: Վարժապետին այդ տեսակ ընծաներ տանել ընդունված էր քաղաքում այն ժամանակ: Ես պատկանում էի ունեոր աշակերտների թվին, դրա պատճառով ուեղդնի ուչիլիշչա գնալու փոխարեն դաս էի առնում Արովյանցից՝ ջոկ, իրա տանը: Աշակերտներս նրա մոտ, մեծ թե փոքր, կլինեինք 20—25 հոդի՝ հայեր, նեմեցներ, թուրք: Առավուը գնում էինք նրա ընակարանը, տեսնում էինք ամեն բան վերքաղած: Նեմկա կնիկը շատ անարար օքմին էր, կերակուրն էլ նա էր եփում, պատրաստում բոլորին համար: Կարդում, գրում, խոսում էինք զանազան լեզուներով մինչև ճաշ: Օգնական վարժապետ էլ ուներ, նեմեց էր ու երկար կոթով չիրուխ քաշող: Արովյանցը ճաշից ետն էլ պարապում էր, սովորեցնում ու ապա արձակում տները գնալու:

Սովորություն ուներ իրիկնապահներին աշակերտներին տանում էր զբունելու: Մեր գնալու մոտիկ տեղն էր վանքի դիմացի կղզին, որ կանաչապատ էր ու ծածկված ուսուի և այլ ծառերի անտառով: Աշակերտներս գնում էինք կարգով, բայց ոչ կռնաբռնուկ արած: Քուան աջ կողմի բարակ ճյուղի վրա կար փայտե ժամանակավոր կամուրջ, զրա վրով անցնում, գնում էինք կղզին, վարժապետը նստում էր առանձին, մենք վազվզում էինք. նա մեր

խաղին չէր մասնակցում, իրեն ծանը էր պահում: Հետը միշտ ըերբում էր տան ծառային: Կղզին քաղքցոց համար ժամանակ անց-կացնելու տեղ էր. ունեոր ընտանիքները սամավարով գալիս էին դետի կանաչ ափերին նստառում, թեյ խմում:

Աղքատ մասը կամ զարիք կնանիք էլ դուրս էին գալիս այդ կղզու վրա ոչ թեյի կամ քիֆի, այլ լվացք անելու, կարպետ, մթել մաքրելու:

Աբովյանցը ձեռնափայտ էր բանացնում, մեր հետ զբոսնելու գնալիս հովանոց չէր ունենում: Սոլուակի կողմերն այդի ու անտառ էր, զբոսնելու չէինք գնում շատ անգամ, որովհետեւ երկյուղալի եր:

Աշակերտներս համազգեստ չունեինք, ինչ ուզում էինք՝ հագնում էինք, հետո վերեկց ըլուզի պես բան. ունեորների տղերքն արիալուղ չէին հագնում, գոնե ևս չեմ հիշում, որ հագած լինեմ, մեր աշակերտների ոտնամանները՝ ցեխի պատճառով՝ ճակավոր էին:

Ամառ ժամանակ էլ կարգալը շարունակում էինք: 1839—40 թվերին թիֆլիսեցիք սովորույթ չունեին հեռու աեղ գաչակ գնալու, կոճոռն ամառանոց չէր. ճանապարհն էլ չէր շինած, Վորոնցովի օրով սովորություն ընկալ կոճոռ, Բորեում գնալը: Քաղաքցոց համար հոլ գաչան իրենց տների տափակ կտուրներն էին, այնտեղ թեթև վրան էին խփում, որ անձրեկց, արեկց աղատ մնան. ողջ ամառը կտրներին էին ուտում, խաղում, խմում, քնում: Կտուր էին բարձրանում պատի մեջ շինած սանդուխքով: Այդի ունեցողները դնում էին կրծանիս ու Օրթաճալա. այդիներն այն ժամանակ շատ ազից ու թանկագին բան էին, աղքատի ուժը չէր պատիլ այդի ունենա, իսկ հարուստները նրանց մեջ տներ էին շինում, ամառ, աշունք այնտեղ ապրում: Այն ժամանակ քաղքցոց մեջ սամավար բանացները կտր, միայն թե չայ խմում էին միայն առավոտները, իրեկունները գեռ աղաթ չէր:

Մեր տան մոտի Թամամշեկ քարվանսարեն գեռ չկար, նրա տեղը պարապ էր, փայտի սայլեր էին կանգնում, մի կողմից խե էր, առու էր գալիս Սոլուակի կողմից, խեը (ձորը) շարունակվում էր մինչև Վանքի թաղը: Զբի առուն անց էինք կենում տախտակի կամուրջով:

Վերան քաղաքից այնքան կտրված էր, որ շատերի համար ծառայում էր իրբեկ ամառանոց: 1844—45 թվերին գիմնազիայում եղած ժամանակ ծնողներս ինձ ամառը տալիս էին Վերայում մի ռուսի մոտ ապրելու:

Մեր քաղքցիք շատ սիրում էին օբաները, քեզ անելով ուշախ ժամանակ անցկացնելը։ Մեր վարժապետն էլ շատ էր սիրում օբաներին ժողովրդի մեջ ման գալը, մտիկ անելը, թե ինչ են խոսում, ինչ բաներ են երգում կամ ինչպես են ժամանակ անցկացնում։ Երբ մեր վարժապետը 1843 թ. ամառվա վերջը Թիֆլիսից հեռանում էր, մենք նրա հետնից լաց էինք լինում։

Այսպես վերջացրեց ծերունի բժ. Կուկուջանյանցն իր զրույցը։ Վերջին զրույցը պատկանում է Երևանի գավառական դըպերոցի — Արովյանցի հսկողության տակ գտնվող դպրոցի աշակերտին, որին 1879 թ. տեսել, ճանաչել եմ, երբ վերակացուի պաշտոն էր վարում Ներսիսյան դպրոցում, հետո ձեռնազրվեց քահանա, կոչվում էր տեր Դեռնդ Աթանասյանց։ Ծերության օրերին ապրում էր որդոց մոտ՝ Թիֆլիսում։ Տ. Դեռնդի միջնորդ կարող եղա այցելել Խաչ։ Արովյանցի հարսին և տեսնել «Վերք Հայատանի»-ի բնագիրը։ Այդ քահանան մահացավ 1920 թ. Թիֆլիսում։ Պարույր կրտսեր որդուց ստացա նրա հուշատերը, որից քաղում եմ Արովյանցին վերաբերած այս տողերը։ «Հորեղբայրո՞ Սահակ աղեն տարավ ինձ Արովյանցի մոտ։ Իմ տեսած Արովյանցը նման չէր այժմ յան տարածված լուսանկարին, շատ փոխված էր։ Լավ հիշում եմ, նա ոչ շատ բարձր էր, ոչ ցած, ոչ գեր էր, ոչ լրար, այլ միջին հասակի, բարեձև կազմվածքով, կլոր գլխով, շագանակագույն մազերով, խիզախ դեմքով, գեղեցիկ մարդ էր՝ 40 տարեական»։

Երևանցիք մինչև Արովյանցի գալը—1843 թ. իրենց տղերանց զրկում էին Թիֆլիսի գիմնազիոնը կամ Լազարյան ճեմարանը. այժմ այդ սովորությունը թողին։—Արովյանցն ինձ՝ նոր աշակերտիս տեսնելով, ձեռով շոյեց շիկահեր զլուխս ու ասեց.

— «Սիրելի Նահապետ, քո զլուխն էլ իմ զլիսի պես մեծ է, ինձնից հազիվ հաղ վարժապետ գուրա եկավ, տեսնենք քեզանից ինչ դուրս կգա»,— այդ ասեց ու ձեռու բռնած տարավ ինձ իր առանձնահանյակը, իսուրջինից իմ զրքերը, տետրակները հանեց, կարգացնել ավեց և նստացրեց պատրաստական դասարանի Բ. քաժանմունքում ու դառնալով աշակերտներին, ասեց.

— Զեզ մի նոր ընկեր եմ բերել, մի լավ ընկեր։— Սկսեց թվել մի առ մի իմ չունեցած արժանիքները։

Կիրակի և տոն օրերին Արովյանցը ժամաշապիկ հագնելով՝ քարոզներ էր խոսում եկեղեցիներում, հորդորում էր ծնողներին, որ իրանց զավակներին անուսում չթողնեն։ Նա բարի, ազնվասիրտ անձն էր, բայց և արժանապատվությունը պահող ու պա-

հանջող: Նա բազարում ուշուշ էր երկում: Մի օր բազար գնացած միջոցին տեսել էր, բոլոր հայ բազարները տեղերից վեր են թռչում, որ կվարտալիին բարեն, խոնարհ գլուխ վեր բերեն, իսկ երբ ինքն է անցնում՝ ուշ չեն դարձնում: Նեղացած կանչում է բոլոր բազարներին, որոնք իր աշակերտների ծնողներն էին ու այսպիսի իրատ կարդում:

— «Պարոններ, ձեզ հավատացնում եմ, որ ես մի առանձին փառասիրություն չունեմ ու չեմ էլ ունեցել անցյալներում, թեւպետ, ճշմարիտ ասած՝ այդ կիրքն ամեն մարդու հատուկ է, ուսյալ լինի, թե անուս, ես աշխատել եմ հեռու մնալ դրանից. որովհետև ասված է՝ փառքը ստվերի է նման, եթե փախչես նրանից՝ հետեւցդ կգա, եթե հետեւց ընկնես՝ քեզանից կփախչի: Այսօր չարսուով մի քանի քայլ ինձանից առաջ գնում էր պոլիցիական կվարտալնին, տեսա թե ինչպես դուք ամենքդ ոտքի կանգնեցիք, գդակ վերցրած՝ գլուխ տվիք: Նրանից քիչ հետո ես անց կացա, ձեզանից հազիվ մի երկուսը բարձրացան, գլուխ տվին, կարծեք, թե այդ էլ ավելորդ էին համարում: Եթե մի բոպե մտածեք, թե նվ է պոլիցիական աստիճանավորը, և նվ եմ ես ձեզ համար, հավատացած եմ, ինքներդ կդատապարտեք ձեզ ձեր անքաղաքավարի և ապերախտ վարմունքի համար: Այս, պոլիցիականը ոչ այլ ինչ է, եթե ոչ նա, որ հսկի փողոցների մաքրությանը, եթե սատկած շուն կամ կատու ընկած լինի — պետք է դեսյատնիկին պատվիրի, որ ժամ առաջ սայլ վարձեն և տանեն քաղաքից դուրս, հոգի տակով անեն: Բայց շատ անգամ տեսած կլինեք, օրերով այդ ապականությունն ընկած է լինում փողոցում, սաստիկ դարշահոտություն տարածելով: Այդ մասին նրանք անփույթ, անհոգ են մնում, այնուամենայնիվ դուք նրանց պատվում, մեծարում եք, իսկ մեզ՝ ձեր զավակների ուսման և առաջադիմության մասին մտածող, հոգացող ուսուցիչներին, դաստիարակներին պատվել-հարգելուց հետու եք փախչում: Ահա հենց այս ուղեցած ձեզ տաել, ուրիշ ոչինչ չունեմ ասելու, ազատ եք, գնացեք»:

Որքան հիշում եմ, Աբովյանցը գավառական գպրոցում ուսւլեզու և թվարանություն էր ավանդում, հետը գասարան էր բերում Քանաքեռի կոու պոպոքներ և չորս գործողությունը փոքր աշակերտների հետ դրանցով անցնում:

Երեանում ամենն էլ Աբովյանցի մասին գովեստով էին խոսում: Նրա շնորհիվ պետական գպրոցը ծաղկում էր: Աշակերտների թիվը 90-95-ի չափ կլիներ:

Ճաշից հետո, ժամի 5-ին, իր մոտ էր ժողովում Բ., Գ. դաւարանների աշակերտներին և հետները գերմաններեն պարապում։ Գնդապետ Վորոբյովը շատ էր գովում Արովյանցին։

— «Հայերը չեն իմանում գնահատել Արովյանցի պես անձին, — ասում էր նա, — պետք է գոհ լինեն աստծուց, որ նրանց այսպիսի պատրաստված ուսուցիչ ու դաստիարակ է պարզել։ Ահա այն ամենը, ինչ որ ծերերից լսել եմ անմահ Խաչառուը Արովյանցի մասին։



## ՑԱՆԿ

Եշ

1. Երկու խոսք	5
2. Ֆրիզրիխ Պարբռոս	9
3. Մորիկ Վագներ	18
4. Ֆրիզրիխ Բոդենշտեն	24
5. Ավգուստ Հաջոտհառլեն	33
6. Կարլ Կոլի	46
7. Մի անհայտ ֆրանսիացի	48
8. Ստեփանոս Նազարյան	50
9. Միքայել Նալբանդյան	56
10. Պերճ Պռոշյան	62
11. Նահապետ Աթանասյան	76
12. Գեորգ Բարխուղարյան	85
13. Սարգիս Բամալյան	89

Պատ. Խմբագիր՝ Ռ. Զարյան

Առողջապահ է տպագրության համար 12/III 1941 թ.

Վճ 561, պատվեր № 35, հրատ. № 96, տիրաժ 3000.

Տպագրական 8 մամ., մեկ մամ. 38,400 նիշ, հեղ. 6,5 մամ.

Գինը 5 և 50 կ., կաղմը 1 ս.

---

Երկան, ԱրմՖԱՆ-ի հրատարակչության տպարան, Լենինի փող., 67

Ա Բ Գ Զ Ո Ւ Մ Ե Ր

	<i>Տառապահ</i>	<i>Տառապահ է</i>	<i>Պիտի լենի</i>
9	16 ն.	Elektromagnet	Elektromagnet
23	7 ն.	Moritz	Moritz
32	1 ն.	taq	Tag
»	2 ն.	„Tausent	„Tausend
46	2 ն.	Während der Jahre	während der Jahre
»	3 ն.	Wonderungen	Wanderungen
500	»	„Briderchen“-ին	„Brüderchen“-ին
503	»	Jahrbodier	Jahrbücher

[604]

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



220031497

A II  
31497